

20. 651

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱԶԳ»Ի ԹԻՒ 5

ՄԵՐ ԲՈՂՈՒՔՆԵՐՆ
ՈՒ
ԴԵՇՆԵԿՑՈՒԹԵԼՆ ԴԻՐՔԸ
ԸՆՈՆՑ ՀԸՆԴԻՊ

Գրեց

ՅԱԲԵԹ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ

ՅԵՒԵԼՈՒԸԾ

ԵՒ

Մ Ի Հ Ր Ը Ն



1911

Տ Պ Ա Ր Ա Ն «ԱԶԳ» Ի

ՊՕՍԹՈՆ

329.14

Կ - 30

15 JAN 2010

29.14
-30

5 FEB 2007

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱԶԳ»-Ի ԹԻՒ 5

Handwritten red scribbles

ՄԵՐ ԲՈՂՈՒՅՆԵՐՆ

ՈՒ

ԴԵՐՆԵԿՑՈՒԹԵԼՆ ԴԻՐՔԸ

ԸՆՈՆՑ ՀԸՆԴԷՊ


Գրեց

ՅԱԲԵԹ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ

ՅԵՒԵԼՈՒԸԾ

ԵՒ

Մ Ի Հ Ր Ը Ն



1911

Տ Գ Ա Ր Ա Ն « Ա Ջ Գ » Ի

ԳՕՍԲՈՆ

09 AUG 2013

20.651



Гос. Библиотека
 ЗОУЗ-Арм.ССР
 А. МАСЕНКО

257-93

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ողբերգական վիպագրութիւն մը պիտի կարծուէր ան՝ եթէ երբէք շատ թարմ իրողութիւններու պատկերացումը չ'ըլլար: Ընթերցողը հոն պայծառօրէն պարզուած պիտի տեսնէ պատկերաշարքը այն տխրասարսուռ ոճիւրներուն, գեհնային մտածումներուն, եղբայրադաւ մատնութիւններուն, ու նեխած բարքերուն, որ կատարուած են մութին մէջ, լաւ եւ՝ Դաշնակցութեան մգլտած, ապականած ներքնաշխարհին մէջ: Տարաբախտ հեղինակը անվեհեր արիութեամբ միանգամ ընդ միշտ վե'ր կ'առնէ այն ոսկեգօծ դիմակը, որու ետեւէն մերկապարանոց կերպով լոյս աշխարհ կուգան մութին մէջ գործուած հրէշութիւններն ու եղբայրասպան ոճրագործութիւններն և անոնց տխրահռչակ հեղինակներն, որոնք տակաւին կը յաւակնին ազգը փերկելու?, յանուն ազգին բարբառելու:

Ուստի, կ'արժէ որ բովանդակ Հայութիւնը կարգայ զայն, ըլլա'յ չեզոք, ըլլա'յ նոյն իսկ Դաշնակցական, որովհետեւ գրողը տարիներով տառապանքի աշխարհին մէջ Հայուն ազատագրութեան համար աշխատած է ինքնանուէր զոհաբերութեամբ մը, Դաշնակցական «չարքերի» մէջ: Սակայն վերջնոյս Հայաքանդ գործելակերպին դէմ բողոքելուն պատճառաւ իր ընկերներով հալածուած՝ ու վերջի վերջոյ վրիժառութեան մը հետեանքով կախաղան բարձրացած է:

Կարգացէ'ք զայն, առողջ դատողութեամբ, որով անկասկած պիտի համոզուիք, թէ ներկայ կատարուած խաղքութիւններն ու անոնց տխուր դերակատարները նո'յն են, նո'յն սև հոգիները:

Յարգելի Խմբագիր,

Ուղարկում եմ Ձեր պատուական թերթին սոյն գրութիւնս, որու մէջ նկարագրուած է Դաշնակցութեան ներքին պայքարին սկզբնապատճառները, Դաշնակցութեան վերջին տարիների անբարոյականութիւնը և Թօփչեանի սպանութեան շարժառիթները:

Արդարութեան և ճշմարտութեան որպէս պաշտպան, յուսով եմ որ կը հրատարակէք զայն Ձեր թերթի սուղ էջերում, որով հնարաւորութիւն տուած կը լինիք Տաճկահայ հասարակութեան լայն խաւերին ծանօթացնելու մեր հակառակութիւնները և այն կազմակերպութեան ղեկավարների իսկական ոգին, որոնք իրենց սև հոգիներով յաւակնութիւն ունեն ղեկավարելու Հայկական կեանքը:

Կարնոյ Բանտից ՅԱՌԵԹ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ



ՄԵՐ ԲՈՂՈՒՅՆԵՐՆ
ՈՒ ԴԵՇՆԵԿՑՈՒԹԵԼՆ ԴԻՐՔԸ
ԵՆՈՐ ՀԵՆԴԻՊ

Թօփչեանի սպանութիւնը յուզեց հայ հասարակութիւնը, և այդ հանգամանքը ազդեց նաև կառավարչական շրջանակին: Իմ դէմ ստեղծուած ամբոխային այդ հակակրանքը արդիւնք է հակառակորդների ոյժի ազդեցութեան. նրանք օգտուելով ժողովուրդի անգիտակցութիւնից թաքուն պահեցին Թօփչեանի սպանութեան իսկական շարժառիթները և իրենց կողմից յերկրեցին՝ գանազան զըրպարտութիւններ, ամբաստանելով կողմնակի մարդկանց և կուսակցութիւններին: Միամիտ ժողովուրդը նրանց զըրպարտութիւնները ընդունեց հալածելու տեղ, և հաւատաց որ Թօփչեանի սպանութիւնը ես կատարել եմ, չար մարդկանց թեւադրութեամբ և խորհուրդներով:

Իմ խիստ աննպաստ պայմանները Հնարաւորութիւն չեն տալիս, որ այժմ ես լայն տեղեկութիւններով-և գրաւոր տօգիւմաններով հրապարակեմ հայ հասարակութեան մեր հակառակութիւնների ամբողջ մանրամասնութիւնները և Թօփչեանի ըսպանութիւնը, սակայն աւելորդ չեմ համարում սոյն

գրութեամբս համառօտ կերպով բացատրել, թէ՛ մեր հակառակութիւնների ծագումը և թէ՛ նրանց հետեանք՝ արիւնազանգ, եղբայրասպան դէպքերը, որոնց յիշատակութիւնը սարսափ կ'ազդէ իւրաքանչիւրի վրայ և ստուեր կ'ածէ Հայ պատմութեան:

Մեր հակառակութիւնները առաջ եկան Դաշնակցութեան ծրագրի և նպատակի դէմ եղած մի շարք զեղծումներից, որոնք բացարձակ ոտքի տակ էին տալիս տաճկահայ դատի իրաւունքները, իրաւունքներ՝ որոնք սրբազործուել են միմիայն տաճկահայ ժողովուրդի արեան գետերից: Մենք հիմնուելով Դաշնակցութեան ծրագրի և կանոնադրութեան պահանջների վրա, բողոքեցինք և կռուվեցինք զեղծարարների դէմ, այսինքն Արև. բիւրօի և զանազան մարդիկների դէմ, որոնք համարձակութիւն ունեցան դաւաճանելու իրենց հսկողութեան յանձնուած մի վեհ դատի իրաւունքները:

Իւրաքանչիւր ոք գիտէ որ Ղ. Յ. Դաշնակցութեան ստեղծուելու պատճառը եղել է միմիայն թշուառ իրականութիւնը, և դրա համար էլ Դաշնակցութիւնը իրեն նպատակ դրեց՝ կռուել միմիայն տաճկաստանի մէջ բարւոքելու համար Տաճկահայաստանի վիճակը:

Դաշնակցութիւնը այդ ուղղութեամբ աշխատեց 15 տարիներ, և յանուն այդ նպատակի նա զոհ տրուեց հարիւրաւոր վառվռուն երիտասարդներ, օրհասական կռիւներում, բանտերում և կախաղանների վրայ. յանուն այդ նպատակի ամբողջ տաճկահայութիւնը մատնուեց հուրի և սրի, ի վերջոյ ժողովուրդը նստաւ մոխիրների վրա: Արիւնոտ տարիները իրարու յաջորդեցին, սակայն տաճկա-

հայ անիծուած իրականութիւնը փոխանակ բարւոքելու տասնապատիկ ևս վատթարացաւ:

Վերջապէս վրա հասաւ 904 թուի Սասնոյ ապստամբութեան անյաջողութիւններն ու սարսափները: Յեղափոխութեան բոյն կոչուող Սասունը քանդուեց, աւերուեց. այլևս այնտեղ չ'կային Անդրանիկը և ո՛չ էլ նրա ընկերները, նրանք ապաստանել էին արտասահմանում, մի գեղեցիկ օր վերադառնալու յուսով և աւերակների մէջ մնացել էր միայն Գէորգ Չավուչը՝ մի քանի ընկերներով: Հեռացող ընկերները խեղճին խոստացեր էին և յուսադրել որ շուտով կը վերադառնան նոր ոյժերով և նոր ընկերներով, սակայն ամիսները և տարիները իրար էին գլորվում, ո՛չ վերադարձող կար և ոչ էլ ուժ ուղարկող, նրա կովկաս ուղարկած օգնութիւն աղաղակող նամակները կովկասի մէջ մնում էին «Չայն բարբառոյ յանապատի» վերջիվերջոյ նա իր նամակներով ակամայ լուսանքներ էր թափում իր մօտից հեռացող ընկերների հասցէին:

Սասնոյ վերջին ապստամբութիւնը գաշնակցական ղեկավարների վերջի յոյսն էր, ապստամբութեան անյաջող ելքը, նրանց մատնեց յուսահատութեան և լքման, սպասուած Եւրոպական միջամտութիւնը ո՛չ միայն չ'իրագործուեց այլ մինչև իսկ ժողովուրդի կրած սարսափները, եւրոպական դիւանագէտների ուշադրութիւնը անգամ չի գրուեցին: Ահա այսպէս, մի կողմից տաճկահայ ժողովուրդի Ֆիզիքական, բարոյական և տնտեսական ոյժերը վերջին ծայր քայքայուեց, միւս կողմից՝ ոռոսական յեղափոխութիւնը Ռուսաստանում, ըս-

տացել էր հսկայական ծաւալ :

Սյրպիսի հանգամանքների ազդեցութեան տակ կովկասի դաշնակցական շէֆերը իրենց գոյութիւնը պահպանելու նպատակով՝ յիմարութիւն ունեցան մէկ ձեռքով բռնել տաճկահայ յեղափոխութիւնը իսկ միւս ձեռքով ռուսական յեղափոխութիւնը :

1905 թուին մի խումբ շէֆերի արամադրութիւնից ստեղծուեց «կովկասեան նախագիծը» : Սյրպարատտիկ «նախագիծ» հեղինակները մի տարի առաջ ամէն կերպ հակառակվում էին Դաշնակցութեան մասնակցութեանը՝ ռուսական յեղափոխութեան մէջ . երբ մի տարի առաջ կովկասում, Սոց. Դեմոկրատներին և այլ կազմակերպութիւնների դեկլարութեամբ հսկայական դործադուլներ տեղի էին ունենում, այդ ժամանակ Դաշնակցութիւնը՝ ո՛չ միայն հանդիսատեսի դերի մէջ էր լինում, այլ մինչև իսկ արգելքներ էր դառնում այս ու այն դաշնակցական անհատների մասնակցութեանը . երբ մի տարի առաջ մեր զինակիր խմբերը Տաճկաստան էին արշաւում, այդ ժամանակ Կ. կոմիտէները ամենախիստ կերպով մեզ պատուիրում էին ռուսական սահմանների վրա ամեն կերպ խուսափել ռուսների հետ ընդհարուելուց, մինչև իսկ նրանց կողմից կոտորվելու էլ լինէինք, (օր. Դումանի խումբը և ուրիշները) . այսպիսի համոզմունքների և արամադրութիւնների տէր զեկավարները, մի գեղեցիկ օր իրենց կովկասեան «նախագիծով» կամեցան աղմկել ռուսական յեղափոխութեան հրապարակը :

Դաշնակցութեան առած այդ նոր քայլը իսկոյն

ևեթ նկատի առնուեցաւ Ռուս Կառավարութեան կողմից : Կառավարութիւնը այնպիսի մի փոթորիկ բարձրացուց «նախագիծ» դէմ, աւելի ճիշդը ասաց կովկասահայութեան գլխին՝ որին նմանը երբէք չէին կարող երազել «նախագիծ» հեղինակները, — այն է Հայ-Թաթարական ընդհարումները : «Նախագիծ» հեղինակները մի երկու ամիս առաջ՝ իրենց թուուցիկներով ժողովուրդի մէջ քարոզում էին եղբայրանալ պարսիկ երի հետ՝ տապալելու Ռուսական բռնակալութիւնը, իսկ պարսիկ խաներն էլ՝ տարածուած թուուցիկները և քարոզերը միաժամանակ հաղորդում էին նահանգապետներին :

Կառավարութիւնը եղբայրակցութեան այդ քարոզներին տեղի տւեց հայ և պարսիկ եղբայրներին իրար կոտորելու, իրար բզկտելու : Նա կարողական շունչով բորբոքեց հրդեհը, երկու ժողովուրդի մէջ, և ինքը յետ քաշուելով՝ ըսկսաւ դիտել կատարուող խժոժութիւնները . կոտորածը, հրդեհը և աւարառութիւնը տւեց մօտաւորապէս երկու տարի : Սյր բոլոր ժամանակամիջոցում Դաշնակցութիւնը կատարեալ ցնծութեան մէջ էր, նա ճիշդ «եղ ու մեղրի մէջ լվլվում էր» ունենալով իւր արամադրութեան տակ նիւթական խոշոր միջոցներ, և իր շարքերում կովկասի համարեա թէ ամբողջ հայերին : Նա ինքնաբերաբար դադրեց այլևս կուսակցութիւն լինելուց, նա այդ միջոցին փայլեց իբրև հայկական կառավարութիւն իրեն յատուկ պէտք եղած բոլոր հաստատութիւններով, ինչպէս են՝ դատարանը, բանտը, ոստիկանութիւնը, բարձր և ստորին «ադմինիստրացիան»,

զօրքը, հարկահանութիւնը և ըն. ասոնց սաղմերը փոքր իշատէ գոյութիւն ունէին Հայ-Թուրքական ընդհարումներէից առաջ էլ: Ահա այդ երկու տարուայ երկար ընդհարումներու ժողովուրդը այլևս չի դիմանալուն համար, ստիպեալ, թէ՛ հայերի դանազան Թօփչեանները և թէ՛ պարսիկների խաները, հարիւրաւոր դիմումներ և խնդրանքներ արին Ռուս Կառավարութեան, որ վերջ տայ կոտորածներին, բայց նա մնաց բոլորովին անփոյթ եղած խնդրանքների հանդէպ: Կառավարութիւնը միջամըտեց միայն այն ժամանակ երբ տեսաւ որ, երկու կողմերն էլ ենթարկեցին տնտեսական, բարոյական ու ֆիզիքական քայքայման. ու միայն այդ ժամանակ նա հրդեհը յանգեցուց այնպէս՝ ինչպէս որ վառել էր:

Ռուսական յեղափոխութիւնը ամբողջ Ռուսաստանում ստեղծել էր անիշխանութիւն. շատերը այն համոզմունքը ունէին որ, այսօր կամ վաղը ասպալուելու է Ռուսական բռնակալութիւնը և փոխարէնը ստեղծուելու է նոր կառավարութիւն և նոր կարգեր: Այդպիսի յոյսերով էին վարակուած նաև Դաշնակցական մի քանի շէֆեր, որոնք մօտալուտ յաղթանակին մասնակցելու տենչով՝ հրապարակ հանեցին իրենց մոռցուած «նախագիծ»ը և սկսան շղմկել զանազան կազմակերպութիւնների առաջ, «թէ մենք էլ մասնակցում ենք ռուսական յեղափոխութեան, ահաւասիկ մեր Կովկասեան նախագիծը որի պահանջները զուտ սօցիալիստական են». նրանք մոռնալով միանգամայն թէ՛ տաճկահայ յեղափոխութիւնը և թէ՛ կովկասահայութեան անըպաստ պայմանները և նրա կրած մօտ անցեալի

դառն դասերը:

Գեղեցիկ սօցիալիզմ! արիւնտուած ու բըզըկտուած մի ժողովրդական դատի անուկով միլիօններ հաւաքուի, ժողովրդական հմայք առաջ գայ, և զանազան կռիւներում մարզուած ու փորձուած անհատներ ունենանք, որոնք ստեղծուել են միմիայն տաճկահայ արեան գետերից, ամենից վերջն էլ այդ բոլոր ուժերը սպառենք և զոհենք ուրիշ երկրի մէջ և ուրիշ նպատակի վրայ, իսկ տաճկահայ դատի գործունէութիւնն էլ դատապարտուի մեռելութեան:

Սօցիալիզմի գաղափարին հետևող դաշնակցական ընկերվարականները իրենց այդ քայլով խախտեցին ճշմարիտ սօցիալիզմի սկզբունքը և յանուն սօցիալիզմի կատարեցին ամենածանր և զազիր ոճիրները, որոնք նախատինք են սօցիալիզմի անունն: 1906 թւում Թիֆլիսում կայացած րայսնական ժողովը վերջնականապէս որոշեց ընդհանուր թափով յառաջ տանիլ «նախագիծ» գործունէութիւնը: Բայօնական ժողովի աւթիւ եղած դժգոհութիւնները, նախ քան բացատրելը կարևոր է խօսիլ ժողովի արած կամայականութիւնների մասին:

1. — Դաշնակցութեան ծրագիրը ասում է հետևեալը, «Դաշնակցութեան նպատակն է ապստամբութեան միջոցաւ ձեռք բերել Տաճկահայաստանի մէջ քաղաքական և տնտեսական ազատութիւն»: Ծրագրում եղած այս խօսքերը բացայայտ բնորոշում են որ Դաշնակցութիւնը բացի Տաճկաստանից ուրիշ կառավարութիւնների և ուրիշ երկիրների

մէջ նպատակ չունի քաղաքական և տնտեսական ունէ կռիւ մղելու :

2. — Դաշնակցութեան երրորդ Ընդհ. ժողովի կանոնադրութեան յօդուածներէց մէկը ասում է որ «Դաշնակցութեան նպատակը չի կրնայ կերպարանափոխել ո՛չ մի դաշնակցական մարմին և ժողով, մինչև իսկ ընդհանրական ժողովը, եթէ նա կանխաւ վեց ամիս առաջ խնդիրը չէ դրած բոլոր դաշնակցական մարմինների առաջ»: Կանոնադրութեան այս յօդուածը սահման է դնում Դաշնակցութեան բարձր մարմինների իրաւունքներին, հետևապէս այդ մարմինները ո՛չ մի բարոյական իրաւունք չունէին «նախագիծ»ը Դաշնակցութեան անուան տակ իրագործելու, քանի որ յառաջիկայ Ընդհ. ժողովը այդ մասին ո՛չ մի խնդիրք չէ դրել դաշնակցական մարմինների առաջ:

3. — Կովկասեան «նախագիծ»ը մի շարք պաճառաբանութիւնից յետոյ, աւելացնում է հետևեալը — «որ Կովկասեան — նախագծի — վերջնական վաւերացումը և հաստատումը կախուած է յառաջիկայ Ընդհ. ժողովի որոշումներից»: Մինչդեռ Ընդհ. ժողովի կողմէ չի վաւերացուած «նախագիծ»ը մի խումբ մարդկանց կամքով, կեանքի մէջ է իրագործուում, ամենաեռանդուն գործունէութեամբ:

Ահա այսպիսի զօրաւոր և իրաւացի փաստերից յետոյ կար նաև քաղաքական աննպաստ հանգամանքներ, որոնք ամէն կերպ, աղետալի պիտի դարձնէին «Կովկասեան նախագիծ»ը Հայ ժողովըրդի գլխին, սակայն մի խումբ մարդիկ յուսա-

հատուելով և լքուելով Տաճկահայ իրականութիւնից, և մասամբ էլ շլացած ռուսական յեղափոխութեան մօտալուտ յաղթանակով, մոռացան ամէն մի իրաւունք և սրբութիւն, ծրագիր ու կանոնադրութիւն, դաւաճանելով Տաճկահայ դատի սրբացան իրաւունքները, Դաշնակցութեան անուան տակ ինքնաբերաբար կռիւ յայտարարեցին Ռուս կառավարութեան դէմ:

Բայօնական ժողովի որոշումներից յետոյ, կովկասի դաշնակցական խմբերի և ժողովների մէջ վխտում էին զանազան լիագործներ և պրօպականտիստներ, որոնցից շատերը մի երկու տարի առաջ ո՛չ միայն դաշնակցական չէին, այլ՝ նրա ծաղրողները և հակառակողները. այդպէսով նոր նպատակի և նոր կռիւ ասպարէզը գրաւվեց բոլորովին նոր մարդկանցով, որոնք Դաշնակցութեան անուան տակ փայլեցին, բայց հակադաշնակցական գործունէութեամբ զբաղուեցին: Ամեն տեղ նրանց պրօպականտն էր «Մեր կաշին մեզի աւելի մօտիկ է». այս խօսքերին գուցէ շատերը իրաւունք տային, բայց նրանք անբարեխղճութիւնն ունեցան մոռնալու, որ ռուսական յեղափոխութեան ասպարիզում ամենայայն միջոցներով, վատնվում էր և շոյլվում, Տաճկահայ դատի բոլոր միջոցները,

«նախագծականների» սկսած նոր բրօքական տան յուզեց դաշնակցական խմբերը. նրանք այլևս չէին լսում դասախօսներից, թշուառ տաճկահայի ցաւերն ու տանջանքները, և շատ անգամներ խմբապետական և ուրիշ ժողովներում բուռն դժգոհութեամբ փոխել են տուել դասախօսի նոր բրօքա-

կանտայի նիւթը, մինչև իսկ եղել են այնպիսի դէպ-
քեր, որ դասախօսն արտաքսել են ժողովից:

Չանազան քաղաքներում «նախագծի» դէմ ար-
տայայտուած բուն դժգոհութիւններն ու անա-
խորժութիւնները հասնում էր Արև. բիւրօյի ա-
կանջին, բայց նա այդ բոլորի վրայ նայում էր ար-
համարհանքով: Պաթումի խմբերի դժգոհութիւն-
ները երբ ստացան սուր կերպարանք, այդ առ-
թիւ Չաւարեանը Թիֆլիսից գնաց Պաթում, որ-
պէսզի իր հեղինակութեամբ զսպէ դժգոհութիւն-
ները. սակայն Չաւարեանը խմբապետական ժողո-
վում, երկար խօսելուց վերջը, երբ իրեն չէ յա-
ջողվում, համոզել խմբերի ներկայացուցիչներին,
այն ժամանակ նա ամենայիմար ձևով սպառնում է
ժողովին հետևեալը «Որ եթէ սրանից վերջը
կը հակառակուիք — նախագծին — այն
դէպքում ձեզ կը ճանաչենք որպէս՝
խուլի գանների, և ուժը բերով կը վեր-
ջացնենք ձեզ»: ժողովը այս սպառնալիքը լսելուց
յետոյ թէև շատերը պատաստուել են հռետորին
տալու իր արժանի դասը, բայց շնորհիւ մի քանի
լուրջ մարդկանց միջամտութեան՝ աղմուկը վեր-
ջանում է խաղաղութեամբ և շատ խօսքերից վերջը
խմբապետներից մէկը ասում է Չաւարեանին հե-
տևեալը «Եթէ դուք կ'աշխատիք բռնի միջոցներով
«նախագիծը» մեզ ընդունել տալու այն դէպքում՝
գիտցէք որ՝ մենք ձեզ կը ճանաչենք որպէս բռնա-
կալ միստրների, և կը կռվենք ձեզ հետ, տէնօր-
ներով»:

Տեսէ՛ք թէ՛ դաշնակցական ղեկավարները, ի-

րենց գաղափարները, ո՞րպիսի միջոցներով են տա-
րածում ժողովուրդի մէջ, մի միջոց որի դիմում
են միայն բռնակալները և որի հետևանքը լինում
է միմիայն ատելութիւն և թշնամութիւն:

Հայ-Թաթարական ընդհարումները Դաշնակցու-
թեան մէջ յառաջ բերեց անբարոյականութիւն, բա-
ռին ամենալայն իմաստով: Նկարագրել այն բոլոր
բռնութիւններն ու սարսափները, որոնք դործա-
դրվել են Հայ ժողովրդի գլխին, դաշնակցական
խմբապետների, լիազօրների զինուորների և պաշ-
տօնական մարմինների կողմից, այդ մեզ շատ հե-
ռու կը տանի, միայն բաւականանանք ասելով, որ
կովկասահայութիւնը յանձին Դաշնակցութեան ան-
ցուց «եհնիչէրիական» մի շրջան:

905 թուից յետոյ, Դաշնակցութիւնը իր անար-
ժան ղեկավարների շնորհիւ, գնալով արատաւոր-
վում էր և խրվում անբարոյականութեան ցեխի
մէջ, Դաշնակցութեան անունով, կատարվում էր
ամէն մի խայտառակութիւն, սկսած գողութիւնից
մինչև ոճրագործութիւնը. Դաշնակցութեան շար-
քերի մէջ, որպէս յեղափոխականներ կը փայլէին
գողերը, սրիկաները, մատնիչները և զանազան
մութ ու աննկարագիր անձնաւորութիւնները: Այս-
պիսի աղտոտ շրջանի մէջ յառաջ եկաւ նաև Դաշ-
նակցութեան պառակտումը:

Ներքին կռիւը իր դատապարտելի ընթացքով
եկաւ պակասը լրացնելու Դաշնակցութեան անբա-
րոյականութեան. դրանից վերջը, ինչպէս կասէ
ժողովրդական առածը «Այլևս շունը տիրոջը չէր
ճանաչում»: Դաշնակցութեան դառն իրականու-

Թեան հանդէպ, Արև. բիւրօ կոչուող սնանկ մարմնի գլխաւոր հոգսը և ջանքը պէտք էր լինէր միմիայն ազատել կազմակերպութիւնը իր ճակատագրական անկումից. բայց նա այդ չի մտածեց, և չէր էլ կարող մտածել, որովհետև իրենց անձնական «ես»ը և շահերը իրենց համար աւելի նուիրական էին քան կազմակերպութեան պատիւը: Ահա այս ղեկավարները յանուն իրենց անձնական «ես»ի և շահերի փրկու թեան՝ վատնեցին և շոտլանդացիները, և վարկաբեկեցին Դաշնակցութեան համայնը հասարակութեան առջև:

Դաշնակցութեան սնանկ շէֆերը իրենց գրիչի մուրը, աւելի թանկ վաճառելու նպատակով բաց արեցին իրենց սեփական շուկան «Յառաջ» թերթը: Այս թերթը հրատարակվելուց յետոյ առաջ եկաւ «Մշակ» թերթի խմբագիրները, և նրանց մէջտեղ չի տեսնուած մի աղտոտ գրչի պայքար, լրագրական սիւնակները թմբողջապէս մրոտվում էր և աղտոտվում էր հայհոյանքներով, ստերով և զրպարտութիւններով: «Յառաջականները» այս պայքարի անունը մկրտեցին «Հինի և Նորի» կռիւ, մինչդեռ այդ «Հիները և Նորերը» մի տարի առաջ «Մշակ»ի խմբագրատան մէջ ամէն բան միասին էին բաժանում, և «Հին և Նորի» գաղափարը «յառաջականների» կողմից լոկ պատրուակ էր. այդ պայքարը փորի և դիրքի աղտոտ պայքար մ'էր:

Լրագրական այդ խայտառակ պայքարի ընթացքում Միհրան վարդերբերեսեանը մտնում է Թիֆլիս, նախ քան Թիֆլիս մտնելը, Միհրանը շրջել էր Երևանը, Ալէքսանտրապօլը, Կարսը, Պաթում և ու-

Թերթ
 ԿԻՄ
 ԿԵՄ
 ԿԵՄ
 ԿԵՄ


րիչ քաղաքներ՝ նա ծանօթացել էր այս բոլոր քաղաքներում «նախագծի» դէմ եղած դժգոհութիւններին և այդ առթիւ նա խորհրդակցել էր գանազան ընկերների հետ: Թիֆլիսի խմբերը և Հարկարակները, տեսնելով Միհրանին ուրախանում են և առաջարկում որ նա մնայ Թիֆլիս պաշտպանելու Արև. Բիւրօի ոտնձգութիւններից տաճկահայ դատի իրաւունքները:

Միհրանը մի քանի օրից, ծանօթանալով Թիֆլիսի հազարաւոր ընկերների տրամադրութեան ու կարծիքներին, ապա սկսում է մի քանի յօդուածներ գրել «Մշակ»ի մէջ: Նրա յօդուածները Արև. Բիւրօի դէմ է շմամ դրուութեան մէջ, նրանք երբէք չէին սպասում որ, ներքին դժգոհութիւնները վերջիվերջոյ կը դրուի հրապարակի վրայ: Արև. Բիւրօն անմիջապէս բանակցութեան է սկսում Միհրանի հետ բանակցութիւնները և նրանց ընթացքում կատարված նենգութիւնները ու դաւադրութիւնները ամբողջապէս նկարագրելը խիստ կ'երկարուի, միայն յիշենք բանակցութեան գլխաւոր կէտերը:

Միհրանի առաջարկները հետեւեալներն էին. —

1. — Մինչև յառաջիկայ Ընդհ. Ժողովը սահմանափակել «նախագծի» գործունէութիւնը:
2. — Կամ «նախագծի» առթիւ պրօպականտիստների վրայ սպառուող նիւթական միջոցների քանակութեամբ, յատկացնել նոյն չափով գումար նոյն տաճկահայ դատի պրօպականտային:

Դաշնակցական բիւրօկրատները Միհրանի առաջարկներից ոչ մէկը ընդունեցին, նրանք Միհ-



րանին առաջարկեցին և խոստացան մի քանի խաբուսիկ միջոցներ և պայմաններ, սակայն Միհրանը մերժելով նրանց առաջարկները շարունակեց իր բողոքը :

Միհրանը դեռ Թիֆլիս չի մտած այնտեղ է եղել Պ. Վրդանէս Փափազեանը, այն ժամանակ նա է եղել դժգոհ խմբերի բողոքը ղեկավարող . նա մի շարք ժողովների մէջ, գեղեցիկ կերպով բացատրել է «նախագծի» գործունէութեան վնասակարութիւնը ընդդէմ Դաշնակցութեան նպատակին, սակայն Պ. Փափազեանը մի քանի ժողովներ ղեկավարելուց վերջը, ուսուցչութեան պաշտօնով յանկարծ գնում է Երևան : Նրա հեռանալուց վերջը դժգոհ խմբերի ժողովները ստանում են խառնակ վիճակ : Ծնորհիւ այս հանգամանքին, Արև. Բիւրօին յաջողվում է մասամբ մը խափանել բողոքները, որովհետև նա թէ՛ սպառնալիքներով և թէ՛ կաշառքներով գրաւում էր իր կողմը մի քանի աչքի ընկնող խմբերի ներկայացուցիչներին, բայց բիւրօն իր վերջնական յաջողութիւններին չի հասած Միհրանը մտնում է Թիֆլիս, և նրա մուտքով ամէն բան վերստին իրար է անցնում :

Անյաջող բանակցութիւններից վերջը Միհրանի յօդուածները դարձեալ տպվում էին «Մշակ»ի մէջ . նրա մի քանի յօդուածներից յետոյ խմբերը ամէն կողմից արտայայտեցին հրապարակական բողոք ընդդէմ Արև. Բիւրօին և «նախագծի» դէմ :

Անմիջապէս մի քանի օրից յետոյ Թիֆլիսի խմբերի ներկայացուցիչներից կազմուեց մի ժողով, յորում ընտրեցին «Հ. Յ. Դ. Ժամանակաւոր գին-

ւորական խորհուրդի» մարմինը : Ահա այս մարմինը կազմուելուց վերջը զանազան քաղաքներում գտնուող դժգոհ խմբերը կապուեցին Թիֆլիսի «Ժամ. Զին. Խորհուրդի» հետ, և այնուհետև ամէն տեղ սկսեցին պայքար Կ. Կօմիտէների դէմ : Այս ձևի սկսուած պայքարը Դաշնակցութիւնը բաժանեց երկու մասի «Հին դաշնակցականներ» և «նոր դաշնակցականներ» . բացի այս երկուքից կար նաև երրորդ հատուած մը ևս «երիտասարդ դաշնակցական» անուամբ, բայց նրանց կռիւը նախագծականների հետ սուր կերպարանք չ'ստացաւ, նրանք սահմանափակուեցին միայն դրական պրօպականտալով, և վերջիվերջոյ միացան ուսս սօցիալիստ յեղափոխութեան : Այսպէս ասած «նախագծականների» և «Միհրանականների» պայքարը ստացաւ սուր կերպարանք . մի կողմի վրայ կանգնած էր Դաշնակցութեան բիւրօկրատ դասը, իրենց ձեռքի տակ ունենալով տաճկահայ դատի անունով հաւաքուած դրամները, և Տաճկաստանի մի քանի «հերոսներ» իրենց վարձկան խմբերով, իսկ միւս կողմի վրայ կանգնած էր ժողովուրդը և դաշնակցական խմբերը, իրենց հետ ունենալով տաճկահայ դատի իրաւունքի ոյժը :

«Ժամ. Զին. Խորհուրդի» սկսած ուժեղ պրօպականդան, կարճ ժամանակի ընթացքում խափանեց «նախագծի» գործունէութեան ընթացքը, այնպէս որ Արև. բիւրօն իր կեդր. կօմիտէների հետ կաշնակուեց և ընկաւ անել դրութեան մէջ,

Արև. բիւրօն վիճակը դարձաւ յուսահատական . մի կողմից կտրուեց նրա դրամական եկամուտների

աղբիւրը, իսկ միւս կողմից թափուեց նրա բարոյականութեան չպարը, և ա՛լ ժողովուրդը նրա մէջ տեսնում էր միմիայն սնանկութիւն և անբարոյականութիւն. չէֆերը համոզուելով թէ մեր դէմ կռւելու համար այս բոլոր անբարոյական միջոցները անբաւական դարձան, վերջիվերջոյ դիմեցին դաւադրական միջոցին:

Յեղափոխական յորջորջուող Արև. բիւրօն՝ որի հետ մենք պայքարում էինք մեր համոզմունքների և գաղափարների համար, և մեր կռվի զէնքն էր մեր ազատ խօսքը. ահա նոյն այդ բիւրօյի անդամները ազատ խօսքը մեր կողմից ներում խեղդելու նպատակով, վերցրին իրենց ձեռքը ընկերասպան դաւաճան սուրը՝ և գործեցին ամենաստոր դաւադրութիւնները: Մինչդեռ նրանք մեզի հետ կռւելու համար ունէին իրենց սեփական թերթը, ունէին դրամական լայն միջոցներ, և ունէին իրենց յետեւը կանգնած հացի համար վազող ինտէլիգէնցիայի շարքերը, որոնցմով հնարաւորութիւն ունէին ժողովուրդին հասկացնելու մեր սխալները, եթէ իրենք ճշմարիտ էին. սակայն անիրաւը ե՞րբ է կարողացել շիտակ խօսքով յաղթանակ տանել:

Արև. բիւրօն իր յուսահատ վիճակից ազատվելու համար, անվերջ ճիգեր էր անում. նա վերջապէս դիմեց բռնակալների յատուկ միջոցին. իրաւունքը արիւնով ջնջելու միջոցին: Այս վայրագ նպատակին յաջողութեան համար նա չըջաններից իր գլխուն հաւաքեց «տէրէպէկիները» և նրանցից կազմեց «Զին. Դատարան»ի կազմը: Այս վայրենիները անցնելով իրենց նուիրական? պաշտօնի գլու-

խը՝ անմիջապէս հրատարակեցին ԱՀԱՔԵԿՈՂ ՄԻ ԹՈՒՌՅԻԿ, որմէ վերջը, մեր կողմի 24 պարագրուխները ստացան «Զին. Դատարանի» տպուած հրաւիրութիւնները, որոնց իւրաքանչիւրի տակը կնքուած էր Արև. բիւրօյի կնիքով. նրանց կողմից գործածուած այս սպառնական միջոցը մեր կողմից արհամարուեց. սակայն մի քանի օր չ'անցած նըրանք ամենաստոր դաւադրութեամբ սպաննեցին մեր յայտնի ընկերօջ «Շխալու» որը նոյնպէս ստացել էր «Զին. Դատարան»ի թուղթը և արհամարուեցէր ներկայանալու ոճրագործ դատարանին: Մեր «Ժամ. Զին. Խորհուրդ»ին յաջողուեց ձերբակալել «Շխալու» սպաննող 4 չարագործներին և նրանց բանտարկեց իր տրամադրութեան տակ: Չարագործների քննութիւնը պարզեց որ, այդ միւսնոյն գիշերին որոշուել է սպաննել մեր մի քանի ընկերներին ևս, բայց նրանց վրայ դաւադրութիւնը անցել է անյաջող. չարագործները «Շխալույի» ըսպաննութեան որպէս հեղինակ ծանրացան Կեդր. Կօմիտէի անդամ և միւսնոյն ժամանակ յայտնի մատնիչ Մանասեանցի վրա:

Շխալուի սպաննութեամբ յուզուեց բոլոր դաշնակցական խմբերը և ամբողջ ժողովուրդը: Հանգուցեալի յուղարկաւորութեան հանդէսը Թիֆլիցի մէջ պարզեց մի տեսարան, որի նմանը թիֆլիցցին չէր տեսած երկար տարիներից ի վեր. դադարի յետեւիցը գնում էր աւելի քան քսան հազար ժողովուրդի բազմութիւն մը. զանազան ազգութիւններից նուիրուած էր հարիւրից աւելի պսակներ: Ժողովուրդի կողմից եղած այս յարգանքը

դաշնակցական շէֆերի համար անսպասելի էր, նը-
րանք մտել էին ծակէ ծակ իրենց գործած ոճիրի
խայտառակութիւնից փախչելու: Ժողովուրդը խոր
սուգով ողբում էր դաշնակցական հերոսի մահը,
որին սպաննել էին հէնց իրենք՝ դաշնակցական շէ-
ֆերը: Շխալու արժանիքը և քաջութիւնը մինչև
իսկ Պարսիկները գնահատեցին և հանգուցեալի
դագադին էլ յարգեցին մի պսակով այն Շխալուն՝
որ մի քանի ամիսներ առաջ կազախի կռիւներում
իր կուրծքը դէմ էր տուել պարսիկ բանակներին՝
և նրանց վրայ թողել էր ահ և սարսափ: Թշնամին
գնահատեց Շխալուն, սակայն ընկերվարական յոր-
ջորջուող դաւաճան շէֆերը նենգութեամբ խլեցին
նրա կեանքը: Շխալուի սպաննութիւնից վերջը կա-
տարուեց մի կարգ բանակցութիւններ և դէպքեր,
որոնք արժանի են յիշատակուելու, բայց իմ ներ-
կայ բանտային խիստ վիճակը անկարող է անում
այն բոլորը մի առ մի բացատրել:

Շխալու սպաննութեան առթիւ մեր կողմից կա-
տարուեց մի շարք սպառնալիքներ հակառակորդ-
ների վրա և այդ սպառնական միջոցը կանխեց
մեր դէմ կատարուելիք դաւադրութիւններն ու
սպաննութիւնները, սակայն մեզ ձգելու համար
նրանք չը դադրեցան:

Այս անգամ էլ դիմեցին մատնութեան, և պը-
րովակատորութեան միջոցին:

Շէֆերը յանձին կեդր. կոմիտէի անդամ Մա-
նասեանցի կապուեցին «Օխրաննի Օտտէլէնի»
երեք դինովնիկների հետ (Շպիլով, Մելիք
Եակոնով և մի ուրիշի) կաշառելով նրանց դրամով

և միևնոյն ժամանակ իրենց ներկայացնելով որպէս
Տաճկահայ Դատի պաշտպան, իսկ մեզ էլ ներկա-
յացնելով իբրև անարշիպներ:

Շնորհիւ այս հանգամանքին մեր դէմ ըս-
կըսուեց կառավարչական հալածանք, այդ հալա-
ծանքից յետոյ, մեր շատ ընկերները աքսորուեցին
Ռուսաստանի հեռաւոր խորքերը, մեր և ուրիշ ըն-
կերների բնակարանները քանիցս խուզարկուեցին.
ամբողջ երեք ամիս Թիֆլիսի մէջ անցուցինք փա-
խըստական կեանք, շատ գիշերներ մեր սենեակում
չէինք կարող մնալ, ստիպուած էինք ընկերների
բնակարաններում գիշերելու. մինչև իսկ լրագրու-
թիւնների մէջ յայտարարուեց գեներալ նահանգա-
պետի հրամանը, որով աքսորվում էինք «Աստրա-
խան»ի նահանգը: Ստոր հակառակորդները իրենց
մատնութիւնների հետ չէին վարանում գործել
նաև այնպիսի պրովակացիաներ, որոնց յաջ ող
ջող հետևանքը պիտի լինէր արիւն և կոտորած. նը-
րանց պրովակացիութեան նմոյշներից, որպէս ա-
պացոյց կը ներկայացնեմ հետևեալ փաստս:

Բոշտայից ստանում ենք անստորագիր մի նա-
մակ, որը իր ժամանակին տպագրուեց «Մշակ»ի
մէջ: «Պրն. Միհրան այսօր խմբագրութեան մէջ
նստած էինք, քո հասցէին կը խօսէին, որ կազմա-
կերպութիւնը մտադիր է իր մարդկանց հազցնել
օֆիցէրի և կողակների շորեր, և այդպիսի միջոցով
պիտի գան ձերբակալեն ձեզ և տանին կորսնցնեն.
ես եկայ իմաց տալու, բայց ընկերներդ ինձ թոյլ
չ'տուին ներս մտնելու»:

Պրովակատորները իրենց անստորագիր նամա-

կով նպատակ են ունեցել մեզ կռիւնցնել Ռուս կառավարութեան հետ : Նրանք մեր բնակարանները խուզարկել տալու համար կառավարութեան կանխապէս գրգռել տրամադրել են մեր դէմ , իսկ միւս կողմից էլ մեզ են գրգռում , որ կառավարութեան խուզարկու խումբը ընդունենք մեր հակառակորդների տեղ , և այդպէսով սկսուի կռիւը մեր և ռուս զինուորների մէջտեղ :

Իսկապէս այդ նոյն օրը երեկոյեան մթութեան պաշարուեց մեր բնակարանը և Կոփեցի ինչչօի սըրճարանը՝ կօզակների խմբին առաջնորդող օֆիցերի ձեռքի մէջ կար մի թուղթ՝ որի մէջ նա կարդում էր թէ՛ մեր իսկական անունները և թէ՛ մեր անցագրերի անունները : Այդ խուզարկութեամբ ձերբակալվեց Կօփեցի «Խէչօն» և ուրիշ երկու ընկերներ , որոնցից երկուքը աքսորեցին Ռուսաստանի ներքին նահանգները , իսկ «Խէչօն» լաւ ծեծուելուց յետոյ շտապով աքսորվեց Աստրախանի նահանգը :

Մեր դէմ սկսուած կառավարչական հալածանքը չ'դադրեց , այդ առթիւ Միհրանը ստիպուեց բարձր դիրք ունեցող անձնաւորութիւնների միջոցաւ , դիմումներ անել գեներալ նահանգապետին բայց տեղի ունեցած բոլոր դիմումները չ'կարողացան հասկցնել մեր անմեղութիւնը . նահանգապետին . վերջի անգամ Միհրանը լրագրական իր յօդուածներից մէկը մի խնդրագրի հետ թարգմանաբար ներկայացուց նահանգապետին , որով միայն կարելի եղաւ հերքել մեր վրայ բարդուած ամբաստանութիւնը : Յօդուածի պարունակութիւնը ամբողջապէս նուիրուած էր տաճ-

կահայ դատի պաշտպանութեանը , նահանգապետը այս յօդուածից յետոյ մի հեռագրով ազատ արձակել տուեց Կօփեցի «Խէչօն» Աստրախանի բանտի հիւանդանոցից , և մեր հասցէին եղած աքսորի վճիռն էլ նոյնպէս ջնջեց , դրանից վերջը հազիւ կարողացանք ազատ շունչ քաշել :

Մեր դէմ կատարուած կառավարչական հալածանքների ամբողջ դադունիքը և պատճառը երեք ամիս վերջ մանրամասնութեամբ պարզուեց , եւ հաստատ փաստերով և վկայութիւններով հաստատուեց որ այս բոլոր սարսափ մատնութիւնների գլխաւոր հեղինակն է Կեդր . Կօմիդէի անդամ Մանասեանցը , այն ժամանակ «Ժամ . Զին . Խոր .» ը իր պաշտօնական թուղթերով դիմեց Թիֆլիսի Առաջնորդ Սաթուհեանին , Հնչակեան Կուսակցութեան . Հայ սօցիալ դեմօկրատներին , և մատնիչի ընկեր Ս . Զաւարեանցին , որպէսզի միջակուսակցական դատարան կազմուի , և այդ դատարանի միջոցաւ պարզուի ընդհանրութեան Մանասեանցի մատնութիւնները և պրովակատորութիւնները . բայց կուսակցութիւնները յարգելի պատճառներով միջակուսակցական դատարանը ձգձգեցին այսօր և վաղուայ , մինչ այդ ժամանակներում մեր մէջ եղած անախորժութիւնները այնքան խայտառակ կերպարանք ստացել էր որ , իւրաքանչիւրը զգում էր մօտիկ օրերում կատարուելիք արիւնալի դէպքերը և նրանց սարսափները :

Յաւալի դէպքերու առաջքը առնելու հնարաւորութիւն չ'կար , որովհետեւ Դաշնակցութիւնը ամբողջապէս ներկայացնում էր «Արչակաւան»ը . ե-

Թէ կային Դաշնակցութեան մէջ լաւերը, նրանք էլ թուով շատ քիչ էին և չունէին պահանջուած հեղինակութիւնը, որոնց յաջողութիւնները առաջը առնելու սպառնացող գազանութիւններին:

Երկու հակառակ կողմերն էլ այն համոզմունքը ունեցան որ՝ մէջտեղի թշնամութիւնները միայն սպաննութիւններով կը վերջացուի, և այդպիսի հըրէշային համոզմունքների առաջ շատերը հագիւ կարողանում էին զսպել իրենց գազանային ինտինքները:

Այդ առթիւ ես մի քանի փաստեր կը բերեմ, որոնցմով յայտնի կը լինի թէ՛ ի՞նչ դեր են խաղացել դաշնակցական ղեկավարները, ներքին կըռիւրը բորբոքելու և տարածելու մէջ:

Ղեկավար յորջորջուող Կարօն (Փաստրմաճեանը) մեր հակառակութիւնների մասին իր մի խօսակցին յայտնում է հետևեալ նախադասութիւնը. «Մինչև 200-300 հոգի չի կոտորվի՝ Դաշնակցութեան ներքին պայքարը չի վերջանայ»:

Պօսակիցը երբ Փաստրմաճեան Կարօին բացատրում է իր եղբայրասպան ախորժակին զարհուրանքները և հակառակվում է նրա մտքի հետ, սակայն Կարօ դարձեալ պնդելով իր ասածները, աւելացնում է որ «ուրիշ ճար չի կայ հակառակութիւնները վերցնելու». իսկ զանազան թօփչեանները լըրադրական յօդուածներով և բանակցութիւններով առաջարկում էին վրացոց որ «Միացած ուժերով կարող լինեն մաքրել Կովկասեան հրապարակից հայկական կարմիր կվարդեաները» յայտնելով որ սըրանք ուժեղ են և աւելի լաւ են կազմակերպուած

քան Ռուսաստանի կվարդեաները:

Ովքե՛ր են եղել այդ «կարմիր կվարդեաները». նրանք՝ որոնք մի քանի ամիսներ առաջ իրենց շարքերի մէջ ամենապատուաւոր տեղն էին գըրաւել, և որոնց մահուան առթիւ իրենց կեղծ գըրիչները պատրաստ էր շռայլելու զանազան գըրուազներ և ներբողներ:

Իսկ Դաշնակցութեան ամենապատկառելի ուժը համարուող Միքայէլ Յովհաննէսեանը, իր յօդուածներից մէկի մէջ «անկարգապահ զինուորներին» սպառնում է հետևեալը. —

«Դաշնակցութիւնը անցեալում իր անկարգ զինուորներին շատ անգամներ է պատժել, այս անգամ էլ անչուշտ անկարգապահները անկարող են ազատուել յեղափոխական նեմեղիդիայից, որոնք մինչև իսկ անկարող են ըմբռնելու իրենց պատասխանատուութեան ամբողջ ծանրութիւնը»: Միքայէլ Յովհաննէսեանները իրենց սպառնալիքները գրելու ժամանակ դժբախտութիւն են ունեցել մոռնալու որ՝ յեղափոխական նեմեղիդիայի ուժը գոյութիւն կ'ունենայ միայն յեղափոխութեան մէջ, իսկ երբ յեղափոխութեան կազմակերպութիւնը դառնում է ընկերասպանութեան, նենգութեան և դրամաշորթութեան միջավայր, այնտեղ յեղափոխական նեմեղիդիայի փոխարէն՝ գոյութիւն կ'ունենայ բռնութեան, վայրագութեան նեմէգիդիան:

Միքայէլ Յովհաննէսեանների յեղափոխական նեմեղիդիայի ուժը շանթել կարողացաւ միմիայն տաճկահայ որբի չի ծաղկած կեանքը, և պատանիների ու կողմնակի մարդկանց անմեղութիւնը: Մ.

Յովհաննէսեանների սրտերի մէջ եթէ խղճի մի փոքր խայթ լինէր, նրանք պիտի սարսափէին իրենց յեղափոխական նեմեզիդիայի կատարած կատաղի նախճիրներից. բայց նրանք փոխանակ սարսափելու, ընդհակառակը, ոճիրները յեղափոխական դործ հռչակելով՝ փառաբանեցին «Դրօշակ» թերթի մէջ. այն թերթին մէջ՝ որը տասն և հինգ տարիներ իր էջերը ողողեց տաճկահայ գուլումներով ու սարսափներով, տասն և հինգ տարիներ՝ դահիճների և բռնաւորների հասցէներին անէծքներ թափեց, տասն և հինգ տարիներ Տաճկաստանի անիրաւութիւնների դէմ կռիւ, կռիւ պոռաց, տասն և հինգ տարիներ տաճկահայ որբերի վիճակը ողբաց, օ՛, սրանից աւելի խոշոր անարգանք և վիրաւորանք կարելի է լինել իրբ «Դրօշակ»ի հասցէին:

Այսպէս առաջ եկած դաշնակցական այս խայտառակութեան դարմանը միամիտները սպասում էին միայն յառաջիկայում գումարուելիք ընդհ. ժողովի հեղինակաւոր և խելացի որոշումներից. բայց դաշնակցական չէֆերը փոխանակ շտապելու ընդհ., ժողովը օր առաջ գումարելու, որպէսզի ընդհ. ժողովին յաջողուէր անախորժութիւնները խափանել իր դեռ չի ընդարձակուած սահմանների մէջ, սակայն նրանք ո՛չ միայն չ՛շտապեցին՝ այլ նոյն իսկ որոշուած օրից էլ վեց ամիսով ուշ գումարեցին ժողովը, մինչդեռ կանոնադրութիւնը նըրանց ո՛չ մի իրաւունք չէր տալիս այնքան ամիսներով ուշացնել:

Ընդհ. ժողովի յետաձգման միակ նպատակը այս էր. — չէֆերը բացարձակ տեսնում էին որ ընդ-

հանուր ժողովում շատերը պիտի հակառակուին «նախագծին» ահա դրա համար ժողովը յետաձգեցին վեց ամիսով ուշ, մինչև որ նրանց յաջողուեց ներկայացուցիչների մի մասին նշանակել տալու իրենց համախոհներին՝ իսկ մի քանիսն էլ զանազան միջոցներով կարողացան գրաւել իրենց կողմը:

Ասածներին որպէս ապացոյց յիշենք մի քանի փաստեր «նախագծի» առթիւ: Կովկասի մէջ առաջ եկած անախորժութիւնները ուսումնասիրելու նըրպատակով արտասահմանէ դաշնակցական մարմինները օր առաջ Կովկաս ուղարկեցին իրենց ներկայացուցիչներին:

Պատգամաւորները Կովկաս դալով շփուեցին դաշնակցական խմբերի հետ: Նրանք երբ տեսան որ խմբերի բողոքները իրաւացի են, այս անգամ նըրանք էլ իրենց կողմից սկսան պաշտպանել և քաջալերել խմբերի պահանջները, մինչև իսկ Պուլկարիայից եկող պատգամաւորներից մէկն էլ «Մշակ»ի մէջ պաշտպանողական մի յօդուած գրեց այս առթիւ: Իսկ Ամերիկայի պատգամաւոր վահագը, մեզի մօտ շատ անգամներ խօսել է այսպէս. — Ամերիկայի 25,000 հայերի ձայնը բողոքում է «նախագիծին» և նրանք ինձ ընտրեցին որպէս պատգամաւոր, որպէսզի ընդհ. ժողովին ներկայացնեմ ինձ ընտրող ժողովուրդի ձայնը. և արտասահմանեցիներս ընդհ. ժողովին մէջ ամէն կերպ կը հակառակուինք «նախագծին»: Իսկ Պուլկարիայում հըրատարակուող «Ռադմիկ» թերթը իր խմբագրականներից մէկով Անդրանիկի ստորագրութեամբ բողոքեց Կովկասի դաշնակցութեան արած նոր քայ-

լին: Տաճկաստանի պոռոտախօսները ընդհանուր ժողովի մէջ ընդունեցին նախագիծը: Իսկ արտասահմանի պատգամաւորների տարօրինակ փոփոխութիւնը անշուշտ ունի իր գաղտնիքը, որովհետեւ ժողովից անմիջապէս վերջը, Պուլկարիայի և Եգիպտոսի դաշնակցական խմբերը հակառակ թռուցիկներով բողոքեցին Ընդհ. ժողովի որոշումների դէմ, մեղադրելով իրենց ընտրած պատգամաւորներին, որոնք իրենց ձայնը իսկութեամբ չեն ներկայացրել ժողովին:

Չորրորդ Ընդ. ժողովը դեռ չի գումարուած «Ժամ. Զին. Խորհուրդը» շտապեց մի թռուցիկով դիմել նրան, յորում մի շարք հարցեր պարզելուց յետոյ, ամենավերջը նա աւելցնում էր հետեւեալը, որ «ընդհ. չորրորդ ժողովը անպայման իր ներկայութեանը կանչելու է Դաշնակցութեան հասցէին եղած խայտառակութիւնների գլխաւոր յանցաւորները և պատասխանատուները. Ընդհ. ժողովը միայն վճռելու է, վասնզի Ընդհ. ժողովոյ միայն կարող էր լինել անկողմնապահ»: Այս թռուցիկը մի քանի հազար օրինակով տարածուեց ժողովրդի լայն խաւերում և մի օրինակ էլ առանձին «Ժամ. Զին. Խորհուրդի» կնիքով կնքուած ուղարկուեց իրեն՝ Ընդհ. ժողովին:

Մի երկու ամիս վերջը գումարուեց չորրորդ ընդհ. ժողովը. այդ ժողովը ո՛չ թէ ընդհ. ժողով էր այլ՝ արիւնախում ոճրադործներից, եղբայրասպան դաւաճաններից կազմուած մի խմբակցութիւն, որոնց գլխաւոր զբաղմունքը եղաւ հայկական կեանքը վերածել մի սպանդանոցի:

Ընդհ. ժողովի զբաղմունքների առաջնակարգ տեղը դրուել էր մեր հասցէին արուելիք մահավճիռների խնդիրը: Այս հարցի շուրջը ժողովը վարանել էր, բայց վերջիվերջոյ, մի քանի տաճկաստանցի «հերոսների» ստորագրութիւնները իրենց ձանկը ձգելով անմիջապէս մեր վրայ կազմել են փառաւոր մեղադրանքներ և արձակել են մահավճիռները մեր հասցէներին: Ընդհ. ժողովը մեզ մեղադրել է հետեւեալ յանցանքների մէջ.

1. — Միհրանը և ընկերները կապուելով Ռուս կառավարութեան հետ զբաղուել են մատնութիւններով և պրովակատօրութեամբ:

2. — Միհրանը և ընկերները Դաշնակցութեան կեղծ կնիք պատրաստելով զբաղուել են դրամաշորթութեամբ:

3. — Միհրանը և ընկերները տարածել են մի շարք թռուցիկներ, որոնցով զրպարտել են դաշնակցական այս ու այն գործիչները:

4. — Միհրանը և ընկերները հրապարակել են «մեղադրական ազդ» և «ղինուորական դիկտատուրա» վերնագրով, թռուցիկներ, որոնք կամեցել են, բռնի միջոցներով, դրուել Դաշնակցութեան գոյքն և ամբողջ հարստութիւնը. նաև մի շարք ուրիշ երկրորդական մեղադրանքներ:

Ընդհ. ժողովի դատաստանական ատեանից մեր հասցէին արձակուած մահավճիռները համեմատելով մեր վրայ ծանրացած մեղադրանքներին իրաւացի կրնանք համարել, բայց չարագործների արդարադատ? ատեանը մոռացել է մեր մեղադրանքների քով դնելու երկու շատ փոքրիկ

կէտեր, այն է՝ փաստերը և ապացոյցները. նըրանց երբ անհրաժեշտ է մեղադրել մէկին, փաստերի և ապացոյցների փոխարէն կարող են բաւականանալ միմիայն դատարկ բառերով ու խօսքերով:

Մեր վրայ բարդուած մեղադրանքները մի առ մի վեր առնենք և քննադատենք: Մինչև իսկ քարերը կարող էին հասկնալ մեր ճշմարտութիւնը և իրաւացիութիւնը, բայց ամբոխը քարից էլ անտարբեր և լուռ մնաց, երբ կովկասում մեր շուրջը կատարվում էր անօրինակ հալածանքները և չտեսնուած ոճիրներն ու սարսափները:

Առաջին մեղադրանք. — Ընդհ. ժողովը մեղ մեղադրել է որպէս մատնիչների և պրավակատօրների. շատ գեղեցիկ, մենք թող լինենք մատնիչներ և պրավակատօրներ: Սակայն մենք ո՞ր մէկին բանտը ձգեցինք, ո՞ր մէկին աքսորները ուղարկեցինք և կամ որո՞ւ բնակարանը խուզարկել տուինք, և կամ ի՞նչ պրօվակացիներ արինք:

Չէ՞ որ իւրաքանչիւր մատնութիւն մի անհատի հետ պիտի կապուի, և նա պիտի ունենայ իր զառն հետեանքները. չէ՞ որ իւրաքանչիւր պրօվակացիա մի դէպքի հետ պիտի կապուի, և նա պիտի ունենայ իր աղետալի հետեանքները:

Չարագործների դատաստանական ատեանը իր տրամադրութեան տակ չունենալով ո՛չ մի դէպքի և անհատի անուն, մեզ մեղադրել է միմիայն բառերով:

Դաշնակցութեան մէջ շատ քիչ անգամ կը գտնուէր որ մեզի չափ տեղեկութիւն ունենար

Դաշնակցութեան գաղտնի գործերին և անցքերին, որոնց մէկի բացատրութիւնը կառավարութեան կը յաջողուէր ձերբակալելու զանազան քաղաքներից զէնքերի և ռումբերի պահեստներ:

Սակայն ինչո՞ւ Ընդհ. ժողովը այսպիսի մի ըստօրին դէպք մեր անուան հետ չ'կրցաւ կապել, և նա մեր մեղադրանքները կազմեց միայն չոր բառերով:

Երկրորդ մեղադրանք. — Մենք իբր թէ կեղծ կնիք ենք պատրաստել և պարապել ենք դրամաշորթութեամբ. դարձեալ գեղեցիկ մեղադրանք. սակայն Ընդհ. ժողովը ինչո՞ւ մեղադրողներից չէ պահանջում փաստերը և ապացոյցները և կամ Ընդհ. ժողովը ինչո՞ւ ինքը իրեն չէ հարցնում որ Միհրանը 16 տարիներ Դաշնակցութեան մէջ կեանքի գնով պարտականութիւններ է կատարել և իր տարիները անցկացրել է միշտ բանտերի և արկածների մէջ, արդ՝ ի՞նչպէս է լինում որ նա այսքան տարիներ անչեղ տարել է յեղափոխական լուծը և հեռու է մնացել, մատնիչութիւնից և դրամաշորթութիւնից, և ընդ ամէնը մի քանի ամիսներու ընթացքում նա դառնում է թէ՛ մատնիչ և թէ՛ դրամաշորթ: Ի հարկէ Ընդհ. ժողովը այդպիսի հարցեր տալու պէտքը չունէր, որովհետև երբ յանցաւոր և ստոր հակառակորդը դատաւոր էր լինում իր հակառակորդին այն դէպքում շատ բնական է որ նրանց աչքին երկինքը երկիր պիտի երևար իսկ երկիրն էլ երկինք:

Դաշնակցական խուժանապետներ մեղադրել են մեզ, իբր թէ մենք կեղծ կնիք պատրաստել ենք,

դրամաշորթութեան նպատակով. այժմ պարզենք նրան իսկութիւնը, և պարզենք միևնոյն ժամանակ այդ առթիւ չէֆերի ֆոնի ՅԱԼԷ:

Միհրանի Թիֆլիս գալուց յետոյ, չէֆերը տեսան որ գժգոհները իրենց դէմ պայքարում են ո՛չ թէ դատարկ խօսքերով՝ առաջուայ նըման, այլ կազմակերպական միջոցներով, որոնք ունին իրենց «Հ. Յ. Դ. Զինուորական Խորհուրդը», ունին իրենց ժամանակաւոր կօմիտէները ու ենթակօմիտէները, որոնց հետ կապուած են զանազան քաղաքների դաշնակցական խմբերը, կարճ ժամանակից յետոյ էլ՝ տեսան նաև «Զինուորական Խորհուրդ»ի կնիքը: Նախ քան կնիքը հրապարակ գալը նրանք իրենց բանակցութիւնների մէջ ամէն անգամ խնդրում էին մեզ ասելով այսպէս. «Մենք ձեր պահանջներին և բողոքներին հակառակ չենք, դուք կարող էք ձեր համոզմունքները պատպանել, մեր առաջարկը միայն այն է որ դուք «Ժամ. Զին. Խորհուրդը» կազմալուծուած յայտարարէք և նրա փոխարէն ունենաք խմբերի ներկայացուցիչներ»:

Նրանց այս առաջարկը հետևեալ նպատակը ունէր. «Ժամ. Զին. Խորհուրդը» կազմալուծուած յայտարարելով, նախ մեր սկսած պայքարը պիտի կորսնցնէր իր հեղինակութիւնը, որովհետև զանազան խնդիրների համար մեր կողմից բանակցողները իրենց առաջ ներկայանալու էին որպէս անհատներ, իսկ անհատները պահանջուած ուժը և կամքը չպիտի ունենային իրենց հետ խօսելու պարզ և դժբախտական խօսքերով, ահա այսպէս, մեզնից իւրա-

քանչիւրը իր գլխին կախուած. պիտի տեսնէր կազմակերպական վայրագ սպառնալիքը:

Նրանք այս միջոցաւ պիտի յաջողէին խեղդել մեր ազատ բողոքները մեր կողորդում: Երկրորդ. «Զին. Խորհուրդը» իւրաքանչիւր շաբաթ հրատարակում էր մի քանի թուուցիկներ և տարածում էր ժողովրդի լայն խաւերի մէջ, որոնք խիստ ծանր տպաւորութիւն էին թողնում Արև. շանտափստների և Կ. Կօմիտէի անդամ մատնիչ Մանասեանցների վրա և եթէ մեր կողմից «Ժամ. Զին. Խորհուրդը» կազմալուծուած յայտարարուէր այն ժամանակ խմբերի ներկայացուցիչները անկարող էին իրենց ստորագրութեամբ թուուցիկներ բաց թողնելու և այն դէպքում Արև. շանտափստների դիմակը ծածկող վարագոյրը ո՛չ ոք կը համարձակուէր պատռելու:

Շնորհիւ «Ժամ. Զին. Խորհուրդի» տարածած թուուցիկներին և նրա պրօպականդային արձակուեց ժողովրդական լեզուի կապանքները, և այնուհետև շրջաններից անհամար նամակների տարափներ էր թափվում խմբագրատունները: Այսպէսով հրապարակուեց թշուառ ժողովուրդի մէջ կատարուած դաշնակցական բռնութիւններն ու ոճիրները որոնք մինչև այդ օրը անյայտութեան մէջ էին թաղուած դաշնակցական սպառնալիքներով:

Հրապարակի վրայ երբ սկսվեց գործածուել «Ժամ. Զին. Խորհուրդ»ի կնիքը, մեր հակառակորդներն իրար անցան, որովհետև կնիքի գործածութեամբ «Ժամ. Զին. Խորհուրդ»ի հեղինակութիւնը աւելի մեծանում էր և միևնոյն ժամանակ

իրենց դէմ մղուող պայքարը ազատվում էր իր նիւթական նեղ միջոցներից :

Կնիքի գործածման առթիւ, հակառակորդները մի կողմից մեզի սպառնալիքներ էին անում, իսկ միւս կողմից էլ հասարակութեան մէջ տարածում էին «որ Միհրանը կեղծ կնիք է պատրաստել և ըսկըսել է դրամաշորթութեան» :

Կնիքի գործածութիւնը խափանելու համար նրանց կատարած բոլոր ջանքերն ու ճիւղերը բոլորովին ապարդիւն անցան, որովհետեւ մեզ հետ կապուող հասարակութիւնը շատ լաւ էր ըմբռնում կնիքի նշանակութիւնը, նաև հասկանում էր որ «Ժամ. Զին. Սորհուրդ»ը առանց կնիքի օրինաւոր հաշիւների չէր կարող պահել, որովհետեւ նրա հետ կապուած էր քաղաքներ և հազարաւոր ընկերներ, շատ պարզ է որ այսպիսի մի ընկերութիւն քամիով չպիտի շարժուէր, նա պիտի ունենար իր դրամական մուտքը և ելքը, իսկ այդպիսի գործունէութիւնը պիտի կառավարէր «Ժ. Զ. Ս.»ի կնիքը, և ո՛չ թէ զանազան մարկոսների ստորագրութիւնները :

Հակառակորդները երբ տեսան որ իրենց ըսպառնալիքներն և ստորնութիւնները տնյաջող անցան, այս անգամ դարձեալ դիմեցին բանակցութեան միջոցին, որը եղաւ նրանց ամենավերջի բանակցութիւնը մեզի հետ :

Բանակցողները այս անգամ ընտրուել էին ամբողջապէս տաճկահայաստանցիներից, բանակցութիւնը խաղաղ անցնելու համար նրանք Դարմանեանցին խնդրել էին որ Միհրանը առանձին բա-

նակցի : Որոշուած տեղը Միհրանի հետ գնացի նաև ես. այնտեղ էին Սվազցի Մուրատը, Սմբատը, Տիգրանը, Աւօն և Վանեցի Տաճատ Վրդ.ը :

Քաղաքացիական հազուստներով յեղափոխական Տաճատ վարդապետը լուրջ և ցաւալի ձայնով սկսաւ բացատրել տաճկահայաստանի վիճակը. երկար ճառելուց յետոյ վերջացուց այսպէս, «Պրն. Միհրան յարմար մօմ էն տը, ձեռքից փախցնելու չենք, Սուլթանը արդէն ծանր հիւանդութեան մէջ է իսկ Պուլկարիան Տաճկաստանի դէմ պատերազմական պատրաստութիւնների վրայ է, Դաշնակցութիւնը ի հարկ է այսպիսի յարմար բուպէնքը ձեռքից ի բաց թողնելու չէ. նա էլ պիտի սկսի պատրաստութիւնների, շատ շուտով ուժ պիտի կեդրոնացուի թէ Պարսկաստանի գծի վրայ և թէ կարսի ու Երևանի սահմանների վրայ, այժմ եկանք ձեզ խնդրելու որ, հրապարակի վրայ իջած անախորժութիւններին վերջ տրուի սրպէսզի սահմանների վրայ պատրաստուելիք արշաւախմբերը մեր ներքին անախորժութիւններով առանձին արգելքների չի հանդիպին. մենք ձեր բողոքին հակառակ չենք մինչև իսկ մասամբ էլ համամիտ ենք : դուք ձեր բողոքը կարող էք շարունակել մինչև Ընդ. Ժողովի դումարումը, և յուսով ենք որ ժողովը ձայների մեծամասնութեամբ պիտի մերժէ «նախագծի» գործունէութիւնը Դաշնակցութեան անուան աակ. այս մասին վստահ եղիք» :

Դաշնակցութեան ներքին կռիւը, այս վերջին օրերում բաւական խիստ կերպարանք ստացաւ, որի զլխաւոր պատճառը եղաւ «Ժամ. Զին. Սոր-

հուրդ»ի կնիք գործածելը. այժմ մենք խնդրում ենք ձեզնից որ, ի սէր Հայաստանի և ի սէր մեր դժբախտ ժողովուրդի ազատութեան՝ դադրեցնէք կնիքի գործածումը» :

Մենք ամենայն համբերութեամբ լսելով բանակցողների լաւ սերտած դասերը, որոնց դասատուն էր Արև. բիւրօն, և որոնց բանակցութիւնները մեզ հետ միշտ հիմնուած է եղել սպառնախօսների, ստերի, կեղծիքների և դաւադրութիւնների վրայ և մեր անհաշտ հակառակութիւնների այսքան երկարանալուն պատճառը գլխաւորապէս եղել է նրանց բանակցութեան այս զզուելի միջոցները, որոնց իւրաքանչիւր խօսքին մէջ մարդ կը տեսնէր խաբէութիւնը, սուտը և կեղծիքը :

Նրանց առաջարկին մենք պատասխանեցինք հետեւեալը. —

«Շատ ուրախ ենք որ դուք մեծ ոյժերով արշաւելու էք երկիր. եթէ ձեր այս ասածները ճիշդ են, ուրեմն կը վստահեցնենք ձեզ, որ սահմանի վրայ երբ ձեր առաջին հրացանը պայթի, երկրորդ հրացանը պարպողը մենք կը լինինք, արդէն մեր ամբողջ հակառակութիւնները առաջ է եկել այդ պատճառաւ, հետևապէս ձեր այս քայլը միակ միջոցը պիտի լինի մեր բոլոր վէճերին վերջացնելու, հակառակ դէպքում, եթէ մենք ձեր յետևիցը երկիր չի մտնենք և շարունակենք ներքին կռիւը, այն ժամանակ գիտցէք որ ժողովուրդը ինքը պիտի արհամարհէ մեզ, և նրա այդ արհամարհանքը ըստ ինքեան վախճան կուտայ մեր պառակտիչ գործունէութեանը» :

Մեր խօսքերից վերջը, նրանք պոռոտախօսութեամբ դարձեալ յեղյեղեցին իրենց օգային արշաւախմբերի նպատակը, ու կրկին խնդրեցին որ, «իրենց խէթէր համար դադրեցնեն կնիքի գործածումը» : Միհրան նրանց խէթէրը և թախանձանքները բացարձակապէս մերժելով ասաց «որ ընկերների խէթը այսպիսի բանակցութիւնների մէջ բոլորովին նշանակութիւն չունի, որովհետև մեր վէճը ժողովրդական արհամարհուած իրաւունքների շուրջն է առայժմ մեր գործածած կնիքը ո՛չ մի՛ բանով արդեւք չէ հանդիսանում ձեր տաճկաստան մտնելու գործունէութեանը :

«Ժամանակաւոր զինուորական խորհուրդը շարունակելու է իր սկսած պայքարը «նախագծի» դէմ, որով անհրաժեշտ է որ գործածուի կնիքը, իսկ երբ մենք կը տեսնենք որ Տաճկաստանի մէջ պահանջուած ոյժը մտնելու է, այն ժամանակ կընիքի հետ ամէն բան կը վերջանայ :

Այսպիսի մի կարգ խօսքերից յետոյ բանակցութիւնը վերջացաւ աղմուկով և սպառնալիքով : Մեր գլխուն անցած անհամար հալածանքների և սարսափների շնորհիւ, այժմ հնարաւորութիւն չունիմ «Ժամ. Զին. Խորհուրդի» հաշիւները իմ այս բացատրութիւններին մէջ մէկ-մէկ ներկայացնելու, բայց եթէ չեմ սխալվում յիշողութեանս մէջ, ընդամէնը «Ժ. Զ. Խ.»ի տրամադրութեան տակ անցած է մօտաւորապէս 7,000-8,000 ռուբլի փող, այս գումարի մօտաւորապէս կէսը յատկացուած է տպագրութեան ծախքերի վրայ, իսկ մի մասն էլ «Ժ. Զ. Խ.»ի յանձնարարութեամբ զանազան քա-

ղաքներ ճանապարհորդող ընկերների ծախսերին, երրորդ մասն էլ յատկացուած է «2. 10.»ի տրամադրութեան տակ եղող թուուցիկ խմբին: Իսկ Արև. բիւրօն մեր այս «8,000» բուրլուն դէմ ընկառած է 500,000 բուրլի և թերևս աւելի:

Ենորհիւ այս կէս միլիօն հսկայական գումարի նրանց յաջողվեց թէ՛ իրենց գոյութիւնը պահպանելու թէ՛ մեր ոյժը ջլատելու և թէ՛ ընդհ. ժողովին էլ տալու իրենց ցանկացած ուղղութիւնը:

Չնայած որ նրանք տէր էին այնպիսի հսկայական ուժի, այնուամենայնիւ պայքարի ամբողջ ընթացքում մեր դէմ գործածեցին ամենաստոր զէնքերը: Նրանք շատ անգամներ տեսնում էին մեր իրաւացիութեան առաջ իրենց ոյժի տկարութիւնը, բայց անարգ «ես»ը թոյլ չէր տալիս որ խոստովանէին իրենց յանցանքը և սխալը: Այս կէս միլիօն փողից, հարիւր հազար բուրլին, երեք ամսուայ ընթացքում սպառեցին մեր վրայ:

Մէկ Միհրանին սպաննելու համար, երբ մի կազմակերպութեան կողմից ոչնչացվում է այսպիսի մի հսկայական գումար, այն պերճախօս փաստը իսկ ապացուցանում է նրանց ցած և սև հոգի լինելը:

Միհրանը վիրաւորուելուց վերջը, այս հարիւր հազար բուրլիով նրանք գնեցին օրիորդներ, Անահիտին, ռուս օրիորդներ՝ Մարիաներին, ռուս Պէդրէներին, Չէրքէզախօս Հային, և վարձկան խմբերին, իրենց համալսարանական ղեկավարներով, — և այնուհետև այս գետնաքարչ արարածները ընկան քաղաքից քաղաք:

Հարիւրաւոր բուրլիները սառույցի նման հալվում էին շոգեկառքերի և շոգեհաւերի երկրորդ և առաջին կարգերի մէջ, հալվում էր պուֆէնների, հիւրանոցների և զանազան զբօսավայրերի վրայ, և հալվում էր բուրլիները զեղխ և շուայտ կեանքի մէջ: Երևակայեցէք երբ տէնօրիստական գործերի յաջողութեան համար հիւրանոցներից վարձում են ռուս աղջիկներին նշանաւոր գումարներով, և նրանց փէշերից բռնած ընկնում են քաղաքէ քաղաք, հետևանքը արդէն պարզ կը լինի: Արև. բիւրօի գետնաքարչութիւնը այն աստիճանի հասաւ որ, նրա սաները ամենայն ստորութեամբ սողացին մեր բնակարաններից ներս և գալարվեցին Միհրանի անկողնի շուրջը և իրենց դժոխային սրտերից ցաւակցութիւններ յայտնեցին մեր վիճակին, իրենց թունաւոր շրթունքներով համբուրուեցին մեզ հետ, և մինչև իսկ ապառաժ աչքերից արտասուքներ թափեցին մեր առաջ. օ՛, այս բոլորը յիշելով, իմ մէջս յարուցվում է, զզուանք, միմիայն զըզուանք:

Մեր վրայ բարդուած կեղծ կնիքի և դրամաշորթութեան մեղադրանքի մէջ թէ ո՛րչափ ճշմարտութիւն կայ ալ իւրաքանչիւր մարդ կարող է հասկնալ զայն. և դրա համար է որ Ընդհ. ժողովի դատաստանական ատեանն չէ կամեցել հասարակութեան յայտարարելու մեր պատրաստած կեղծ կնիքի մանրամասնութիւնները, միայն բաւականացել է դատարկ մեղադրանքներով անուանարկել մեզ:

Երրորդ մեղադրանք. — Ընդհ. ժողովը մեզ

մեղադրել է մի շարք անուանարկիչ թուուցիկներ հրատարակելու մէջ :

Ճիշդ է . մենք տարածել ենք մի շարք թուուցիկներ , որոնցմով կամեցել ենք շեշտելու դաշնակցական ղեկավարների սնանկութիւնը . սակայն այս թուուցիկներուն տարածմանը մեծ մասամբ էլ իրենք են առիթ տւել մեզ :

Երբ նրանք մեզ արատաւորելու նպատակով լրագրական էջերից մեզ անուանում էին բախշալընդիւրներ և արտաքսուած խմբապետներ . շատ բնական է որ իրենք էլ մեզնից պիտի լսէին Արև . բիւրօյի փոխարէն — «Արև . շանտաժիստ» — բառերը : Որովհետև Միհրանները Տաճկաստանի մէջ կորցրել էին տուն ու տեղ , հայր-հօրեղբայրներ , նիւթական միջոցներ և շատ ազգականներ , իսկ Դաշնակցութեան շարքերի մէջ էլ 16 տարիներ գործել են և երկար ատեն տառապել են բանտերի , տանջանքների և թշուառութիւնների մէջ , նաև կըռիւնների վայրն էլ թողուցել են շատ ընկերների :

Ահա մէկ օրէն միւսը երբ այսպիսի անցեալով Միհրանները Դաշնակցութեան մէջ բաղդախնդիրներ են դառնում այն դէպքում , ինչո՞ւ չպիտի լինի Արև . Բիւրօն Դաշնակցութեան մէջ «շանտաժիստ» , երբ նրանք յեղափոխական գործ է դուրս , միմիայն յեղափոխական վարիչներ են յորջորջուել , նրանց ո՞ր արժանիքը , և ո՞ր զոհաբերութիւնը մեզ պիտի ամաչեցնէր որ մենք իրենց ճակատին չ'առէինք իրենց արժանի ածականները :

Չորրորդ մեղադրանք . — Այս մեղադրանքը այն է եղել որ հրատարակել ենք «Մեղադրական

ակտ» և «Զին . տիկտատուրա» վերնագրով թուուցիկները , որոնցմով մտադիր ենք եղել բռնի միջոցներով գրաւել Դաշնակցութեան գոյքը և հաստութիւնը :

Ենթադրենք որ մտադիր ենք եղել , այս բոլորը անելու , բայց աշխարհի ո՞ր դատարանը օրէնք է ունեցել դեռ ևս չի գործուած յանցանքի համար պատիժներ տնօրինել մարդկանց :

Այդպիսի օրէնքներ ունեցաւ միայն Դաշնակցութեան Դ . Ընդհանուր Ժողովի դատաստանական չարագործ ատեանը , և նա առանց վարանելու արձակեց իր մահապաշտները , յանցաւորների բացակայութեանը :

Դ . Ընդհ . Ժողովի կողմից «Հ . Յ . Դ . ահաբեկիչ մարմինը»ի այս չարագործ խմբակը՝ կովկասի մէջ հաւաքելով իր շուրջը ոճրագործների վարձկան խմբերը , որոնք երկար ամիսներին թացքում վարձատրվում էին յատկապէս այդ օրուայ համար , որոնք իրենց հրէշային ոճիրների սարսափներով ըսկըսան ահաբեկել կովկասի ամէն մի անկիւնը , և հասարակութիւնը ապշած դիտում էր կատարուող ենիչէրիութիւններին :

Թիֆլիսից Միհրանի մեկնիլը դէպի Արմաւիր , յոյժ նպաստաւոր առիթ մը եղաւ չարագործ խմբակին կատարելու իր առաջին յարձակումը , նախ՝ Միհրանի վրայ որպէս զի այդպիսով կտորած լինի հակառակորդ բանակին ղեկը :

Տասը հոգուց բաղկացած վարձկան խումբը մի ամբողջ ամիս լրտեսելէ , և ամենաստոր դաւադրութիւններ պատրաստելէ յետոյ , յաջողվում է

մի գիշերուայ մթութեան մէջ գաղտագողի մօտե-
նալ եկեղեցու պարիսպների առաջ որ տեղ կանգ-
նած են եղել Միհրանը և ընկերները. չարագործ-
ները այդ պահուն համազարկ են պարպում մե-
րոնց վրայ. համազարկը կրկնվում է մի քանի ան-
գամներ ևս, այնտեղ անմիջապէս սպանվում է
Վարդապետեանցը, մահացու կերպով վերաւորվում
է կոփեցի խէչօն, և երեք ծանր վէրքերով էլ վի-
րաւորվում է Միհրանը, նրանց կողմից էլ վիրա-
ւորվում է երկուսը: Յաջորդ օրը հեռագիրը մեզ
տեղեկացուց Արմաւիրում կատարուած դէպքը.
չէՖերը անմիջապէս հասարակութեան մէջ լուրեր
տարածել տուին որ «Միհրանականները իրար են
կոտորել Արմաւիրի մէջ» . կատարուած դէպքը
Թիֆլիսի հասարակութիւնը յուզեց, բայց այդ օրը
Թիֆլիսի մէջ անցաւ խաղաղ:

Յաջորդ օրը Հաւլապարում մեր և նրանց խում-
բերը ունեցան մեծ զինուած ընդհարում. այդ կը-
ռիւի մէջ մեր կողմից սպանվեց Վասիլը, իսկ նը-
րանց կողմից սպանվեց երկուքը: Թէ՛ Արմաւիրի
դէպքը և թէ՛ Թիֆլիսի ընդհարումը մեր ընկերնե-
րի վրայ թողուց իրստ ճնշող ապաւորութիւն:

Վասիլի սպանութիւնից վերջը հակառակորդ-
ները սկսան բանակցիլ մեր աչքի ընկնող ընկերնե-
րի հետ. նրանք իւրաքանչիւրի հետ խօսում էին
առանձին, խօստանալով կեանքի ապահովութիւն
եթէ իրենց կողմը անցնին, իսկ հակառակորդնե-
րին էլ սպառնում էին անխուսափելի մահը:

Շնորհիւ այս ձևի բանակցութեան, մեր ընկեր-
ների մէջ առաջ եկաւ լքում և յուսահատութիւն,

որովհետև նրանք բացարձակ տեսնում էին հրա-
պարակի վրայ սաւառնող Դաշնակցական վայրա-
գութիւնը: Չորրորդ օրը ընկերների մի մասը հա-
մաձայնուեցին նրանց առաջարկներին, և անցան
հակառակ կողմը, իսկ մի քանիսն արհամարհելով
հակառակորդների բռնութիւնը՝ յարմար դատեցին
որոշ ժամանակով հեռանալ Թիֆլիզից:— Հակա-
ռակորդների աչքի փուշը Թիֆլիսի մէջ մնացի մի-
նակ էս, այս անգամ նրանց խուլիզանական ամ-
բողջ ուժը ուղղուեց իմ դէմ, ինձի հետ կար նաև
20 հոգուց բաղկացած մի խումբ, որոնք պատրաստ
էին ամէն րոպէ չափուելու հակառակորդի հետ:

Պայքարի ամբողջ ընթացքում մեր ընկերները
այնպէս էին համոզուած որ, հակառակորդները
երբ էլ լինի, մեց ՚ետ չափուելու են գէնքի ու-
ժով, և այս անելու համար նրանք սպասում էին
յարմար ժամանակի:

Մեր ժողովներում շատ անգամներ ընկերների
կողմից առաջարկներ է եղել որ նախայարձակ եղո-
ղը նախ մենք լինինք, սակայն ընկերների այսպի-
սի առաջարկները երբ որոշ գոյն էր ստանում այն
ժամանակ այդպիսի մտքերի դէմ հակառակող ըն-
կերներից ամենախիստը էս էի լինում, եւ ա-
մենակիժու խօսքերով յարձակվում էի այս
ու այն ընկերով վրայ, խափանելու նրանց առա-
ջարկները, թէև ինքս էլ համոզված էի որ հակա-
ռակորդների մէջ այսպիսի տրամադրութիւններ և
համոզմունքներ կան, բայց Շխալու սպանութիւ-
նից յետոյ չէի կարող հաւատալ, որ նրանք ընկե-
րասպան սուրը դարձեալ կը վերցնեն մեր վրայ:

ես իմ այս հաւատքի մէջ մինչև վերջը համու-
 ւած՝ ամէն անգամ խափանել եմ իմ ընկերներին
 առաջարկները, սակայն հակառակորդների կատա-
 րած վերջին ստոր սպաննութիւնների առաջ այլևս
 համբերել չէի կարող, և պատրաստ էի ամենայն
 հաճութեամբ ձեռքովս վերցնելու այն սուրը որին
 ես ամբողջ հոգով ատոււմ էի, չնայած որ ես պատ-
 րաստ էի մի րոպէ առաջ թափելու իմ երակներին
 մէջ եղած վրէժի արդար ցասումը, բայց դարձեալ
 վարանում էի, որովհետև հաւանական էր որ իս-
 կական չարագործների տեղ բոլորովին անմեղ մար-
 դիկ ընկէին մեր ընդհարումներով. ահա այսպիսի
 մտածմունքով ես ստիպուեցայ իմ մօտ եղող ըն-
 կերներին համոզելու, որպէս զի հեռանան ինձ
 մօտից: Ընկերները խիստ դժկամակութեամբ ըն-
 դունեցին իմ առաջարկը. նրանք չէին կամենում
 որ այսպիսի մի վտանգաւոր դրութեան առաջ ինձ
 թողնէին միայնակ, նրանք ինձ ստիպում էին որ
 գոնէ մի հոգու չհեռացնեմ, բայց ես յայտնեցի
 նրանց խորին շնորհակալութիւնս և հեռացրի. այ-
 նուհետև ես մնացի միայնակ մեր փոքրիկ Քրիս-
 տափորի հետ:

Ընկերներին հեռացնելու իմ վերաբերմունքը
 հակառակորդներին թէ՛ ուրախացուց և թէ՛ զար-
 մացուց: Այս միջոցին ահաբեկիչ մարմինը ծան-
 րանալով իրենց կողմը անցնող մեր նախկին ըն-
 կերների վրայ, նրանցից պահանջում էր «Զին-
 արհուրդ»ի կնիքը, հաշիւները և զէնքերը: Նրանք
 թէև ասել էին որ այդ բոլորը Յարէթի տրամադ-
 րութեան տակ է գտնվում, այնուամենայնիւ,

խուլիզանական մարմինը նրանց օձիքը բաց չէր
 թողնում, և ստիպում էր նրանց որ Յարէթէն պա-
 հանջեն: Խուլիզանների սպառնալիքի տակ, նախկին
 ընկերները ստիպվում են մի նամակ գրել ինձ,
 որով խնդրում էին ինձմէ որ յանձնեմ պահան-
 ջուած իրերը: Նրանց նամակը ստանալով ես մի
 երկտողով մերժեցի այդ առաջարկը:

Մի քանի օր վերջը ես մտադրուեցայ, Թիֆլի-
 սից մեկնելի դէպի Պիատիզօրօսկի, Միհրանի մօտ,
 որը ծանր վէրքերով պառկած էր հիւանդանոցում:
 Կէս օր անցել էր սպասում էի Քրիստափորին որ
 մի քանի նամակի ծրարներ բերել տայի:

Քիչ վերջը ներս մտաւ Քրիստափորը, և յայտ-
 նեց որ «փողոցի վրայ, մի խումբ մարդիկ, ուղե-
 ցին ինձ բռնել բայց ես մի կերպ փախայ»: Քրիս-
 տափորի հետ պատահած անցքի առթիւ, ստիպ-
 ւեցայ ես ինքս գնալ ծրարները բերելու, և երբ
 կամենում էի դուրս գնալ, մեր Քրիստափորը
 խնդրելով ասաց. — «Եղբայր, դո՛ւ մի՛ գնա. քեզ
 հետ կարող է վատրան պատահել»: Նրա խօսքին ու-
 չադրութիւն չդարձնելով գնում էի, այս անգամ
 նա՛ աչքերը լեցուած կրկին խնդրեց որ դուրս չի
 գնամ. իսկ ես յանդիմանելով նրան՝ դուռը վրա-
 յից ծածկելով դուրս գնացի. իմ յետևից աննկա-
 տելի կերպով սենեակից դուրս է գալիս նաև Քր-
 իստափորը: Երբ գլխաւոր փողոցի վրայ հասայ,
 սրճարանի առաջ ասայ մի խումբ վարձկանների,
 որոնք ինձ տեսնելով սկսան նախապատրաստու-
 թեան: Նրանց կարևորութիւն չտալով, դիմեցի
 քիչ հեռու գտնուող խանութը, պահանջելով մի

քանի ծրարներ և անմիջապէս դարձայ փողոցի վրայ դիտելու ինձ հետապնդող չարագործ խմբի գործողութիւններին. նրանք մի քանի մասերի բաժնուած սպասում էին իմ դուրս գալուն:

Իմ տեսած չարագործներից զատ կան եղել նաև փողոցների մուտքի վրայ սպասողներ, որպէս զի որ փողոցի վրայ դառնալու լինիմ ինձ դիմաւորէ անխուսափելի մահը:

Րոպէն ճնշող էր. խանութի մէջ երկար ընկածներ սպասելու համբերութիւն չունէին. ես մտածում էի մի ընկալ առաջ առանց դէպքի հեռանալ ինձ շրջապատող վտանգից, ուստի ստանալով ծըրարները խանութից դուրս եկայ չորս կողմս դիտելով. հագիւ մօտեցել էի դեղարանի դրան, տեսայ որ այնտեղի կանգնողները բարձրացրին իրենց զէնքերը:

Նրանց զէնքերի պայթիւնի հետ պայթեց նաև իմ զէնքը: Ահա այսպէսով ամէն կողմից իմ վրայ կրակվում էր զէնքեր. «ՄԵՆՔ ԱՅԴՏԵՂ ԹԻՖԼԻՍԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՆ ԷՆՔ Ա.ՁԱՏՈՒՄ», հրապարակի վրայ գտնուող մակագէտները վայրկենապէս փակուեցին. գարատաւօն և նրա կողքին կանգնող կողակը թողուցին մեզ և փախան, ու տակաւին մեր կռիւը շարունակվում էր փողոցի մէջ:

Այդտեղ ես վիրաւորուեցի ազդերիցս, իսկ յարձակվողների կողմից վիրաւորուեց երկուքը: Թէև զէնքերի դադարումից յետոյ դէպքի վայրը եկաւ կոզակների խումբը, բայց ես արդէն պահուած էի հարևանների մէկի բնակարանում:

Իմ վէրքի մէջ մնացել էր գնդակը, բայց կառավարութեան հարցուփորձից խուսափելու նպատակով ստիպուեցայ չգնալ հիւանդանոց: Երեկոյան բարեկամներիցս մէկը պատմեց իմ վրայ յարձակողների խայտառակութիւնները. ահաբեկիչները իրենց յարձակումից վերջը խմբով գնում են գինետանը, և սկսում են արբեցողութեան: Երբ մինակ մնացի իմ այդ վիճակի մէջ ես զգացի խոր ցաւ, այդ ընկալին պատրաստ էի ամենայն անկեղծութեամբ ներելու իմ կեանքը խլել փորձողների յանցանքը, որովհետև նրանք խեղճեր էին և զըժբաղդներ. որովհետև չար մարդիկ թունաւորելով նրանց հոգիները և զգացմունքները նրանց դարձուցել էին ոճրագործութեան զէնքեր, և գործածում էին ամէն տեղ, որովհետև այդ խեղճերը առանց դատելու, կատարում էին չարագործների հրամանները իրենց կեանքի զոհաբերութեամբ:

Մարդիկ հոգով ո՞րքան խեղճ պիտի լինէին որ այսպիսի մի դէպք կատարելուց վերջը գնան նըստին գինետունը և սկսին հարբեալու: Նրանք ո՞ր աստիճանի անզգաներ պիտի լինէին որ դէպքից մի քանի ընկալ վերջը մոռանում են մտածելու կատարուած դէպքի յաջողութեան և անյաջողութեան մասին, և զինին խմելով թմրեցնում էին իրենց զգացմունքները և խիղճերը:

Այսպիսի մտածմունքներով, ամբողջ գիշերը արթուն անցուցի:

Մի քանի օրից վերջ, վէրքս դեռ բուրբուրում էր լաւացած մեր Գրիտափորի հետ Թիֆլիսից մեկնեցայ դէպի Պիտաիգորոսգի, Միհրանին մօտ, ուր

նա ծանր վէրքերով պառկած էր անկողնում :

Հիւանդանոցում նա մնացել էր ընդամէնը մի քանի օր , և ետքը փոխադրվել էր մի մասնաւոր բնակարան : «Նէմէրտ» հակառակորդները լուրեր էին տարածել որ Միհրանին պատճառով ուռմբ պիտի ձգուի հիւանդանոցում . հիւանդները այս լուրով ահաբեկուած , հաղորդում են իրողութիւնը բժիշկներին , այս պատճառաւ , բժիշկ Անգլիցեւը խնդրել էր Միհրանէն որ տեղափոխուի մասնաւոր բնակարան , խոստանալով իրեն բժշկել այնտեղ :

Պիատիգորոսկում մենք մնացինք մօտաւորապէս երկու ամիս , այդ երկու ամսուայ ընթացքում համարեա թէ կարուած էինք դրսի կեանքից , որովհետեւ մեր ապրած բնակարանի սենեակները մեծ մասամբ հակառակորդների տրամադրութեան տակ էր , և ինքնապաշտպանութեան մեր իւրաքանչիւր շարժումները ամէն ժամ հաղորդվում էր դուրսը մեզ սպասող 30 հոգուց բաղկացած տէնօրիստական խմբին , որոնց ղեկավարներն էին Շարաֆեան և Աւագեան համալսարտնականները :

Այս երկու ամսուայ ընթացքում մեր դէմ պատրաստուեց շատ դաւադրութիւններ սակայն նրանց բոլոր ձիգերը մեր ձեռք առած միջոցների շնորհիւ անյաջող անցան :

Չինայած որ գտնվում էինք այսպիսի ծանր պայմանների մէջ այնու չմտածեցինք իսկ մեր դժբութիւնը պարզել կառավարութեանը և նրա միջոցաւ հեռացնել մեր գլխից կախված սպառնալիքները , և անխուսափելի մտէր : Ահա այսպիսի ծանր պայմանների տակ , մենք համբերութեամբ , տա-

րինք մեր դէմ ուղղուած բոլոր դաւադրութիւններն և հալածանքներն , և չի կրցանք դիմել կառավարութեանը , ո՛չ թէ մտանելու այլ անկողնում պառկող վիրաւորեալի գլխից հասնող հեռացնելու :

Պիատիգորոսկում երկու ամիս ամենավտանգաւոր օրեր անցնելուց վերջը , գիշերուայ մէկի մէջ հեռացանք հոնկից : Միհրանի ազդրի վէրքը դեռ լաւացած չէր , նա մինչև իսկ ուսափայտերի վրայ կանգնելու անկարող էր . կէս գիշերից վերջ ահադին դժուարութեամբ տեղափոխեցինք նրան կայարանը , և նոյնքան դժուարութեամբ էլ տեղաւորեցինք գնացքի մէջ :

Գնացքը շարժուեց բաւական վերջը Միհրանը յանկարծ յիշեց որ , իր փողամանը մոռացել է սենեակում սեղանի վրայ , փողի կորուստը մեծ չէր , բայց մենք գտնվում էինք այնպիսի պայմանների մէջ , որ այդ փողը պիտի փրկէր վեց մարդու կեանքը : Փողամանի մէջ մօտաւորապէս կար 380 ռուբլի , առկէ գատ սենեակում մոռացել էինք նաև կարի մի մեքենայ և մի վերմակ : Այս կորուստով , մեր մտածմունքները , սկսաւ աւելի սաստկանայ , մեր բոլորի վրայ կը գտնվէր հազիւ 18 ռուբլի , որը բաւական չէր , մինչև իսկ շոգեկառքի տոմսակների գնման , այսպիսի մտածմունքներով հասանք «Մէնէրէլնի» կայարանը : Մէնէրէլնիից որոշեցինք յետաձգել ճանապարհորդութիւնը , սրպէս զի մեզնից մէկը վերադառնայ Պիատիգորոսկի մոռացուած փողի համար :

Մէնէրէլնիից , մեր Քրիստափորին հետ վերադարձանք Պիատիգորոսկի , դեռ չէր լուսացել ,

Հասանք մեր ապրած բնակարանը, լուսամուտից երևում էր տանտիրոջ սենեակի ճրագը, սկսանք բաղխել դուռը, մեր ձայնը լսելով, նա իսկոյն Հանգեցուց ճրագը, և մօտաւորապէս, հինգ րոպէ ուշացած Հազիւ եկաւ դուռը բանալու։ Նրան յայտնեցի մեր կորուստի մասին, բայց նա բոլորովին ուրացաւ։ Շատ ստիպումներից վերջը, խոստացայ իրեն նուէր տալ 100 րուբլի, սակայն նա դարձեալ ուրացաւ։ մենք երկար չէինք կարող սպասել, և դրա համար էլ, վերցրինք մեր մոռացած մեքենան և վերմակն ու անմիջապէս մեկնեցանք Մէնէրէլնի, ճանապարհորդութեան ընթացքում Եկատէրօնատարում, մի բարեկամից ստացանք 25րուբլի օգնութիւն և այնտեղից Հասանք Նովրոսկի քաղաքը։

Նովրոսկուց Միհրանը, Չարուհին և Քրիստափորը, մեկնեցան դէպի Եալդա իսկ ես էլ Յովհաննէսի և Սերգոյի հետ վերադարձանք, կրկին Պիատիգորոսկի։ Մեր վերադառնալու նպատակն այս էր, որ գուցէ մեզ յաջողուէր յետ ստանալ մեր կորուստը, իսկ հակառակ դէպքում, գնալ Արմաւիր և մեր բարեկամներից խնդրել դրամական օգնութիւն։ Պիատիգորոսկի կորուստը կրկին չյաջողվեց յետ ստանալ, այնտեղից մենք անցանք Արմաւիր։ Ճանապարհին նոյն գնացքով, մեզ հետապնդում էին 10 հոգուց բաղկացած տէնօրիստական խումբը, որոնք ծանօթ լինելուն պատճառաւ, գընացքի երկրորդ կարգի մէջ պահուել էին, երթեւեկութիւն չանելով կայարանների առաջ։ Այդ խմբի մէջ էր Երևանցի Մարտիրոս անունով հրէշը։

Այդ օձը մի քանի անգամներ Միհրանին խաբելու յաջողութիւն ունեցել էր, և նրա կեանքի դէմ կատարուած դաւադրութիւնների մէջ էլ խոչոր դերեր խաղացել, այնուամենայնիւ, նա Միհրանին հաւատացրել էր ինքզինք որպէս ջերմ բարեկամ և զաղափարակից։ այդ սողունի հետ ես էլ ծանօթացայ վերջի ժամանակները Պիատիգորոսկում, մեր սենեակի մէջ, և այդ մի անգամուայ ծանօթութիւնն էլ վերջը առիթ դարձաւ ինձ ևս չարաչար խաբելու, որի զարհուրանքը մինչև մահ չի մոռցուի։

Ճանապարհի ընթացքում սողունը մտաւ իմ կեցած գնացքը, և որպէս ծանօթ սկսաւ խօսել ինձ հետ, մի քանի բաներ ասելուց վերջը, յայտնեց որ նախագծականները ուզում են ինձ ևս ըստ պաննել որպէս ընկեր Միհրանին, վերջացնելով իր նենգութիւնները, հեռացաւ մեր մօտից։ երեկոյան Հասանք Արմաւիր։ գիշերը մի քանի բարեկամներ տեսնելուց վերջը, մենք գիշերեցինք քաղաքի ծայրում մի ծանօթի տանը։

Մեր տեղը ոչ ոք չէր գիտեր, միայն առտուն սողուն Մարտիրոսը կրցաւ հասկնալ։ Առաւօտեան Ենովք Տ. Աւետիքեանցից ստացանք 50 րուբլի օգնութիւն, բացի այդ՝ խոստացաւ որ աւելի խոչոր օգնութիւն հեռադրով կը հասցնէ մեզ։

Դրանից վերջ գնացինք մեր հիւրընկալուած տունը և քնեցինք։ Կէս օր անց տանտէրը ձայն տուեց մեզ, և յայտնեց որ ոստիկանութիւնը մեզ հարցուցեր է, տան տէրը ոստիկանութեան հեռացրել է, հաւատացնելով որ ինքը այդպիսի հիւրեր

չունի:

Մասնութիւնը հակառակորդի կողմից էր, այդ մասին հարկ չկար տարակուսիլ, ձերբակալութիւնից ազատուելու համար որոշեցինք հեռանալ, բեռնարարձ գնացքով, հակառակորդներից չի տեսնուելու համար անցանք քաղաքի խուլ փողոցներով, և մտանք կայարան. կէս ժամ վերջը գնացքը պատրաստուեց շարժուիլ, մեր Սերգոն, հասակով, և դէմքով խիստ փոքր էր երևում, նրա ձեռքն էր մեր ունեցած ճանապարհորդութեան ամբողջ իրերը, նա բարձրացաւ գնացքի վրայ, իսկ նրան հետևում էր Յովհաննէսը, այդ ժամանակ ժանտարմներից մէկը հեռուից մատի նշանով կանգնեցրեց Յովհաննէսին, ես այդ նկատելով մտայ կայարանը, միւս դռնից հեռանալու, բայց կայարանի մէջ մի ուրիշ ժանտարմ կանգնեցրեց ինձ ևս, ձերբակալուեցինք ես և Յովհաննէսը իսկ փոքրիկ Սերգոյին յաջողվեց խուսափիլ. մեզ տարին կայարանի մէջ գտնուող ժանտարմական բաժանմունքը, և սկսան խուզարկել մեզ, մեր վրայից առան երկու լաւ ատրճանակներ և մեր վրայի փողերը:

Մեզ հետապնդող տէնօրիստական խումբը երբ դժուարացել են մեր սպանման գործի մէջ, նրանք սողուն Մարտիրոսի միջոցաւ մեզ մատնել են տալիս կառավարութեան որպէս անիշխանականների, որպէսզի Միհրանին թողնելով բոլորովին անպաշտպան, իր անկողնի մէջ, իրենց յաջողուի Միհրանին սպանութիւնը:

Ժանտարմիան ընդմիջորի հարցերով սկսուեց մեր քննութիւնը, այդ ժամանակ ներս մտան

Մկրտումեանցը և Ենովք Տ. Աւետիքեանցը, որոնք լաւ ծանօթ լինելով բողոքականներին՝ եկել էին միջամտելու մեր ազատմանը, քննութիւնից յետոյ մեզ տարին բանտը, ամբողջ գիշերը քնել չի կարողացանք, մի կողմից գայրանում էինք ստոր հակառակորդի յանցաւոր միջոցների վրայ, իսկ միւս կողմից, մտածում էինք որ՝ մեր բանտարկութեամբ Միհրանը մնաց բոլորովին անպաշտպան, այսպիսի մտածմունքներով Յովհաննէսի հետ, լուսցնուցինք գիշերը: Առաւօտ բանտը մեզ այցելելու եկաւ մեր Սերգոն, և պատմեց իր գլխուն անցածը, մեր ձերբակալութիւնից վերջը, նրան էլ ձերբակալում են հակառակորդները, երկար տանջելուց և ծեծելուց վերջը, երբ տեսնում են որ նա Միհրանին ո՛ւր գնալուն մասին ոչինչ չէ յայտնում, նրան ձգում են ներքնայարկը: Այնտեղ նա ժամերով սպասելուց յետոյ, նրան արձակում են, մի ծանօթ հացագարձի խնդրանքով: Երբ լսեցի Սերգոյի պատմութիւնը, նրան ասացի որ, գնա, Տէր Աւետիքեանցի ճանապարհածախս առ և մեկնիր Եալդա, թէ՛ դու ազատ կը լինիս այս տեղի բռնութիւններից և թէ՛ մեր մասին էլ կը տեղեկացնես Միհրանին: Սերգոն գնացել էր Տէր Աւետիքեանցի մօտ, բայց նա յայտնել է, որ նրանք շուտով բանտից պիտի ազատուին: Կէս ժամ չանցած Սերգոն ուրախ դէմքով եկաւ մեզ մօտ և յայտնեւ մեր ազատութեան մասին, մի քանի բոլակ վերջը գնաց մեր մօտից: Խեղճը գնաց, միայն այլևս իրար չտեսնելու դժբաղդութեամբ:

Երեկոյեան, գնացքը մեկնելու ժամանակ, բան-

տից մեզ տարին կայարանը, այնտեղ բողոքաբեր
 յայտնեց որ, ձեզ ազատում եմ բանտից, միայն
 Արմաւիրի մէջ այլևս չպիտի մնաք, մինչև գնացար
 շարժուիլը, ծանօթ մարդիկ ուղարկեցի Սերգոյին
 գտնելու համար, բայց ոչ ոք չի կրցաւ գտնել
 դժբաղդ Սերգոյին:

Ժանտարմի հսկողութեամբ մեզ մտուռին
 գնացքը, մի երկու բոպէ վերջը, մենք հեռանում
 էինք Արմաւիրից, թէև մի կողմի ուրախ էինք
 մեր ազատմանը, բայց միւս կողմից՝ Սերգոյի մա-
 սին ինկանք խոր մտածմունքների մէջ, որոչ կար-
 ծիք չէինք կարողանում յայտնել: Բացի Սերգո-
 յից մենք մտածում էինք նաև մեր անզէն լինելու
 մասին, որովհետև կառավարութիւնը չվերադար-
 ձուց մեր վրայից առած զէնքերը:

Արմաւիրից հասանք Նովրոսկի, այնտեղից շո-
 գենաւ մտնելու պատրաստութեան վրայ էինք,
 այդ ժամանակ մեզի մօտեցաւ հրէշ Մարտիրոսը
 մի ընկերի հետ, որը մեզ բոլորովին անծանօթ էր,
 հրէշը սկսաւ իր նենգութիւններով ինձ մոլորեցը-
 նել, ասաց որ «Արմաւիրի մէջ Դաշնակցական խէ-
 չօն ուզեց ինձ սպաննել տալ, ես նրա ձեռքիցը
 հազիւ ազատուեցայ»: Նրա հաղորդած այս լուրը,
 ես էլ լսել էի նաև Արմաւիրի մէջ ուրիշներից, և
 դրա համար էլ հրէշի խօսքերին բնաւ չի կասկա-
 ծեցի:

Երբ հրէշը տեղեկացաւ որ գնում ենք Եալդա,
 նա պատրաստակաւութիւն յայտնեց մեզ հետ ըն-
 կերանալու, և աւելցուց որ «թէ իմ դրուութիւնը
 կ'ապահովուի և թէ ձեր ինքնապաշտպանութիւնն

էլ ինձմով կ'աւելանայ»: Ահա այսպէս հրէշի հետ
 ընկերանալով գնում ենք Եալդա, նրա ընկերը
 Արմաւիրից չէր քէզախօս հայ մ'էր Մօսէ անունով,
 շոգենաւի մէջ հրէշը իր ընկերոջ բարեմասնութիւն-
 ները բացատրում էր ինձ, և ինքը Արմաւիրի մէջ
 ամբողջ ամիսներ նրա հետ եղբօր պէս են ապրել:
 Մօսէի դրութիւնը կառավարութեան կողմից վը-
 տանգուելով նա ստիպուած է մի ժամանակ անծա-
 նօթ քաղաքի մէջ ապրելու, Մօսէն իբր թէ ըս-
 պաննած է եղել Արմաւիրից կրավչէնկօին (քաղա-
 քապետ) կրավչէնկօի սպաննութեանը, ես ալ Ար-
 մաւիրումս էի, սողունը իր նենգութիւնները այն-
 պիտի գոյներով էր ծած կուժ, որ ոչինչ հասկանալ
 կարելի չէր լինիր:

Եալդայում մերոնք սենեակ են վարձել քաղա-
 քից դուրս, Տէրէքովում: Հրէշը Միհրանին էլ
 նախածանօթ լինելով դրաւեց մեր կատարեալ
 վստահութիւնը, և նրանք մինչև վերջը ապրեցին
 մեզ հետ մէկ սեղանի վրայ և մէկ բնակարանի
 մէջ, միասին էինք խորհրդակցում, և միասին էինք
 բաժանում մեր ցաւերը, և այդպէս մի ամ-
 բողջ ամիս: Սերգոյին մասին թէ՛ Նովրոսկից և
 թէ՛ Եալդայից նամակներ գրեցինք Արմաւիր,
 բայց նրա մասին ո'չ մի տեղեկութիւն, չկրցանք
 ստանալ, երկու շաբաթ վերջը բռշտայից ստանում
 ենք մի ուէ նամակ, շփոթուած, պատուում ենք-
 ծրարը և կարդում ենք հետևեալ տողերը. «Չար
 մարդիկ խլեցին Ննովք Տ. Ա. Ետիքեանցի կեան-
 քը, չգիտենք նա ո՞ր մեղքի համար սպանուեց
 չարագործներից մէկը սպաննուած է և մէկն էլ

ձերբակալուած օգնութիւն այլևս մի սպասէք» : Ենովք Տէր Աւետիքեանցի սպաննութիւնը սարսափելի ոճիր էր, չարագործները նրան սպաննել էին մեր պատճառով, որովհետև նա համարձակուել էր ազատելու իրենց մատնած բանտարկեալներին :

Տեսէ՞ք թէ «սուրբ» Դաշնակցութիւնը ինչպէ՞ս գործերի համար սպաննում է մարդկանց, սպաննել մէկին, որի յանցանքը եղել է, միմիայն բանտարկեալի տղատութեան պահանջուած գոհողութիւնը նուիրելու մէջ, այդ յեղափոխական մի կազմակերպութեան կողմից միանգամայն մի մեծ հրէշութիւն չէ՞ մի :

Այս անգամ մեր նիւթական չքաւորութիւնը ստիպեց ինձ այդպիսի պայմանների տակ աշխատիլ, ես սկսայ գործ վերցնել Պետրոսեանի կօշկակարի արհեստանոցից, և աշխատում էի մեր սենեակում : Դրութիւնը խիստ ծանր էր. մի կողմից Դաշնակցութեան խուլիքանական ոյժը, ամիսներէ ի վեր, լարուեր էր մեր դէմ և տարածում էր իր սարսափները մեր շուրջը, իսկ միւս կողմից նիւթական չքաւորութիւնը, մեզ ձգել էր մոլորութիւնների մէջ, երբորդ կողմից Միհրանի հիւանդ վիճակը, մեզ բանտարկել էր այնպէս որ, մի կողմի վրայ ո՛չ մի քայլ առնելու անկարող էինք : Ես գործի սկսելով բոլորովին կարուեցայ դըրսից, անցաւ մի քանի օր, լսեցինք որ Եալդաշյում տէնօրիստական խմբեր են եկել, այս լուրից յետոյ մեր տունը ապրող օձը հաղորդում է հետևեալ լուրը. «Դաշնակցական Խէչօն երկու ընկերներով ձերբակալուեր են Նովրոսիի մէջ, նրանց

մօտից գտնուել են զէնքեր, Արև. բիւրօի յանձնարարականը, և զանազան վտանգաւոր թղթեր, նրանք Եալդա գալիս են եղել, բայց մեր բաղդիցը ձերբակալուեցին, նրանց ազատման համար բիւրօն հեռագրով 1000 ռուբլի է փոխադրել, սակայն նըրանց ազատուիլը անկարելի է եղել, օձի այս անգամուայ հաղորդած լուրը բոլորովին ճիշտ էր. նա երբեմն իր սուտ լուրերի հետ հաղորդում էր նաև ճիշտ լուրեր, որպէսզի դրանով մեր վստահութիւնը գրաւած լինի : Վերջին օրերում մեր բնակարանից անյայտացան օձի ընկերը և մեր Յովբնակարանից անյայտացան օձի ընկերը. օձ Մարահանէսը, նրանց մասին հարցնում ենք. օձ Մարտիրոսին նա բոլորովին անտեղեակ էր ձևացնում իրեն, միայն զանազան կարծիքներով աշխատում մեր մէջ կասկածներ յարուցանել :

Մեր խիստ դառն պայմանների ազդեցութեամբ որոշ կարծիք չկրցանք ունենալ, մեզ այնքան հաւատարիմ ընկերով անյայտութեան մասին, և նրա կորստեան մանրամասնութեանը մինչև վերջը մընացինք անտեղեակ : Մինչդեռ նրա հետ պատահել էր այնպիսի զարհուրելի անցք, որի սարսափելի էր լուրը լսեցի միայն տարիներ վերջը Բաբերդում : Հրէշները սպաննելու պատրուակով Յովհաննէսին տանում են քաղաքից դուրս, խեղդում են ծովին մէջ, խեղճին մարմինը երկար ժամանակով չի գտնվել, մնացել է անյայտութեան մէջ :

Յովհաննէսի անյայտութիւնից մի քանի օր վերջը օձ Մարտիրոսը մեր տունը բերեց երկու ուռսջրի. նրանց մէկը կին էր և հազած էր խիստ մաքուր շորեր. ուռսները մեզ հետ ծանօթանալով,

սկսան խօսիլ . նրանք Միհրանին ասացին որ «թէ և անձամբ ծանօթութիւն չունէինք, բայց ձեր կեանքին և անցեալին ծանօթ լինելով, հետաքրքրվեցանք ձեր տեսութեանը»: նրանք մեզ հետ խօսեցին խիստ ուրախ, կարծես նախածանօթներ լինէին: Պետրէն մեր վիճակին խիստ ցաւակցեց, և գնալու ժամանակ Միհրանին ասաց որ, եթէ դրամական կարիք կ'ունենաք կարող էք ինձ դիմել, ես պատրաստ եմ օգնելու ձեզ: Այդ օրից անցաւ ութ օր, Քրիստափորը կէս օրուայ ճաշից վերջը գնաց քաղաք ման գալու, մեր տունը ապրող հրէշը պազարից նրան տանում է Պէտրէի ապրած հիւրանոցը. դահիճները անմեղ երախային շափազանց յարգում են, և վերջն էլ թուղթ են խաղցնել տախինը տարեկան թամար անունով մի հայ աղջկայ հետ, այդպիսով մթացնում են օրը, երեկոյեան ուշ ժամանակ Քրիստափորի և հրէշ Մարտիրոսի հետ տուն եկաւ նաև ոռւս Պետրէն:

Քրիստափորի ուշանալուն համար, մենք մտադիր էինք յանդիմանել նրան բայց Պէտրէի ներկայութիւնը արգելք դարձաւ: Պէտրէն իր ուրախ խօսակցութեամբ սկսեց զանազան բաների վրայ խօսիլ. իր խօսակցութեան մէջ նա դարձաւ Քրիստափորին և ասաց «Փոքրիկ Արմիանկան քեզի պիտի տանք». նրա այս խօսքերից մենք ոչինչ չհասկացանք. մի քանի ժամեր նստելուց վերջը նա առաջարկեց հրէշ Մարտիրոսին որ գնանք միասին դիտելու ելեքարական նկարները:

Պետրէն գնալու ժամանակ խնդրեց Քրիստափորէն որ առաւօտ հիւրանոց բերէ սենեակի պա-

տից կախուած Սերգոյի անբաղդացած մանտլինը:

Այդ գիշեր հրէշը այլևս տուն չվերադարձաւ: Յաջորդ օրը Քրիստափորը վերցնելով Մանտալինին, գնաց պազար. նրա գնալուց վերջը ես սկսայ աշխատանքի, կէս օր վերջը հրէշը միայնակ տուն եկաւ, նրանից հարցուցինք Քրիստափորին. ասաց որ Արմենակի խանութի առաջ կանգնած էր, հիմայ կուգայ. բաւական նստելուց վերջը առանց ճաշելու գնաց, մի քանի ժամից յետոյ, նա դարձեալ եկաւ սենեակ, և սկսաւ հաղորդել մի կարգ նենգ լուրեր: «Իբր թէ Արև. բիւրօն մօր նախկին ընկերներին կաշառելով, ուղարկել է Եալդա, թէ որպէս նախածանօթներ մենք, կը վստահինք նըրպէս նախածանօթներ Միհրանի սպանութեանը: Այսպիսի մի կարգ նենգ խօսքերից վերջը աշխատում էր մի հնարքով, վերցնել Միհրանի բարձի տակ եղած ատրճանակը, իր նպատակին յաջողելու համար, գրպանից հանեց մի փամփուռա, ջողելու համար, գրպանից հանեց մի փամփուռա և Միհրանին առաջարկեց որ, այս փամփուռից մի տեղ 20 հատ կայ. ատրճանակը տուր տանիմ փորտեղ 20 հատ կայ. ատրճանակիդ տուր տանիմ փորտեղ 20 հատ կայ. ատրճանակիդ այն ժամանակ գնեմ այս փամփուռաները:

Միհրանը տեսնելով փամփուռաը, ասաց որ այս բոլորովին անյարմար կը լինի իմ ատրճանակին, և այսպէս նրան չի յաջողուց Միհրանի ատրճանակը տանելու: Սողունը մի քանի օր առաջ իմ ատրճանակը առաւ իր վրայ, և իրենինը մեծ լինելու պատճառաւ թողուց ինձ մօտ. մի երկու օր վերջը վերադարձուց իմ ատրճանակը ինձ, զոր նա տարել և փճացրել էր ասեղը, ես բոլորովին ան-

տեղեակ, փճացած ատրճանակը դրի մէջքս. իմ ատրճանակի հետ պատահած անցքը մենք վերջը լսեցինք քննիչից, այդ բանը պարզել է ոռու սղջիկը:

Հրէշը իր վերջին գալուստն, արդէն սպաննել էր խեղճ Գրիստափորին: Մարդ ի՞նչ աստիճանի գազան պիտի լինի որ ամենասոսկալի ոճիրը կատարէ, և դրանից անմիջապէս վերջը գայ կանգնի զոհի մօր առաջ, և հնարքներ մտածէ սպաննելու նոյնպէս մօրը:

Հրէշը իր նենգ խօսքերը վերջացնելով հեռացաւ սենեակից. հրէշի յայտնած լուրը մեր մէջ կասկած յարոյց, որ մի գուցէ Թիֆլիսից եկած կեղծ ընկերները հանդիպին Գրիստափորին, և նրա միամտութիւնից օգտվին տեղեկանալու մեր վիճակից, ես վար դրի ձեռքէս աշխատանքը, և գընացի պազար Գրստափորին փնտռելու: Մինչդեռ գազանները արդէն յօշոտել էին նրա մատաղ կեանքը, այս թուեաւոր մարդկանց խիղճը անգամ չի ճշաց սարսափելի ոճիրը կատարած միջոցներուն: Թէ ինչ ենք անում: Տէրէկովի ճանապարհի վրայ ինձ հանդիպեցին չորս հոգի. նրանք հագնված էին մաքուր և զլուխները ծածկած էին Փէսեր: Նրանց դեռ բոլորովին չմօտեցած ես կանգնեցի փողոցի մի կողմի վրայ, և ուշադրութեամբ զըննեցի նրանց ձեւերը, որոնք կասկածելի երևացին ինձ, նրանք իմ առաջքից անցնելով գնացին մեր բնակարանի կողմը, պազարի գլուխը հասայ, հրէշ Մարտիրոսին, և միասին սկսանք որոնել Գրիստափորին, շատ բարեկամների մօտ, հարցուփորձ ա-

նելուց վերջը մենք մտանք այն հիւրանոցը որտեղ ապրում էր ոռու Պետրէն և միւս դահիճները: Հրէշը մօտեցաւ սենեակներից մէկի դրանը և սկսաւ մի աղջկայ հետ խօսել Պէտրէի մասին. աղջիկը ասել է որ, դեռ Պետրէն չէ եկած: Հիւրանոցից դուրս եկանք և գնացինք մի ծանօթ սրճարանի առաջ, այնտեղ մի քանի րոպէ յուսահատուած ըսպասելուց վերջը յանկարծ տեսնում եմ որ հրէշ Մարտիրոսը չկայ. նրա անյայտանալուց յետոյ շարունակեցի փնտռել Գրիստափորին, երկար որոնելուց վերջը ես դիմեցի տանը ճանապարհը, ենթադրելով որ Գրիստափորը սենեակ գացած կը լինի:

Սենեակում չկար խեղճ Գրիստափորը, նրա այսքան ուշանալը մեր մէջ առաջ բերեց զանազան կասկածներ, սակայն բոլորովին չկրցանք կասկածիլ, որ դահիճները սպաննած կը լինին նրան, մի քանի րոպէ սենեակում սպասելուց վերջը դարձեալ գնացի պազար, մի ժամից աւելի փողոցները տակն ու վրայ անելուց վերջը դատարկ վերադարձայ տուն: Մարտիրոսի յանկարծ անյայտանալը, և նրա այսքան ժամերով բացակայութիւնը մեր մէջ կասկած առաջ բերեց, մի գուցէ բանտարկուած լինի Գրիստափորը Պէտրէի հետ, սրովհետև Պէտրէն էլ չէր երևում:

Քառորդ ժամ սենեակում հազիւ մնացի, այս անգամ ինձ հետ միասին սենեակից դուրս եկաւ նաև Զարուհին. կէս գիշերուայ մէջ որդեկորոյս մայրը ընկաւ փողոցէ փողոց գտնելու իր ձագուկը. մի քանի ժամեր տակն ու վրայ անելով ամ-

բողջ քաղաքը, դատարկ ձեռքով և յուսահատ վե-
րադարձանք տունն :

Քրիստափորը չկա՛ր ու չկա՛ր . մայրը սկսաւ
արտասուելով խօսելու , ո՛վ գիտէ ո՛ր գայլերը կե-
րած կը լինին իմ գառնուկը : Բոպէն խիստ ճնշող
էր և տարօրինակ կացութիւն մը կը ներկայանար
իմ աչքին . Քրիստափորը չկար , Ջարուհին ճիշ էր
բարձրացնում , իսկ Միհրանը անկարող էր նոյնիսկ
ուսափայտերի վրայ կայնելու :

Բաւական ժամանակ տխո՛ւր տեսարանը իմ
վրէժխնդիր հոգին էր կրճում , նաև յուսահատ
մտքերով կարծիքներ և կասկածներ անելուց վեր-
ջը ես գնացի բալկոնի վրայ :

Մի քանի րոպէ վերջը նկատեցի մի խումբ զին-
ւորների որոնք շրջապատում էին մեր բնակարանը ,
Բրիտաւը ամենաառաջ հարցուց Քրիստափորի մա-
սին . նրան պատասխանեցինք որ մինչև հիմա մենք
էլ որոնում էինք նրան բայց չգտանք : Կերևի թէ
բանտարկուած է :

Այնուհետև հարցուցին հրէշ Մարտիրոսի մա-
սին . հրէշին համար էլ ասացինք որ նա այս գիշեր
տուն չեկաւ , այսպիսի մի քանի հարցերից վերջը
պահանջեցին մեր զէնքերը , և տունը լաւ խուզար-
կելուց վերջը մեզ առաջարկեցին գնալ կառավար-
ութեան :

Միհրանին անկողնից վերցնելով դուրս տարին ,
մի քանի րոպէից վերջը մեզ տարին կառավարու-
թիւնը : Այնտեղ հաւաքուած էին բոլոր բարձր
պաշտօնեաները . ներկայանալով նրանց առաջ , ըս-
պարանկիւր մեզ հարցուց — ո՞րտեղ է ձեր տղան—

մենք պատասխանեցինք որ չլինի՞ թէ բանտարկու-
ւած լինի . նա ասաց որ — ո՛չ , չարագործները նը-
րան սպաննել են — նրա այս խօսքի վրայ մենք
սկսանք լալ , բայց Սպրաւնիկը ասաց որ — ինչո՞ւ
էք լալիս , եթէ կառավարութիւնը չլինէր , այս գի-
շեր ձեր երեքին ալ պիտի սպաննէին . մի փոքր
հանգիստ կացէք պարգեք եղելութիւնը , որովհե-
տև չարագործների մի մասը ձերբակալուած են ,
դուք կարո՞ղ էք ճանչել նրանց — մի րոպէ վերջը
մեր առաջը բերին մի խումբ դահիճներ շղթայ-
ւած ձեռքերով : Այս խմբի մէջ տեսանք երկու
հայ աղջիկներ , երկու ռուս աղջիկներ (որոնց մէկը
ռուս Պէտրէի հետ մի անգամ մեր սենեակը եկած
էր) , Աւագեան աղգանուծով մի հայ (որը Պիատի-
գորոսկի եղած ժամանակ մի քանի անգամ մեր
հարևանների բնակարանը եկած էր) , երկու ռուս-
ներ (որոնց մէկը Պէտրէն էր) և մի հրեայ : Կառա-
վարութիւնը նկատեց որ , մենք յուզվում ենք չա-
րագործները տեսնելով , նրանց հեռացրեց մեր մօ-
տից : Հրէշ Մարտիրոսը դեռ չէր ձերբակալուած :
Կառավարութիւնը ասաց որ , այս ոճիրի գլխաւոր
դեր կատարողը եղած է ձեր տունը ապրող Մարտօն
և նա դեռ ձերբակալուած չէ : Սպրաւնիկը ինձ ա-
ռաջարկեց , որ ես էլ ոստիկանութեան հետ միասին
փնտռեմ հրէշին :

Ես համաձայնուելով նրանց առաջարկին խընդ-
րեցի որ իմ զէնքը վերադարձնեն ինձ . Բայց իմ
խնդիրքը մերժելով ասաց որ վերջը կուտանք քե-
զի : Միհրանին և Ջարուհուն թողնելով կառավար-
ութեանը , ես միացայ ոստիկանների խմբին , և

մագերը կտրուած լինելը. այս բոլորը լսելով նա անմիջապէս գնում է քաղաք, և յայտնում է կառավարութեան կտտարուած դէպքի մանրամասնութիւնը: Կառավարութիւնը լսելով տարօրինակ դէպքի մանրամասնութիւնները մանաւանդ սպաննուողի անչափահաս լինելը և չարագործների մէջ աղջիկներ գտնուելը, այս բոլորը կառավարութեան վրայ թողնում է խիստ տպաւորութիւն: Կառավարութիւնը խիստ միջոցներով սկսում է խուցարկութեան. երկար խուզարկութիւնից վերջը կառավարութեան յաջողվում է «Ղրմսկի» հիւրանոցում գտնել երկու ուսու աղջիկներին, որոնցից մէկը կտրուած մագերով էր. խուզարկելով նրանց վերան, մէկի վրայից գտնվում է պրօվօնիկ մի ատրճանակ. ոստիկանապետը աղջիկներից խիստ սպառնալիքով պահանջում է իրենց տղամարդ ընկերների տեղը: Աղջիկներից մէկը վախցած յայտնում է որ նրանք շոգենաւ գնացին. ոստիկանապետը վերցնում է աղջիկները և անմիջապէս գնում է շոգենաւը. աղջիկը շոգենաւի մէջ մէկիկ մէկիկ ցոյց է տալիս իր չարագործ ընկերներին: Նրանց ձերբակալելուց վերջը Ղրմսկի հիւրանոցից ձերբակալում են նաև Օրիորդ կոչուող Անահիտ Բասաղամեանցին, և նրա փսքրիկ քրոջ Գ տարեկան Թամարին, որը մի օր առաջ թուղթ են խաղացրել Քրիստափորի հետ հիւրանոցի մէջ: Չարագործների մի մասը ձերբակալուում են. կառավարութիւնը անմիջապէս սկսում է քննութեան գէնէրալ Տօմբացէի ներկայութեամբ: Ռուս աղջիկը պատմել է այն բոլորը, ի՛նչ որ գիտէր թէ՛ իր

մասին և թէ իր ընկերների մասին. աղջկայ քննութիւնից վերջը ոստիկանութիւնը նրան վերցնում է իր հետ, և գալիս են մեր բնակարանը, աղջկայ առաջնորդութեամբ ոստիկանութիւնը գտնում է մեր բնակարանը և ձերբակալում են մեզ:

Հրէշի վրայից գտնուեց երկու յանցաւոր հեռագիրներ, Արմենակ Սէլֆիեանի հասցէով. ժանաարմի վարչութիւնը կարգադրեց հեռագրատան կառավարչին հետ որ Արմենակ Սէլֆիեանի հասցէով ի՛նչ որ հեռագիրներ է եկած մի ամսուայ ընթացքում պէտք է ստուգել: Մի քանի ժամից վերջ հեռագրատան սպասուորը մի թերթ թղթի վրայ հեռագիրների պատճէնները օրինակուած բերաւ յանձնեց րօղմիսդրին: Չանցաւ կէս ժամ ըսպասուորը ուրիշ հեռագիրների պատճէններ ևս բերեց:

20—14 օրուայ ընթացքում Արմենակ Սէլֆիեանը ստացել է 100ից աւելի հեռագիրներ, որոնք պարունակում էին յանցաւոր բովանդակութիւններ, որոնց մեծ մասը իսկական անուններով էր ստորագրուած. հեռագիրները ստացուել են Թիֆլիսից, Պագուից, Պաթումից, Արմաւիրից, Պիատիգորսկից: Մեր հակառակորդների սպառնութիւնները պարզելու համար դենք մի քանի հեռագիրների բովանդակութիւնները, և նրանց ստորագրութիւնները. «Պաքու սուէզտ. կարգադրութիւնները անփոփոխ է «Շահրիկեանի ստորագրութեամբ» — Անահիտի հետ ուղարկում եմ ապրանքները շուտ ծախէք» — Թիֆլիս «Խարիսխ»ի խմբագրատուն Դաիրեանի ստորագրութեամբ մի քանի

հեռագիրներ, որոնց յանցաւոր բովանդակութիւն ները յիշողութեանս չէ»։ Եւ այսպիսի շատ հեռագիրներ։

Դաշնակցական խուժանապետները մեր դէմ սկսած արշաւանքների ժամանակ մոռացել էին ուս կառավարութեան գոյութիւնը. նրանք կարծում էին, որ իրենք են Ռուսաստանի իշխողը. նրանք ազատ ստորագրութիւններով մի քաղաքից միւս քաղաքը հեռագիրներով կարգադրում էին մահապաշտներ մարդկանց կեանքերի դէմ։

Յարգելի ընթերցողներ, այժմ մի կողմ թողնենք Դաշնակցութեան ինչ տեսակի Հայկական կառավարութիւն լինելու խնդիրը Ռուսաստանում, ու նրա լոկ այս վերջին տարուայ ընթացքում կատարած խայտառակութիւնները, բռնութիւնները ու «գսւլումները» որոց մասին շատ է գրուել ու դեռ ներկայիս էլ շարունակում է գրուել Հայ մամուլի մէջ, ի հարկէ պակաս պատճառներ չէին Հայ ժողովրդի բոլոր շերտերին էլ զգուցնելու, նրանցից երես դարձնելու ու Դաշնակցութիւնը քայքայման ենթարկելու։ Ուրեմն յիմարացան առաջին անգամից որ իրենց գլխուն վրայ կայ մի միապետական կառավարութիւն, որ է ուս բռնակալութիւնը. Դաշնակցութեան այդ արարքները շատոնց աչքին առաջ պարզ կը տեսնէր, բայց մի կողմից էլ քմծիծաղին էր տալիս, և ահա այսօր Դաշնակցութեան լպիրշ արարքներուն փոխարէնը Ռուսաստանում շատ մը անմեղներ կը տուժեն։

Օ՛ր ժամանակներ, դուք ինչպիսի փոփոխութիւններ էք կատարում մարդկանց հոգու մէջ,

Շատ լաւ եմ յիշում ընկերիս մի ծաղրանքը. — 908 թուի սկիզբներում Գրիստափոր Միքայէլեանի կողմից կանչուել էինք Պաքու, մի օր Բալախանում ընկերս (Շամիրը) գնացել էր Շահրիկեանի տանը կրեոր մի հարցմունքով. Շամիրը դեռ բերանը չի բացած, Շահրիկեանը սկսեր է պոռայ — «Ի սէր Աստուծոյ, դուք իմ տանը կրակ պիտի ձգէք. հեռացէք այս տեղից» — նրա այս խօսքերին Շամիրը արհամարհանքով պատասխանում է — «Եթէ չես ուզում տանդ կրակ ընկնելը, յեղափոխական գործի հետ մի կապուի, երբ ես գործի համար իմ կեանքը կրակը ձգում եմ. թող քու տունդ էլ վառուի ինձի հետ. այսպիսի վէճով հեռանում է Շահրիկեանի բնակարանից։ Այս նոյն Շահրիկեանը մի քանի տարիներ վերջը, հեռագրի գլուխ անցած, իր իսկական ստորագրութեամբ մահապատիժներ է հրամայում մարդկանց կեանքերի դէմ, այն մարդկանց՝ որոնք իրենց կեանքերը կրակները ձգել են, երբ Շահրիկեանները մտել էին ծակէ ծակ, իրենց ստուերները պահելու ուսական ժանտարմական նկատողութիւնից։ Եւ այսօր ալ առանց ամչնալու, Օսմ. Սահմանադրութենէն օգտուելով, բոպիկ ոտքերով, Պոլսոյ մէջ այս ու այն բեմերից պոռոտախօսութեամբ օգային դասախօսութիւններ է ատում խեղճ ու կրակ հառարակութեան, և վստահ եմ որ, այդպիսի սև հոգի Շահրիկեանների դիմակները պիտի պատռի օր մը գիտակից Հայերի ջանքերով։ Տեսէք թէ ի՛նչպիսի հոգի են ունեցել Դաշնակցական ղեկավար յորջորջուողները։ Թիֆլիսի մէջ Արև. բիւրօի ամբողջ կազմը նը-

մանում էր մի կտոր բալասի, սակայն այս պառաւ նէնէները, 905 թուին, թիֆլիսի փողոցները դրօշակներով և լէնդերով էին շրջում. վա՛յ այն յե՞ ղափոխութեանը, որու գլուխը կանգնած են այսպիսի ստոր հոգիները:

Քրիստափորի սպանութեան երկրորդ օրը ըսկսուեց քննութիւնները ոստիկանատան ընդարձակ սենեակի մէջ. մի ծայրի վրայ նստել էին դահիճների խումբը, իսկ միւս ծայրի վրայ նստած էինք մենք: Այս տեսարանը խիստ յուզիչ էր, մի ծայրի վրայ բարձրանում էր լաց ու կոծ, իսկ միւս ծայրի վրայ բարձրանում էր անպատկառ ծիծաղներ և քրքիջներ. չարագործները հեգնում էին մեզ, և արտասուքների մէջ խեղդուող մի մօր հեկեկանքները, նրանք ծաղրում էին մեր խոշոր թշուառութիւնը:

Դահիճների մէջ նստած էր լուռ և սեցած հըրէշ Մարտիրոսը, ներսը կատարվում էր քննութիւն. ուստի աղջկայ մէկը քննիչի հետ կանգնած էին ներսի սենեակում դռանը մէջ, և մատով ցոյց էր տալիս իւրաքանչիւր դահիճին, և պարզում էր ամէն մէկի կատարած դերերը և գործերը. քննութիւնը դեռ բոլորովին չէր վերջացել, ներս մտաւ դինուորական գէնէրալը. նա կանգնեց չարագործների առաջ, և մատի սպառնալիքով սկսաւ խօսել. — դուք կ'սպաննէք 15 տարեկան տղային, իսկ ես էլ ձեր բոլորին կտխել պիտի տամ. — գէնէրալի այս խօսքերը դահիճներին սարսափեցուց. նրանք լալկան ձայներով սկսան մեզ դիմել, իրենց անտեղեակ ձեռքներով ոճիրից: Մի քանի րոպէ վերջը օճ Մար-

տիրոսը յայտնեց պաշտօնեային— որ ես բան ունիմ խօսելու գէնէրալին— նրան ներս տարին և այնտեղ նա մնաց կէս ժամ: Նա մեր մասին զանազան ամբաստանութիւններ էր արել. այդ մասին վերջը մենք տեղեկացանք Րօդմիսդրից:

Հեռագիրները կառավարութեան ձեռքը անցնելուց յետոյ ձերբակալուեց նաև Արմենակ Սէլֆիեանը. ձերբակալուած չարագործները թուով 15 հոգի էին: Չարագործների մի մասն էլ դեռ չէր ձերբակալուած, ազատ էր մնացել նաև չարագործների գլխաւոր ղեկավար համալսարանական Շարաֆեանը: Երրորդ օրը չարագործների վոհմակը ուղարկեցին Սիմֆէրապօլի բանտը. նրանցից մնաց միայն Անահիտ Բարասդամեանցը և նրա փոքրիկ քոյրը. այդ փոքրիկ աղջկան չորրորդ օրը բաց թողին:

Քրիստափորին սպանութեան երրորդ օրը կատարուեց թաղումը. մենք թարմ գերեզմանի վերայ ընկած մեր լացի և արտասուքների մէջ ողբում էինք մեր սիրելի Քրիստափորը, այդ ժամանակ եկաւ ոստիկանութիւնը, և առաջարկեց մեզ գնալ ոստիկանատուն. գերեզմանի վրայից մեզ յետ քաշեցին, նստեցրին կառքերը և տարին ոստիկանատուն: Մի քանի րոպէ վերջ դատախազը հեռախօսով յայտնեց ոստիկանապետին մեզի համար, որ սրանից վերջը բանտարկեալներ են, դատախազի կարգադրութիւնից անմիջապէս վերջը պահապան գինուորներ կանգնեցրին նաև մեր նստած կողմի դրանը մուտքի վրայ էլ:

Մեր ձերբակալութեան երրորդ օրը յանձնեցին մեր բանտարկութեան թղթերը. այդ օրը երեկո-

յեան Բրիստաւ Սերգօն կարգադրեց բանտի վերակացուին, որ մեզ ուստիկանատնից տանին բանտը. Բրիստաւից խնդրեցինք մնալ առ այժմ ուստիկանատունը որովհետեւ մենք դեռ չգիտենք ինչ յանցանքով ենք բանտարկուած: Բրիստաւ Սերգօն մեր խնդիրքը մերժելով դուրս գնաց: Երեկոյեան բանտի վերակացուն մեզ առաջարկեց բանտ գնալ սակայն մենք մերժեցինք նրա առաջարկը, ասելով որ մինչև սպրաւնիկը չտեսնենք, ո՛չ մի տեղ չենք գնար. սպրաւնիկի անունը լսելով նա այլևս չի պնդեց, կէս գիշերին սպրաւնիկը եկաւ մեզ մօտ. մենք նրան գանգատեցինք Բրիստաւ Սերգօյի կարգադրութեան վրայ: Նա մեզ հանգստացնելով, ասաց որ, ձեզի բանտ չեմ ուղարկեր, ձեր մասին հեռագրով խօսել ենք Թիֆլիս, Արմաւիր. մինչև պատասխան չստանանք ոչ մի կարգադրութիւն չենք աներ: Առաւօտ Բրիստաւ Սերգօյի հետ ներս մտաւ գահիճների գլխաւոր ղեկավար Շարաֆեանը. նրանք մեզ տեսնելով սկսան երկուքն էլ կարմրիլ. Բրիստաւը իր բարկութիւնը հազիւ կարողանում էր գսպել: Նա երեկոյեան կարգադրեց որ մեզ բանտ տանին, իսկ առաւօտ եկաւ մեզ այնտեղ տեսաւ:

Շարաֆեանը ընկաւ ծուղակը իր ոտքով. նա Բրիստաւ Սերգօնների կոկորդը լեցրեց խոշոր կաշառքներ, և կարծում էր որ իր կատարած զարհուրելի ոճիրները պիտի մարսէր տղատութեան մէջ, սակայն արդարութիւնը նրան իր ոտքով բերել տուեց տանջանքի քաւարանը: Նա հազիւ հազ կարողացաւ նստիլ մի աթոռի վրայ. նա եկել էր

Անահիտին տեսնելու, սակայն նրա տեսութիւնը շա՛տ երկար պիտի լինէր: Շարաֆեանը փորձում էր իր մտած դռնից մի անգամ ևս դուրս գնալ, սակայն մեր ներկայութիւնը ամէն փորձերը խանգարում էր:

Բաւական ժամանակ վերջը ես ներս գնացի և Շարաֆեանի մասին յայտնեցի Սպրաւնիկի օգնականին. նա անմիջապէս դուրս եկաւ մօտեցաւ մեր վրայ հսկող պահապաններին և հրամայեց որ հսկեն նոյնպէս Շարաֆեանի վրայ: Ահա այսպէս իր ոտքով բանտը ինկաւ նաեւ դահիճների գլխաւոր ղեկավար Շարաֆեանը:

Շարաֆեանը համալսարանական էր, սակայնամենաբարձր դպրոցներն անգամ անկարող են լինում չար մարդկանց սրտերից խլել հակառակ շարութիւնները, ես մինչև այսօր էլ սարսափով յիշում եմ դահիճների կատարած հրէշութիւնը, և մինչև այսօր էլ աշխատում եմ այս ողբերգական եղեանը հաշտեցնել չար մարդկանց ամենաչար զգացմունքներին հետ, սակայն այսպիսի անօրինակ ոճիրների հետ հաշտութիւն անհնարին է լինում, վերջիվերջետ հաշտութիւն անհնարին է լինում, վերջիվերջոյ գալիս եմ այն եղրակացութեան, որ այս ոճիրով վայրագ սիրտը, Ահա այսպիսի դատողութիւնից վերջը, յանկարծ իմ առաջ կանգնում են ոճրագործների շարքերը, այս ֆրիստափորի ոճիրը կատարուել է 30 մարդու գիտութեամբ, միթէ այստարուել է 30 մարդու գիտութեամբ, միթէ այսքան քան մարդիկը խելագարներ էին, միթէ այսքան քան մարդու մէջ չգտնուե՞ց մէկը, որ սարսափով ճշար իր ընկերներին, — թէ ինչո՞ւ ենք սպաննում տասն

վերջը քննիչի պահանջով Մետեխից մեզ փոխադրեցին Եկատէրինօտարի բանտը : Մնունդից անմիջապէս վերջը սկսուեց մեր քննութիւնը . քննիչը մեզ մեղադրում էր, որպէս անարխիստների, իբր թէ մենք 60000 ռուբլի բռնի միջոցներով փող ենք հաւաքել Եկատէրինօտարի շրջաններից : Մենք զըննիչին յայտնեցինք որ մեր վրայ բարդուած մեղադրանքները զրպարտութիւն են :

Նաև մենք քննիչին բացատրեցինք թիֆլիսում, մեր գլխուն անցած, կառավարութեան հալածանքները և բանտարկութիւնները, ցոյց տուինք մեզ հալածող պաշտօնեաների անունները, որոնք կաշռուել էին Մանասեանի ձեռքով, մեր այս խօսքերը գրելուց վերջը պահանջեցինք որ կամ ցոյց տան մեր յանցանքը և կամ ազատ թողնեն մեզ :

Մեր պահանջին՝ քննիչն ասաց որ Արմաւիրում մի քանի մարդիկ պիտի քննուին . եթէ նրանց կողմէ ուէ մեղադրանք չլինի, ձեզ այն դէպքում կ'ազատենք : Այս քննութեան ժամանակ մեր առջըը թափեցին մի շարք թղթեր, որոնք գտել էին Դաշնակցական ինչօրի և նրա ընկերների մօտից . այդ թղթերի մէջ գտնուեց մեր և մեր ընկերների անունները, կար դրամական և գէնքի հաշիւներ, կար նաև մի նամակ «Մուրճ» ամսաթերթի խմբագիր Պ. Լևոն Սարգիսեանին տէրօրի ենթարկելու մասին, որու բովանդակութիւնը մօտաւորապէս հետևեալն է .

«Յարգելի ընկերներ . — Խէչօ և Մուրատ — այս վերջի ժամանակները իր հայրենի գիւղն եկել է յայտնի հակադաշնակցական տխրահուշակ Լևոն

Սարգիսեանցը . նա տեղս սկսել է իր հակադաշնակցական գործունէութիւնը, այնպէս որ շատ Դաշնակցական գործերի արդեւք է դառնում, ես իմ տրամադրութեան տակ եղած ուժով վերջ պիտի տամ նրա կեանքին, սակայն դուք, որպէս բարձր ընկերներ դիմում եմ ձեզ, որպէսզի հակառակ պարագայում ինձ պաշտպանէք, սպասում եմ շատ շուտով պատասխանին : Ստորագրութիւն Սարհատ :

Դաշնակցական ենիչէրիական նմոյշների օրինակներն իրենց տեսակէտներով խիստ շատ են . եթէ ամէն մի տեսակից մէկ մէկ օրինակ վերցըրէնք ահագին թերթեր կը լեցուի : Պ. Լևոն Սարգիսեանը կովկասի հայկական ինտելիգէնցայի մէջ առաջնակարգ տեղ է գրաւած, սակայն նա հակադաշնակցական լինելու պատճառով, հրէջներն ուղղում են սպաննել, նրա կարողութիւնը մինչև իսկ Դաշնակցական ղեկավարներն անկարող են չխոստովանել :

Եկատէրինօտարի բանտում անցաւ մի քանի ամիսներ, մեր բարեկամների մէկից ստացանք մի նամակ, որու մէջ հաղորդում էր քննիչի կաշռուելը, որպէսզի մեր գործին պիտի աշխատի եղբր ծանր կերպարանք տալ :

Կրկնում եմ տխմար հակառակորդներին փոխանակ ամչնալու իրենց ստոր արարքներէն, կրկին կաշռում են քննիչներին, և տասնեակ հազար ռուբլիներ ևս Եկատէրինօտարի բանտի պարիսպների տակ վատնել էին որ բռնուած «ղոյ պաշի» ներից, մէկին փախցնեն, և այնքան ծախքերով միջոց գտան բանտը մեզ զրկել թունաւոր կերա-

կուրներ, որպէսզի թոյնով յաջողին իրենց տէրօրը, բայց կէս ժամ առաջ մենք իմացել էինք թոյն ըլլալը, և թուեալոր կերակուրը այդ օր պէտք եղաւ ճ կախադանի դատապարտուածների կերցնել որոնց մէկըմիայն ողջ մնաց, և այս բոլորը մեզ ոչնչացնելու համար էր, նաև բանտում կար շատ մը իրենց դաւանակից հասկացող ոուս յեղափոխականներ, որոնց զայրոյթը մեզնից շատ կը լինէր այդ տեսակ ստոր միջոցները տեսնելով:

Քննիչը կաշառուելու լուրից վերջը մի խնդրագիր ուղարկեցինք կովկասի փոխարքային նկարագրելով մեր ծանր դրութիւնը և անմեղութիւնը. գանգաւ էինք յայտնել քննիչի վրայ: Խնդիրքի պատասխանը ուշացաւ. ստիպուած մի խնդրագրով ևս դիմեցինք քննիչին, որ նա հաղորդէ մեր գործի դրութիւնը. մի շարաթ վերջը քննիչից ստացանք հետեւեալ պատասխանը, — Ձեր գործի ընթացքը դեռ չէ վերջացած. մինիստրութեան առաջ հարց է յարուցուած, որպէսզի ձեր գործը փոխադրուի Թիֆլիսում մի ինչ որ քննիչի մօտ, դեռ պատասխան չենք ստացած»: Այս հաղորդագրութիւնից մէկ երկու շաբաթ վերջ ստանում ենք, համարեա միաժամանակ թէ փոխարքային տուած խնդրագրին պատասխանը, և թէ քննիչի մի նոր հաղորդագրութիւնը: Փոխարքան պատասխանել էր հետեւեալը. — «Ձեր խնդիրքը թողնում եմ անհետեանք. դուք մեղադրվում էք Հ. Յ. Դ. պատկանելու մէջ, այժմ ձեր գործը գտնվում է նովիչարկասկ պալատի կարևոր յատուկ գործերի քննիչին մօտ դիմեցէք նրան»: Քննիչը նոյնպէս հաղորդել էր մեր

գործը նովիչարկասկ փոխադրուելը: Մեր գործը նովիչարկասկ փոխադրուելու մասին թէ՛ մենք և թէ՛ ամբողջ բանտարկեալները. մնացինք զարմացած: Երեք ամիս Թիֆլիսի Մէտէխի բանտի մէջ և ութ ամիս Եկատէրինօտարի բանտում ամենասուկալի պայմանների մէջ կրելով բանտային տանջանքները մեզ փոխադրեցին նովիչարկասկի բանտը:

Նովիչարկասկում մի քանի խնդրագրերից վերջը պալատի քննիչը ամիսներ վերջը եկաւ բանտը և անձամբ հաղորդեց մեր գործի դրութիւնը, նա ասաց որ «ձեր գործը խիստ մեծ է, ձեր լրագրական բոլոր յօդուածները, և զանազան քաղաքներ տուած հեռագրերնրը և ձեր դէմ գրուած նրանց լրագրական յօդուածները. այս բոլորը պիտի թարգմանուի և պիտի քննուի. միայն այն ժամանակ կարող եմ ձեզ բաց թողնել և կամ չթողնել. քննիչի բոլոր և մեզ բաց թողնել և կամ չթողնել. քննիչի այս խօսքերից վերջը անցաւ մի քանի ամիսներ, այս խօսքերից վերջը անցաւ մի քանի ամիսներ, մեր դրութիւնը հետզհետէ վատթարանում էր, մեր կողմից բանտի խիստ կարգերը և նիւթական մի կողմից բանտի խիստ կարգերը և նիւթական վերջին ծայր չբաւորութիւնը, իսկ միւս կողմից մեզ հետ կապվող սարսափելի ոճիրները, և ծանր մտքերի տանջանքը մեզ բոլորովին քայքայել էր:

Իմ մէջ չորացել էր արիւնը, և նմանվում էի կամախքի, իսկ Ձարուհին արդէն ընկել էր թոքախտի ճիրանների մէջ, ահա այսպիսի դառն ամիսներ տի ձանկացնելուց վերջը յանկարծ մի օր բանտից մեզ անձկացնելուց վերջը յանկարծ մի օր բանտից մեզ տարին քննիչի մօտ. ճանապարհին հանդիպեցինք Ձարուհուն, նա զինուորների օգնութեամբ հազիւ կարողանում էր փոխել քայլերը:

Մեր խումբն առաջ անցաւ, և քիչ վերջը մը-

տանք մի շէնքից ներս. այնտեղ սպասում էր քըն-
 նիչը. բաւական ժամանակ անցնելուց յետոյ եկաւ
 նաև Զարուհին բոլորովին շնչասպառ. երբ զինուոր-
 ները թողին նրա թևերը, նա ընկաւ տախտակա-
 մածի վրայ. մի քանի րոպէից վերջը հագիւ կա-
 րողացաւ շնչտու, պահանջելով ջուր. քննիչը ինքն
 անմիջապէս բերեց ջուր. Զարուհին մի փոքր խը-
 մեց և այնուհետև սկսաւ դողալ ամբողջ մարմնով:
 Քննիչը տեսնելով Զարուհու վիճակը սկսաւ յու-
 սադրել, նրան խոստանալով շուտով ազատութիւն.
 Զարուհին պատահականեց, որ սրանից վերջն ի՞նչ
 պիտի անեմ ազատութիւնը: «Քննիչը դարձեալ
 յուսադրելով ասաց որ, շուտով կ'ազատուիս, մի'
 յուսահատիր: Այս անգամ շնորհակալութիւն յայտ-
 նեց Զարուհին: Քննիչն ասաց որ, շնորհակալ եղիր
 զակօնից, որովհետև զակօնն է ձեզ ազատողը:
 Քննիչը 20 կօպէկ տալով, զինուորներին պատուիրեց
 որ կառքով տարէք, Զարուհին առանց սպասուելու
 ուղարկուեց բանտ:

Նրա գնալուց վերջը քննիչը յայտնեց որ «քա-
 հանան հիմայ պիտի գայ, և դուք ձեր տալիք վը-
 կայութիւններ չամար պիտի երդուիք. եթէ ճիշտ
 վկայութիւններ տալու լինիք, ա՛յն դէպքում ձեր
 յանցանքը պիտի թեթևնայ:— Միհրանը քննիչին
 պատասխանեց որ,— իմ յանցանքը թեթևալու հա-
 մար ես վկայութիւն երբէք չեմ կարող անել, ե-
 թէ ես յանցանք ունիմ, դատարանը թող չիմայէ
 իր տալիք պատիժով, իսկ ինչ վերաբերում է
 ինձնից, պահանջուած քննութեան՝ ինչ որ գիտեմ
 կարող եմ ասել»: Քիչ վերջն եկաւ քահանան և

մեզ երդուընցուց:
 Քննիչը նախ մեզ ասաց որ, ձեր վիրաւորվե-
 լուց մինչև ձեր բանտարկութիւնը, այդ երեք ամ-
 սուռայ ընթացքում թէ՛ ձեր և թէ՛ հակառակորդ-
 ներիդ, բոլոր շարժումները հայելու պէս, պարզ
 պատկերացած է, այնպէս որ դուք ոչինչ չէք կա-
 րող պահել: Այս խօսքերից վերջը մեզ ևս ուղար-
 կեց բանտը: Մի շարաթ վերջը սկսուեց մեր քըն-
 նութիւնները. քննիչը մեր երեքին էլ առանձին
 քննեց: Նախ տարին Միհրանը. նրա քննութիւնը
 տևեց երեք օր. քննիչը նրա առաջը թափել էր
 լրագրական իր յօդուածները և մեր հեռագիրները:
 Միհրանի յօդուածների մէջ կայ եղել մի քանի նա-
 խադատութիւններ, որոնցմով վիրաւորել էր, գա-
 նազան բարձր պաշտօնեաներին, քննիչը դրանց հա-
 մար բացատրութիւններ է պահանջել Միհրանից.
 նա պատասխանել է իր տեսակէտներով, այնուհե-
 տև հեռագիրների մասին սկսում է հարցուփորձ
 անել. մեր հեռագիրների մէջ չկար ուէ գաղտնի
 միտք պահող հեռագիրներ, նոյնպէս չէր պարու-
 նակում յանցաւոր գործեր. մեր հեռագիրների մա-
 սին Միհրանի տուած բացատրութիւնները քննիչին
 պարզ հասկնալի է լինում: Գալով հակառակորդնե-
 րի հեռագիրներին, նրանց հեռագիրները բաժնը-
 րի հեռագիրներին, նրանց հեռագիրները բաժնը-
 վում էր երկու մասի. մեծ մասը կապվում էր
 մեզ հետ. մեր վիրաւորուելուց մինչև մեր բան-
 տարկութիւնը տևեց երեք ամիս. այդ երեք ամ-
 սուռայ ընթացքում հակառակորդները մեր մասին
 տալիս են մի քանի հարիւր հեռագիրներ, որոնց
 բովանդակութիւնը պարունակում է կարգադրու-

գնալու լինիք նախապէս ինձ անդեկացնելու պարտաւոր էք»։ Երկրորդ օրը բանտապետը մեզ կանչեց գրասենեակը և յայտնեց որ, ինչ որ ունիք հաւաքեցէք, որ բանտից դուրս պիտի գնաք այս ժամուս :

Մենք ձերբակալուեցինք Եալդայում 1907 թիւ օգոստ . 27ին սկզբի օրից մեզ հետ բանտը տարինք վիշտը, տանջանքը և արցունքը, ամբողջ 19 ամիսներ թիֆլիսի, Սկատէրինօտարի և Նովիչարֆասկի բանտերում մենք մաշուեցինք և տանջուեցինք բանտը մեզ հետ տարած վիշտերով :

Եւ 19 ամիս վերջը 1909 Մարտի 27ին Նովիչարֆասկի բանտից մեզ դուրս են անում, մեր անդը ինչքան էլ սառնարիւն մարդ լինէր . նա պիտի ուրախանար, և մի բոպէ առաջ պիտի շտապէր դըժոխքի դռնից դուրս թռչելու, սակայն մենք այնպիսի պայմանների մէջ էինք գտնվում, որ ո՛չ կարողացանք ուրախանալ և ոչ ալ շտապել : Որովհետեւ մեզ մօտ չկար ոչ մի կոպէկ, և դուրսը չուէինք ոչ մի ծանօթ և դրա համար էլ մնացել էինք շուարած, ո՛ւր գնալ և կամ որո՞ւ մօտ թողնել Ջարուհուն, որը հազիւ կարողանում էր ոտքերի վրայ կանգնել, քաղաքի մէջ չկար Հայոց եկեղեցի և ոչ ալ Հայ քահանայ, իսկ մենք ոչ ոքին ծանօթ էինք, ահա այդ շուարած դրութեան մէջ յանկարծ ներս մտաւ բանտի ռուս քահանան :

Երբ նա լսեց որ մենք ազատվում ենք բանտից, և Ջարուհու մասին մնացել ենք շուարած, քահանան մեր ազատութեամբ խիստ ուրախացաւ և առաջարկեց որ Ջարուհին մեր տունը մի քանի

օր կարող է մնալ, քահանայի այդ մարաիրոսութիւնը, մեզ ազատեց մեր շուարած դրութիւնից, բանտի վերակացուներից մէկը Ջարուհուն տարաւ քահանայի տունը, իսկ մենք էլ մի փողոցով գնացինք պազար . մեր դրութիւնը խիստ թշուառ էր, մանաւանդ իմը, ես բոլորովին քայքայուած էի առողջութեամբ, խիստ նիհար և գունաթափ էի, եռուղջութեամբ, խիստ չկար հաստ վերարդանակը ցուրտ էր, մեր վրայ չկար հաստ վերարկուներ, ես սաստիկ մտում էի, իմ դողդղալը ամէն մարդ նկատում էր մանաւանդ աչքի էինք ընկնում մեր հագուստներով ու գլխարկներով, որոնք փոշոտուել ու ճմռթկուել էին, երկար ամիսներ բանտի պահեստը մնալով, իւրաքանչիւր անցորդը մեր վրայ նայում էր խիստ ապշանքով :

Ժողովուրդը ուրախ էր և զուարթ : Երկրորդ օրը Ջատիկ էր, ամէն մարդ իրենց տնային պատրաստութիւնները տեսնում էին, իսկ մենք էլ անծանօթ քաղաքի մէջ : մտածում էինք թէ ո՞ւսկից օգնութիւն խնդրենք : 19 ամիս գանազան բանտեթիւնի մէջ ամենախայտառակ նիւթական վիճակով, բանտային տանջանքները, մեր հոգին կրծում էր իսկ դուրսը մեր ստոր և նամէրտ հակառակորդները ժողովուրդի մէջ մեր մասին գանազան լուրերը էին տարածում, որ նրանք Բեդրասպուրկի մէջ մեծ պաշտօնների վրայ են, նրանք Ամերիկա և Եգիպտոս փախել են 1000 ռուբլիով, նրանք Տաղիստանի մէջ ինչ որ անձնական գործերով են զբաղում :

Մինչդեռ այս ստոր հակառակորդները շատ լաւ գիտէին, թէ ո՛ր բանտերում էինք մենք և ի՛նչ թշուառ վիճակով, գիտէին նաև մեր մեղադրանքի

յանցանքը, գիտէին և ամէն բան, սակայն առանց խղճահարուելու նրանք տարածում էին այս սուտ լուրերը:

Միհրանի հետ մի քանի փողոցներ անցնելուց վերջը մտանք «մուշ պօկրէպ»ը (սեղանատուն և գինետուն) այնտեղից ստացանք մի ընդհանուր օգնութիւն, բոլորովին անձանօթ մարդկանցից, Միհրան հայերի խանութը մտաւ, իսկ ես սպասում էի դուրսը, որոնք նոյնիբել էին ընդամէնը 4 ընդհանուր այնուհետև մենք գնացինք ճաշարան մի փոքր ճաշելու. ճաշից յետոյ ես գնացի Ռուս քահանայի տունը Չարուհուն տեսնելու:

Որդեկորոյս մայրը իր կորուստից անմիջապէս վերջը ամբողջ 19 ամիսներ բանտերում ողբաց իր զաւակի եղբերբազական մահը, նրա այդ բանտային կեանքը մի խոշոր պատմութիւն կարող է լինել, որու մէջ մարդիկ միայն պիտի տեսնեն արտասուները ցանուած հեկեկանքներ, վիշտ, ցաւ, հիւանդութիւն, նիւթական անձուկ վիճակ և սիրտ կտրատող մտքեր, մտածմունքներ և զգացմունքներ, արդ այդ բոլորը Չարուհու մտքի և խելքի վրայ թողել էին սարսափելի հետքեր, երկար ամիսներից վերջը, առաջին անգամն էր որ ես սկսայ երկար խօսիլ Չարուհու հետ Ռուս քահանայի տունը, երկար խօսելուց վերջը ծանր տպաւորութեամբ հեռացայ մօտից:

Երկրորդ օրը Միհրանի հետ գնացինք Րաստով, այնտեղ ունէի մի ծանօթ, որից պիտի խնդրէի օգնութիւն, և անմիջապէս վերադառնալ Նովիչարկասկ, Չարուհու մօտ. Րաստովում սպասուած

օգնութիւնը չկարողացայ ստանալ, մի քանի օրից վերջը 10 ընդհանուր փողով վերադարձայ Նովիչարկասկ. կայարանից անմիջապէս գնացի քահանայի տունը. Չարուհին չկար այնտեղ. քահանան յայտնեց, որ նա գնաց Եալթա, այնտեղից ալ գնալու է Պաթում: Չարուհու ճանապարհածախսը ճարել էր քահանան ինքը. նա դիմելով մի հայ վաճառականի, ստացել է 30 ընդհանուր ճանապարհածախս, այդ փողով նա հեռացել է դէպի Եալթա, այնտեղից ալ բարեկամների օգնութեամբ հասել էր Պաթում:

Քահանայից տեղեկանալով Չարուհու Եալթա գնալը, ես նոյն երեկոյեան Նովիչարկասկից մեկնեցի դէպի Պաթում, Չարուհին և ես, համարեա, միաժամանակ մտանք Պաթում: Մի քանի օր վերջը Պաթումից մեկնեցայ Թիֆլիս ծանօթներից օգնութիւն ձեռք բերելու յոյսով: Թիֆլիս 15 օր մնալուց վերջը վերադարձայ Պաթում. Թիֆլիսի և Պաթումի ծանօթներից օգնութիւն ստացայ մօտաւորապէս 150 ընդհանուր. ստացուած օգնութիւնը մեր վիճակի հետ համեմատելով խիստ ջնջին էր:

Ես օր առաջ շտապում էի վերադառնալ իմ կարօտալի հայրենիքը. այնտեղ ինձ սպասում էր իմ ծերունի մայրը: Տասնեակ տարիների հալածական և արկածալի կեանքից վերջը մեծ բաղդաւորութիւն էր ինձ համար վերադառնալ հայրենի տունը: Վերջապէս մի անցագիր ճարելով մտայ նաւը, չնայած որ այդ ժամանակ ինձ մօտ կար ընդամէնը երկու ընդհանուր փող, այնու ամենայնիւ բոլորովին չէի մտածում դրամ չի լինելուն մասին: Տրապի-

ևս տեսնելու իմ մօրը և համայն ազգականներս :
 — Անցաւ մի ամիս կարինից Բաբերդ եկաւ Քղեցի
 «Խմօ պէկ» կոչուող յայտնի յեղափոխականը , որը
 Փարիզի կօնգրէին ճառ է արտասանել : Խմօ պէկը
 այդպիսի շառլաթան խօսքերով մեծ յեղափոխա-
 կանի հռչակ ունեցաւ Բաբերդի անգիտակից մաս-
 սայի մէջ : Խմօ պէկից վերջը կարինից եկան դար-
 ձեալ երկու հոգի . նրանք ծածկուեցան լուսանկար-
 չութեան պատրուակի տակ . այդ չարագործները
 եկած էին , Թօփչեանի կարգադրութեամբ , ինձ
 սպաննելու :

Խմօ պէկը և ձընըվըզ Առաքելը մի քանի ու-
 րիշների հետ ամբողջ մի ամիս հարիւր տեսակ բան
 են մտածել ինձ սպաննելու . նրանք մտածել են մի
 ճոխ սեղան պատրաստել քաղաքից դուրս գտնվող
 պարտէզների մէկի մէջ , և ինձ հրաւիրել այնտեղ ,
 իրենց սիրալիր յարգանքներից վերջը յաջողացնէին
 իմ արիւնով ներկելու «ընկերական սեղանը» և այդ-
 պէս մի կարգ ուրիշ ստորնութիւններ : Մի օր նըս-
 տած էինք սրճարանի մէջ Միքայէլի հետ , մեզի
 մօտ եկաւ Քիւրտ Եղիան . Քիւրտը ինձ առաջար-
 կեց , որ կարինից եկել է յայտնի յեղափոխական
 Խմօ պէկը , նա ցանկանում է ձեզ հետ ծանօթա-
 նալ . նա ինձմէ խնդրեց , որ այդ մասին ձեզի ա-
 ռաջարկեմ : Քիւրտի առաջարկը ես մերժեցի , ասե-
 լով որ , սրանից վերջը անծանօթների հետ ծանօ-
 թանալ պէտք չէ : Նա կրկնեց մի քանի անգամ
 ևս , և աւելացուց որ ձեր ծանօթութեամբ , շատ
 գործերու յաջողութեան պատճառ պիտի դառնաք :
 Ես նրա առաջարկը մերժելով դուրս եկայ սրճարա-

նից :

Այդ առաջարկից երկու օր վերջը , նստել էի
 Ծատուրեանի գրասենեակը , այն տեղ եկաւ Խմօն .
 նա մօտեցաւ ինձ և մի առանձին համակրանքով
 երկարացուց ձեռքը , և ասաց , «Ձեզ հետ ծանօթա-
 նալու փափաք ունէի , վերջապէս բազդը ունեցանք
 այստեղ տեսնուելու» , նենգ ժպիտներով նստաւ իմ
 դէմը , բաւական ժամանակ նստելուց վերջը գրա-
 սենեակից ես դուրս գնացի , մի քանի քայլ առնե-
 լուց վերջը նրան տեսայ ինձ մօտ , և նա առաջար-
 կեց , որ գնանք մի առանձին անդ խօսելու , բա-
 ւական լուռ մնալուց վերջը ես համաձայնուեցի .
 իմ գնալու նպատակն էր հասկնալ թէ ի՞նչ միջոց-
 ներով պատրաստում են իմ կեանքի դէմ դաւա-
 դրութիւն : Մենք բարձրացանք այն սրճարանը որը
 կը գտնուէր Դաշնակցական կոչուողների տրամա-
 դրութեան տակ , և Խմօն էլ այնտեղ հիւրընկալ-
 ւած էր : Այնտեղ նաև եկաւ ձինիվից Առաքելը և
 ուրիշ Դաշնակցականներ : Այնտեղ մենք խօսեցինք
 բոլորովին կողմնակի խնդիրներով . տեսայ որ նը-
 րանք ուզում են ժամանակ անցնել , ես դուրս ե-
 կայ սրճարանից :

Կարնոյ և Բաբերդի համաձայնութեամբ որո-
 շում են իմ սպաննութիւնը կատարեն օր ցորեկով ,
 շուկայի մէջ , հետեւեալ նպատակով . հրապարակի
 շուկայ կատարուած տէրօրը ահաբեկէ հարուստ դա-
 սակարգը , և այդպիսով երկու գործ յաջողցնեն .
 նախ իմ սպաննութիւնը և երկրորդ՝ հեշտութեամբ
 կարողանան կողոպտել ահաբեկուած՝ այս ու այն
 հարուստը , և նրանք օրը ցորեկով յարձակում են
 սրճարանի մէջ իմ վրայ : Մինչդեռ տէրօրիսս

կոչուող այդ պարոնները ինձ շատ անգամ հանդիպեցան քաղաքից դուրս յարմար միջավայրի մէջ թէ՛ մինակ և թէ ընկերով. ինչո՞ւ իրենց դերը այնտեղ չի կարողացան խաղալ այդ թոփչեանների ստոր և անգիտակ գործիքները:

Վերջապէս Յունիս 18ին էր, երբ անցնում էի «Ռէչիտ պէկի» սրճարանի առջևից իմ ետևից լսեցի գէնքի մի ձայն, ես անմիջապէս ետ դարձայ դիտեցի չորս կողմս բայց ոչինչ չնկատեցի. ստոր չարագործը մտել էր մակագինի դրանը ետին դադտագողի կրակել էր ինձ. այդ պայթիւնը վերագրելով երկաթի կամ տախտակի ձայնի, բոլորովին միամիտ ներս մտայ իմ առաջը գտնուող սրճարանը ուր երբեմն կ'երթևեկէի. դրանը մօտիկ նարտ խաղացողներ կային. ես ոտքի վրայ սկսայ դիտել խաղը. այդ պահուն ես լսեցի իրար ետևից պայթող գէնքի ձայները. մի ակնթարթի մէջ տեսայ դրանը տակը դերք մտած խակ շարագործին. նրա գլուխը միայն երևում էր և ձեռքի տասը կրականոց ատրճանակը, նա դեռ շարունակում էր իմ վըրայ կրակելը. այդ ժամանակ ես էլ շտապեցի իր հերթին կրակել. իմ երկրորդ կրակին նա սկսաւ փախչիլ. ես վիրաւորուեցայ ձախ թևիցս, և մի թեթև վէրք էլ կուրծիցս. երկու քայլի հեռաւորութեամբ շարագործը իմ վրայ կրակեց 8 գընդակ. այդ գնդակները անցան նարտ խաղցողների վրայից, որոնք նոյնպէս ազատուեցին անխուսափելի մահից:

Իսկապէս իմօթի և թոփչեանի դատողութիւնը տնչիմն չէր, ժողովուրդը խիստ ահաբեկուեց, սկզբի օրերը ոչ ոք չհամարձակուեց քննադատել

այդ խայտառակ դէպքը, որը մինչև իսկ առիթ պիտի դառնար Բաբերդի գլխով անցնելու Ատանայի սարսափները: Խմօն թէպէտ մի քանի հարուստների հասցէներին կախումներ արեւ էր, սակայն իմ ողջ մնալը նրանց թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ նըպատակը մատնեց անյաջողութեան: Դէպքի վայրից ինձ տարին կառավարութիւնը. մի քանի խօսքերով քննութիւն տալով առին իմ վրայից գէնքը, և ես անգէն տուն գնացի:

Անգէն մնալ ես անկարող էի, որովհետև համոզուած էի որ կատարուած անյաջող մահափորձը հակառակօրդներուս կատաղեցնելու չափ դայրացորեց, և պաաճառեց խոշոր անհանգստութիւն. իմ դէմ պիտի ձեռնարկուէր նորանոր մահափորձեր. այդ մասին չէի տարակուսել անգամ սակայն ես գտնվում էի նիւթական խիստ անձուկ վիճակի մէջ, մինչև իսկ վէրքերս բժշկելու համար փոխառութիւն անում էի ծանօթներից, մի նոր գէնք գնելու համար բոլորովին փող չունէի, ստիպուած տուէի մեր հայրական հողերից մի կտոր արտի կէսը 30 ոսկի, որով հնարաւորութիւն ունեցայ գնել անհրաժեշտ գէնքը:

Երկար տարիներից վերջը թէև բաղդ ունեցայ վերադառնալ իմ հայրենի օճախը որտեղ կարելի պիտի լինէր միայն հանգստանալ, սակայն ես գըտպիտի լինէր միայն հանգստանալ, որոնց մէջ նվում էի այնպիսի պայմանների տակ, որոնց մէջ անկարելի էր գտնել հանգստութիւն: Յաճախ ես ընկնում էի խոր մտածմունքների մէջ և աշխատում էի իմ խղճի առաջ ես ինձ յանցաւոր ճանատում էի իմ խղճի առաջ ես ինձ յանցաւոր ճանատում էի իմ խղճի առաջ և իմ ձեռքով գործարջելու և անիրաւ գոչելու, և իմ ձեռքով գործարջելու այն վճիռը որի յաջողութեան համար Արև.

բիւրօն մեր ետեւից վասնեց հարիւր հազար բուր-
լիններ, և զո՛հ տուեց տասնեակ մարդկանց կեան-
քեր, այնուամենայնիւ նրանց բոյոր ճիգերը և զոհո-
ղութիւնները անկարող եղան իրենց անիրաւ վճռի
վերջնական յաջողութիւնը ձեռք բերելու, սակայն
իմ յոռի դատողութիւնների առաջ պերճախօս փաս-
տերն և ապացոյցներն ամէն անգամ հերքում էին
իմ երախայական մտածմունքները և դրա համար
էլ իմ ձեռքը միշտ վարանում էր երբ պարզ
տեսնում էի իմ անմեղութիւնը և իրաւացիութիւ-
նը: Այսպիսի բողոքներում ես յիշում էի յանուն
գաղափարի իմ կրած տանջանքները, վտանգները,
կրկնակի բանտարկութիւնները, որոնց մէջ իսկ մո-
ռացել եմ ինձ շրջապատող դառնութիւնները, և
միամիտ երազներով սկսուել եմ արտասուել և
ոգևորուել:

Ես յիշում էի վերջին տարիներում շէֆերի
կողմից մեր կրած հալածանքները և մահափորձե-
րը, և նրանց հետ միասին պատկերանում էր իմ
առաջ անմեղ զոհերի արիւնոտ ուրուականները,
նրանք իրենց մանկական հայեացքով արդարութիւն
էին պահանջում. յիշում էի մեր վերջի բանտար-
կութեան մէջ կրած դառնութիւններս, որոնք սոս-
կում էին թողնում իմ վրայ: Ահա այս բոլոր դառն
յիշողութիւններից վերջը յիշում էի նաև Բաբերդի
մէջ իմ վրայ կատարուած մահափորձը, որից ա-
զատուելը հրաշք էր:

Այս դառն յիշողութիւններից վերջը իմ ական-
ջը լսում էր այնպիսի լուրեր և ձայներ որոնք ինձ
հաստատ համոզում էին որ անկարելի է խուսափել
հակառակորդի կողմից սպասուող նորանոր յարձա-

կուսներէից բայց ես չէի կամենում որ իմ արիւ-
նտուած դիակը փուռեր իմ տանջուած մօր ա-
ռաջ, ես չէի կամենում որ իմ թշուառ մայրը իր
ողբով թրջեր իմ սառ գլուխը, ես չէի կամե-
նում որ ոճրագործների անվերջ յարձակումները
մնար անպատիժ, ես չէի կամենում որ չարագործ-
ները իմ մահով յաղթէին, իրաւունքն և ճշմար-
տութիւնը, վերջապէս ես իրաւունք ունէի աշխար-
հի վրայ ապրելու, և ուրիշները իմ այս իրաւունքը
յափշտակելու ոչ մի բարոյական ոյժ չունէին ի-
րենց ձեռքերում, որովհետև ես անմեղ էի, այս
բոլորից վերջը տեսնում էի նաև կառավարութեան
անտարբեր վերաբերմունքը:

Գտնելով ինձ այսպիսի պայմանների տակ, շատ
բնական է որ իմ իրաւունքը ես իմ ձեռքով պիտի
պաշտպանէի, Թօփչեանը լինելով իմ կեանքի դէմ
մահուան վճիռ հրամայողը, և նա՛ պիտի լինէր իմ
վրայ կատարելիք յարձակումների կարգադրողը,
հետևապէս իմ անհատական խղճի դատաստանը ի-
րաւունք տուեց ինձ սպաննելու մահապատիժներ
հրամանագրող Թօփչեանին, և ես սպաննեցի նրան:

Ճահիճը շարժվեց, վայնասունը և լացն ու կոծը
փրթաւ պլօքի բանակից, աշխարհի վերջն է հասել,
կատարվել է մի մեծ ոճիր, երկրագունդը և երկ-
նագունդը փլչելու վրայ են, և ապերախ հայու-
թիւնը լուռ հանդիսատես է, նա չէ շարժվում նա
վայնասուն չէ բարձրացնում, և անտես է անում
Դաշնակցութեան, արտասուքն ու ոռնոցներով վայ-
նասունը, գիտակից դասակարգի հայութիւնը ոտ-
քի չէ կանգնում պաշտպանելու նրանց, և չեն ա-
ճապարում Դաշնակցութեան հետ մէկտեղ պոռալ

կախաղա՛ն, կախաղա՛ն. բայց ի՞նչ է պատահել. թօփչեան կոչուող մահապատիժներ հրամանագրողը մի արդար գնդակի հարուածով գեան է գլորել: Եւ ինչպէս շատ մը տնտեսներ իր զազիր և անխիղճ դաւադրութիւններուն և բռնաւոր հրամաններուն զոհ գնացել էին կսովկասում, և այս չարութիւններից վերջն էլ Օսմ. Սահմանադրութեան շնորհիւ կարին գալով բազմում է, կրկին իր բուռն մահապատիժները կը հրամայէ նաև իւր օգային բանախօսութիւններով միամիտ ժողովուրդի մէջ փոթորիկներ կը բարձրացնէ ազգային գործերու և Առաջնորդարանի շուրջ, որպէսզի գայլի նման փոթորկի մէջից փախցնէ անմեղ գառնուկներին և հացի խոշոր պատառները ինք լափէ, թօփչեանը լինելով համալսարանական, նա գրաւում է կարնեցւոց մի մասի համակրանքը, և ձեռք առած էր ազգային գործերը ղեկավարելու, բայց չկարողացաւ հասնիլ իր լպիրշ փափաքին:

Նրա սպաննութեամբ Դաշնակցական բաժանորդները իրենց լրագրական ունոցներով միամիտ ժողովուրդը գրգռեցին ինձ դէմ, և ժողովուրդը անգիտակցաբար ցաւեց թօփչեանի մահը, որին նա արժանի էր:

Թօփչեանին չսպաննելու համար թէև ես էլ մտածեցի սակայն ուրիշ ճանապարհ չգտայ, նրա սպաննութեան ճանապարհը իրենք, թօփչեանները դրին իմ առաջը, միակ ճանապարհը այն էր, որի վրայ ընկաւ յեղափոխական դիմակի տակ ծածկուած բռնաւորը և անիրաւը: Իմ տեղը ո՞վ էլ որ լինէր, եթէ նա գիտէր իր մարդկային արժանիքները վեհ պահելու գիտակցութիւնը, և եթէ նա

գիտէր ունենալ իր իրաւունքների դէմ կատարուած կամայականութիւնների և ոտնձգութիւնների դէմ կռուելու ուժը, նա պիտի սպաննէր թօփչեանին:

Թօփչեանի պատիժը մի ուրիշ անգամ թող դաս լինի բոլոր բռնաւորներին և անիրաւներին, որոնք համարձակութիւն կ'ունենան իրենց վայրենի և անբարոյական ուժերով խախտելու մարդկային այն սրբութիւնը, որի անունն է իրաւունք. իրաւունքի ուժը, թէկուզ լինի ամենաթոյլ մարդուն մօտ, մենք պիտի յարգենք նրան:

Այժմ դառնանք մի քանի խօսքերով որոշելու Դաշնակցական ինտէլիգէնցիայի յեղափոխական արժանիքները և Դաշնակցութեան անցեալի մէջ նըրանց կատարած դերը:

Դաշնակցութիւնը լինելով որպէս կռուող կազմակերպութիւն, նա 15 տարիներ Տաճկաստանի մէջ ունեցաւ շատ օրհասական կռիւներ և այդ անհաւասար կռիւներում ընկան այնպիսի անձնուէրներ, որոնց արժանիքները յիշատակուած են, մինչև իսկ Գիւրտ և Թուրք ժողովուրդի մէջ, սակայն այս բոլոր կռիւների մէջ ի՞նչ բաժին ունեցաւ, Դաշնակցական կոչուող, ինտէլիգէնցիան: Այս հարցի ճիշտ պատասխանը մենք պիտի տեսնենք Դաշնակցութեան իրական պատմութեան մէջ: Նրա 15 տարուայ անցեալի մէջ մատների վրայ կարելի է թուել այն աղնիւ ինտէլիգէնտների անունները, որոնք Տաճկաստանի մէջ յանուն գաղափարի զոհուեցան և տանջուեցան, բայց նրանց թիւը այնքան քիչ է որ, միանգամայն ամօթ և նախատինք է բերում ինտէլիգէնցիա կոչուող դասակարգին:

Տաճկաստանի յեղափոխական գործի գլուխը

կանգնելու համար արտասահմանից գնում էր մի Պետո և կամ մի վարդգէս, նա մինչև ծանօթանում էր ժողովուրդին և մինչև կարողանում էր կազմակերպել մի քանի գիւղեր, այդ ժամանակ կամ ձերբակալվում էր և կամ սպանվում: Պետոի տեղը երկար ժամանակ թափուր էր մնում, մի երկու տարի վերջը հացիւ հազ արտասահմանից անցնում էր Տաճկաստան. մի նոր Պետո, նա մտնելով երկիր, իր նախորդ գործերը ամէն ինչ քանդուած էր տեսնում, նոր գործիչը սկսում էր շինել այն ինչ որ արել էր իր նախորդ ընկերը: Տաճկաստանի մէջ այս ձևով է առաջ գնացել կազմակերպական գործը, սակայն այս ձևի առաջնորդող յեղափոխական գործունէութիւնը կազմակերպութիւնը մատնում է յուսահատութեան և լճաման, նաև պատճառ է դառնում անտեղի ժողովրդական հալածանքների, մինչդեռ արտասահմանի մէջ Արև. և Արևմ. բիւրօները կ. կոմիտէները, և զանազան գործիչները այն ժամանակ ձեռքերը ծալած նստած էին. եթէ նրանք իսկապէս յեղափոխականներ էին, ինչո՞ւ մի մասը չանցան երկիր բուն յեղափոխական գործի գլուխը կանգնելու:

Ինչո՞ւ նրանք Սերորների և Գուրգէնների հետ ձեռք ձեռքի տուած առաջ չի տարին յեղափոխական կռիւր: Անշուշտ այն ժամանակ բոլորովին այլ կերպարտնք կ'ստանար Տաճկահայ յեղափոխութիւնը. նրանք այդ չ'արին և չէին էլ կարող անել, որովհետև այդպիսի քայլ անելով, իրենց կ'սպասէր Ապտիւլ Համիտի բոլոր բռնութիւնները — բանտ, կախազան, ծեծ և հազար ու մէկ զրկանքներ: «Երբ Դաշնակցութիւնը երկրով էր միայն զբաղ-

ւած, ամէն անգամ կայացած ընթացակարգի ժողովներին հարց է բարձրացել որ, Արև. բիւրօի անդամների երկուսը կամ գոնէ մէկը երկիր մտնեն, բայց նրանք միշտ էլ հրաժարուել են պատճառաբանելով երկրի աննպաստ պայմաններին»:

Դաշնակցական ինտելիգենցիան ո՛չ միայն Տաճկաստանի մէջ խուսափեց իր պարտաւորութիւնից այլ մինչև իսկ փոքր իշատէ ազատ կովկասի մէջ էլ հեռու մնաց իր պարտաւորութիւնից: Կովկասում Դաշնակցական ինտելիգենցիաի դերը կատարում էին Մշեցի և Պուլանըզցի գաղթականները. այդ խեղճները թափառում էին քաղաքից քաղաք, մտնում էին կովկասախոյ գիւղերը, և իրենց տկար լեզուի դարձուածքներով կազմակերպում էին ժողովուրդը: Իսկ Թիֆլիսի, որ կոչվում է կովկասահայութեան սիրտը, այնտեղ բազմած էր Արև. բիւրօն, և Թիֆլիսում էր նաև այսօրուայ Դաշնակցական ինտելիգենցիայի շարքերը, սակայն նրանք իրարուց շատ հեռու էին. Արև. բիւրօի հետ Թիֆլիսում կապուած էր միայն Տաճկաստանցի գաղթականները, և նա իր գոյութիւնը պահպանում էր նրանց ամսավճար ղրուշներով: Շատ անգամներ Դաշնակցական պատրաստ խմբերը դիմում էին այս ու այն ինտելիգենցիային որ նա մտնէ խմբի մէջ մի քանի ժամով դասախօսելու, սակայն իրմմաբերի դիմումները նրանց կողմէն ամենասառն կերպով մերժվում էին. եթէ նրանք իսկապէս յեղափոխականներ էին, ինչո՞ւ այն ժամանակ հրապարակ չեկան քարոզելու իրենց յեղափոխական միտքերը:

Օ՞ր անիծուած պայմաններ, այն ժամանակ Ռու-

դասեր տուիք, մինչև իսկ չվարանցաք ընկեր ընկերով սպաննել տալու: 1905 թուից վերջը մտէք ռուսական բանտերը, այնտեղ դուք կը տեսնէք հարիւրաւոր Դաշնակցական զինուորների, որոնց մեծամասնութիւնը բանտարկուած են սոսկ չարագործութիւններով: Իսկ ինչ վերաբերում է Դաշնակցութեան և Դաշնակցականների ձեռքով կատարուած ոճիրների մեծութիւնը. դա՛ ահաբեկի է:

905 թուից մինչև 908 թիւը, Թիֆլիսի, Պաթումի, Երևանի, Կարսի, Գանձակի, Ղարապաղի և Պաքուի նահանգներում, Դաշնակցութեան կողմից տէնորների են ենթարկուած թէ՛ Դաշնակցական շարքերից և թէ՛ ժողովուրդից աւելի քան 500 հոգի, որոնց մեծ մասը պաշտօնական որոշումներով է գործադրուած:

Դաշնակցութեան այս Սողոմ-Գոմոր շրջանում ռուսական կառավարութիւնը կովկասում իր դաշտային և զինուորական դատարաններով հնձում էր մարդկանց կեանքերը, սակայն ռուս կառավարութիւնը չկրցաւ Դաշնակցութեան չափ մեռցնել, չը նայած որ նա՛ մեռցնում էր Հային, Վրացուն, Ռուսին և Հրեային, իսկ Դաշնակցութիւնը միմիայն հային էր մեռցնում: Ահա՛ տեսէք, ո՛վ է Դաշնակցութիւնը, և ի՛նչ է եղել նրա վերջին տարիների գործունէութիւնը կովկասահայութեան մէջ:

Դաշնակցութիւնը իր մեծութիւնը տարածելու համար միջոց էր ընտրել բռնութիւնը և բռնութեան դրօշի տակ հաւաքում էր, ամէն համոզմունքների և գաղափարների տէր անձերը, շնորհիւ այս քաղաքականութեան, կարճ ժամանակի ընթացքում Դաշնակցութիւնը իր զուլումներով ճա-

րակեց ընդհանուր կովկասահայութիւնը:

Դաշնակցական ղեկավարները հրճուում էին, երբ տեսնում էին իրենց տրամադրութեան տակ եղած միլիոնները և անսպառ դրամական աղբիւրները, նրանք զանազան քաղաքների մէջ ունէին դատարաններ, ոստիկանատուններ, բանտեր և գանցէլիարներ մի քանի տարիներ առաջ նրանք այսպիսի իշխանութեան տէր դառնալու երազել անգամ կարող չէին:

Վերջին տարիներում, նրանք մատի նշանով, մարդկանց կեանքերը զրկելու ուժը ունէին, իսկ մի քանի տարիներ առաջ այդ նոյն մարդիկը, տեսնում էին Դաշնակցական գացալի խեղճութիւնը, այնուամենայնիւ նրանք այս խայտառակ սնանկութիւնից ազատուելու բարոյական ուժը չունէին իրենց մէջ:

Դաշնակցական ղեկավարները մէյմէկ պառաւ նէնէներ էին տաճկահայ ազատագրութեան գործի մէջ եթէ չլինէին Սերոբները, Գուրգէնները, Հըրայրները, և մտաւորականութիւնից դուրս, Դաշնակցական Ֆէտայիութիւնը, այն ժամանակ Դաշնակցական ղեկավարների կազմակերպական դործունէութիւնը կը հուսաւորուէր գէրօի:

Նրանք ոչ կարող էին «Դրօշակ» թերթը հրատարակել և ոչ էլ արտասահմանի մէջ կազմակերպութիւն կ'ունենային, ու ոչ էլ հնարաւորութիւն կ'ունենային ծանօթանալու Եւրոպայի այս ու այն Քլէմանսօների և Ժօրէսների հետ:

Երբ Դաշնակցութեան անուս, անձնուէրները իրենց կեանքի գներով կատարել են յաջող մի գործ երբ երկրի մէջ և սահմանների վրայ ունէ

խումբ յաջող և մինչև իսկ անյաջող կռիւ է ունեցել, ահա այդպիսի դէպքերով նրանք ոգեւորվել են, և մէկը տասը անելով հրատարակել են «Դրօշակ»ի մէջ, իսկ եթէ չէ եղել այս դէպքերը նըրանք յուսահատուել են և յեղափոխական տրամադրութիւնն էլ դասապարտուելէ մեռելութեան:

Մինչդեռ ռուսական տէրօրիստների մէջ մենք տեսնում էինք համալսարանական տէրօրիստներ, գետնափոր յարկերի մէջ գտնուող տպագրութիւնների գլխուն կանգնած էին բարձր կրթութեան տէր անձնաւորութիւններ, և Մուժիկների մէջ էլ չըջում էին ուսանողները, տարածելով իրենց գաղափարները նրանց մէջ:

Հայ ժողովուրդը յեղափոխութեան ետևից գընում էր գգացմունքներով, իսկ ռուս ժողովուրդը յեղափոխութեան ետևից գընում էր գիտակցութեամբ:

Ինչո՞ւ չբանտարկուեց, ինչո՞ւ չկախուեց, ինչո՞ւ չսպանուեց արտասահմանների մէջ գտնուող բազմաթիւ ղեկավարներից մի քանիսը, այդ ի՞նչ պէս է լինում որ յեղափոխական գործի գլուխ են անցնում և միևնոյն ժամանակ ազատ են մնում անխուսափելի մահից և տանջանքներից:

Դաշնակցական ղեկավարները տարիների ընթացքում, Դաշնակցութեան ղեկը սեփականացնելով հանդերձ, միևնոյն ժամանակ նէմէրտութեամբ հեռու պահեցին իրենց յեղափոխական տանջանքներից և վտանգներից, նրանց այս նախատելի ընթացքը թէ՛ շատ ընկերների յառաջդիմութիւնն է խանգարել և թէ՛ շատերն էլ յուսահատուած և դժգոհ, հեռացել են կազմակերպութիւնից, և թէ

շատ աղէտների էլ պատճառ են դարձել:

Իսկ այժմ Օսմ. Սահմանադրութեան շնորհիւ, Դաշնակցական ղեկավարները երբ հնարաւորութիւն ունեցան կառքերով այցելելու Հայաստանի, և ողջունելու նրա աւերակները, նրանք առանց պատկառելու աղաղակում են աւերակներին— որ մենք բերինք ձեզ ազատութիւնը:

Մինչդեռ նրանք լքուելով և յուսահատուելով տաճկահայ աւերակներից, դաւաճանեցին նրա սըրբազան իրաւունքները, և սկսան շահագործել նրա անունը ուրիշ նպատակի համար:

Դաշնակցական ղեկավարների ստեղծած անբարոյականութիւնը իրենց ևս դատապարտել էր հոգեվարքի, սակայն Օսմ. Սահմանադրութիւնը վըրայ հասնելով կեանք և փրկութիւն տուեց մահամերձ Դաշնակցութեանը, չնայած այս բժշկութեան այնուամենայնիւ նրանք այսօր ևս իրենց սնանկութեամբ բուլիկ ոտքերով կանգնած են Օսմ. Սահմանադրութեան շեմքի վըրայ:

Դաշնակցական ղեկավարների մէջ եթէ մնացել է ճշմարիտ բարոյականի տէր մէկը, որը շէ յիմարացած մեր դէմ առելութեամբ և հակառակուրացած բոստիկ «նախագծի» առթիւ առաջ եկած հակառակութիւնների զարհուրելի հետևանքները, և թող զգան իրենց յանցանքների ծանր պատասխանատուութիւնը, այն ժամանակ միայն կարող են տեսնել իրենց պատճառած ֆլուսների ահաւորութիւնը:

«Նախագծի» առթիւ վատնուած (500,000) հինգ հարիւր հազար ռուբլիները, մարդկային զոհերը, կողմնակի մարդկանց և անչափահասների սպան-

նութիւնները, կախադանները, ուսական բանտերում հարիւրաւոր մարդկանց թշուառութիւնները և ամէնից վերջն էլ, իրենց այնքան սիրելի բնկերոջ, Թօփչեանի մահը:

Եւ այս բոլորի հետեանք համատարած անբարոյականութիւնը, լաց ու կոծը, արտասուներն ու հեկեկանքները: յուսահատութիւնն և լքումը, հայկական կեանքի մէջ կատարուած նենգութիւնները, և օտարների առաջ հայ յեղափոխութեան խայտառակութիւնները:

Ահա՛ այս բոլորը թող հաշուի առնեն եթէ Դաշնակցական զեկավար յորջորջուողների մէջ կայ ճշմարիտ սօցիալիզմի զաղափար ունեցող ազնիւ և բարեխիղճ մէկը:

Վերջ



ՅԱՆՆԱԿՆԵՐ

Տարաբախտ Յաբեթ վարդերեսեանի յուզիչ պատմութենէն ազդուած, այս դէպքերուն մօտէն իրազեկ անձնաւորութիւն մը՝ մեր տրամադրութեան տակ դրաւ Խմբապետ Միհրանի մի քանի նամակներն ու անոր յարակից տեղեկագիր մը, որ շատ տեղ կը լուսաբանէ Յաբեթի յիշած դէպքերն ու պարագաները, հետեաբար այս գործին իբր լըրացուցիչ մասը կը հրատարակենք զանոնք:

Ն Ս Մ Ա Կ Ն Ե Ր

Երեւան, 16 Յունիս 1906

Սիրելի ընկերներ՛ր,

Երէկ ստացայ Ձեր 15 Յունիս թուակիր նամակը, և վերին աստիճանի գոհ մնացի թիֆլիզի մէջ գտնուող մեր ընկերներից, Դուք մեզ գրում էք թէ՛ զինուորական և օթանդակից խմբերը մեզի հետ են միացած ընդդէմ Արեւելեան Պիւրոյի կամարիւյսին, Դա մի ուրախալի լուր է, եթէ Պիւրոն իր կողմից վարձկաններ Ձեր խմբերի մէջ չի սպըռդեցնէ, ու իրենց երկդիմի գիրքով լքման պատճառ չի լինեն. իստա զգուշութիւն է հարկաւոր ձեռք առնել, ու աշխատեցէք ինչքան կարելի է ներքնապէս Ձեր պրօպականդան առաջ տանել ընկերներու մէջ, միւսոյն ժամանակ պարզեցէք նրանց թէ՛ այդ բանակուիւր երկար չի տեւեր, ու թէ կանուխ Ընդհ. Պատգամաւորական ժողովը անհրաժեշտօրէն կը կազմուի ու վերջ մը կը դըրուի այդ խառնաշփոթութիւնների: Ընկերներ, մենք շատ լաւ գիտենք որ մեր շարքերի մէջ դեռ գիտակցութիւն չի մտած, մինչև այսօր որ ամէն տեսակ գոհողութիւններ կատարած են, միմիայն հայրենասիրական ոգին է եղել նրանց դրդող. իսկ եթէ այդ անխիղճ շէֆերը չի սթափուին իրենց կործանարար ընթացքէն, հարիւրին 99 վըստահ եղէք որ Դաշնակցութիւնը մի լաւ խրամասի մէջ պիտի գլորուի, այն դաշնակցութիւնը՝ որ մեր

արեան գնով ու հազարաւոր մարդկանց փճացման պատճառով էր առաջ եկած, այլևս գոյութենէ պիտի դադրի, ի հարկէ թէև ուրիշներ չեն հասկանում թէ մեր մարմնոյ ո՞ր մի մասն է ցաւում, բայց և այնպէս խո՛ մենք լաւ գիտենք, այսքան տարուան տանջանքների ու տառապանքների մէջ ի՞նչ ունենք, եթէ ոչ մի դաշնակցութիւն, այն էլ այս եղաւ երկու տարի, որ ժողովրդի աչքից ինկեր է, մեր փառամոլ և անբարոյական Շէֆերի երեսէն, իսկ մենք թէ ուղղակի և անուղղակի կերպով միշտ սքոշած ենք պահել այդ Շէֆերի անբարոյական ընթացքը և լոյսի պէս ճշմարտութիւնները կեղծել ենք, որպէսզի կարողանայինք պարզ ճակատով ժողովուրդի առաջ դուրս գալու, մենք որ միշտ Հնչակեաններին հալածում էինք, հիմա տեսնում էք, Հնչակեանները և կամ թէ նրանց պրօպականդիստները ինչքա՞ն խոհեմ կերպով են վարւում ժողովրդի հետ, և շնորհիւ մեր Շէֆերի յոխորտանքների Հնչակեաններ օր ըստ օրէ ծաւալ են ստանում, և այսօր Երեւանի, Զանգեզուրի, Ալեքսանդրօպօլի և այլ շրջաններին համարեա տիրում են ու շատ լուրջ պրօպականդա են մղում ժողովրդի խաւերի մէջ ատոր հանդէպ մեր շէֆերը ի՞նչ են անում, կարող եմ ասել ոչինչ, բացի մեծ մեծ խօսելուց: Ես երէկ Ղարսէն և Ալեքսանդրօպօլէն շատ մը նամակներ ստացայ ինչպէս որ իրենց նամակների մէջ կը գրեն մեր ընկերներ, այնտեղ բողոքը աւելի ուժեղ թափով է առաջ գնում. եթէ այդ բողոքող տարրերը ի մի չ'ամ-

փոփենք ու նրանց մէջ գիտակցութիւն չի ներընչենք, անպայման կիյնան Հնչակեանների գիրկը, ուստի ինչքան կարելի է մէկ երկու հեղինակաւոր ընկերների ուղարկեցէք վերոյիշեալ քաղաքներուն այդ կագմալուծման առաջը առնելու համար, եթէ ոչ շատ աղէտալի հետեանքներ կունենայ վերջը: Եւ դուք ձեր նամակին մէջ շեշտած էիք թէ մօտ վեց հազար (*) հոգի կուզեն անջատուիլ Գաշնակ-ցութիւնից իսկ մանրամասնութիւնների մէջ չէիք մտած լուսաբանելու համար, թէ ինչո՞ւ և պատմածառն ի՞նչ է, եթէ իսկապէս նրանք բողոքողներ են, թող մնան չարքերի մէջ և այնպէս բողոքեն, իսկ եթէ բողոքողներ չեն ու դանազան հովերով կ'օրօրուեն, այն ժամանակ աշխատեցէք շուտով առաջն առնել եթէ ոչ խայտառակ կը լինենք հանութեան առաջ, մի խօսքով ամեն ճիգեր թափեցէք որ պառակտում առաջ չի գայ: Ընկերներ, ես շուտով կը մեկնիմ Ալեքսանդրօպօլ և այն տեղից ալ թիֆլիզ, եթէ ողջ մնացինք շատ բաներ ունեմ ասելիքներ Ձեզ, ընկերական սիրալիր բարեկեցութիւններով
 Ձերդ Խմբագրեա
 ՄԻՀՐԱՆ

(*) Ծ. Հր. — Այս և նման թիւեր քիչ մը չափագանցուած կը թուին ըլլալ, կուսակցական մոլեռանդութեամբ:

36 Մայիս, 1906 Երևան Բանտում

ի Թիֆլիզ

Սիրելի ընկերներ՛ր

Խաչօ և Շխալի

Ես երէկ Մարտիրոսից՝ որ եկած էր ինձ տեսնելու բանտում, տեղեկացայ թէ՛ մեր շարքերի մէջ որոշ գիտակցութիւն է մտել, և սկսած են բողոքել Ե. Թօփճեանի ձեռքով թխուած նախագծի դէմ, ինչ որ ուղղակի Արևելեան Պիւրօն իր կազմով, ճիգեր է թափում, բռնազբօսիկ կերպով մեզ կլացնել տալու համար, մինչդեռ այդ չարաբաստիկ նախագիծը, ոչ թէ մեր Տաճկահայկական դատի համար խոչնդոտ է հանդիսանում, այլ նոյնիսկ բոլորովին լքման է ենթարկում Տաճկահայկական դատը, և նամանաւանդ որ այդ նախագիծը ապօրինի ու անհարազատ է: Ինչքան էլ որ Դաշնակցութիւնը ապակեդրոնացման սիստէմն ու գործելակերպը ընդունած լինի, չի կարող այդ ապակեդրոնացումը սկզբունքային տեսակէտով իրաւունք և ոյժ տայ այս կամ այն մարմնոյն որ իրենց խելապատակէն վեր նոր սկզբունքներ ընդգծեն և պարտաւորեցուցիչ անեն Դաշնակցութեան համար:

Դաշնակցութեան սկզբունքն ու գործելակերպը միմիայն կարող է ընդգծել գերագոյն Ընդհ. Պատգամաւորական Ժողովը, լինի նա Ռուսաստան, Տաճկաստան, և թէ Եւրոպա, միևնոյն է, սկզբունքը անխախտ կը մնայ, իսկ տաքտիկան ամէն մարմին իր միջավայրին համաձայն այս կամ այն ուղղութեամբ կարող է փոխել, որովհետև ինչ կար-

գեր որ Ռուսաստանի մէջ է տիրում, ուրիշ երկիրները դրան հակառակ են տեսնում, հէնց այդ պատճառովը տաքտիքան միշտ փոփոխական են լինած, Ուրեմն Թիֆլիզ գումարում Բայօնական Ժողովի իրաւասութենէն շատ վեր էր, իր ընդգրկած օրէնքները պարտադիր անել ընդ որ երկիրների մէջ գտնուած Դաշնակցականներին համար, եթէ ճիշտն ասեմ նոյնիսկ իրաւունք չունէր Ռուսաստանի մէջ գործադրել տալու սոյն օրէնքները, ինչ որ ընդգծուած էր վիրոյիչեալ Ժողովի մէջ, քանի որ այդ Ժողովը ապօրինի էր համարում իր իսկութիւնով, ահա թէ ինչո՞ւ համար. Ա.— Ապօրինի էր համարում, որովհետև կօմիտէներ և ենթակօմիտէներ ձայն չեն տուած և ընտրութիւններին չեն մասնակցած: Բ.— Ապօրինի է համարում որ աւանակցած: Գ.— Ապօրինի գումարելու և ընտրութիւններ կատարելու, պատգամաւորներ ուղարկած են միայն կեդր. կօմիտէի կողմից. այն ալ այնպիսի պատգամաւորներ որ մինչև այսօր իրենց թանձր ռոճիկին են նայելիս եղեր, որ ոչ մի յեղափոխական հոտ կամ նշան անգամ չունին, Արևելեան Պիւրօյի կողմանից մէկ մէկ խոշոր վկաներով ուղարկուած էին որպէս Հարտզատ պատգամաւորներ, Բայօնական Ժողովին մէջ, իրենց գումարներ, Բայօնական Ժողովին մէջ, իրենց չունեցած ազդեցութիւնը ի գործ դնել և Տաճկահայկական դատը բաժանէին Ռուսահայերէն և ըստեղծ էին նոր Ռուսահայկական դատը ու իրենց գործունէութեան թատերաբեմը դարձնէին դէպի Ռուսաստան, մինչդեռ Տաճկահայկական դատը որ

Հազարաւոր անմեղ մարդկանց արիւնով էր նուիրագործուած, թողնել իր անբաղդ ճակատագրական բաղդին, դա ոչ այլ ինչ է նշանակում մեր կողմից եթէ ոչ դաւաճանութիւն և խարդախ ոճրագործութիւն: Գ.— Ապօրինի է համարում որովհետեւ մի ինչ որ Բայօնական ժողովը այն էլ ոչ դաշնակցականների ձեռքով էր գումարուած, այլ միմիայն Հացկատակ Շէֆերի ձեռամբ և Արևելեան Պիւրօյի թեւադրութեամբ էր սարքուած, որպէսզի առաջիկայ Պատ. ժողովին իրենց ազգափնաս ու ազգակործան արարքները կարողանային ծածկել, մինչդեռ հիմակուանից բաց մնաց, ապօրինի և անհարազատ է համարուում կովկասի նախագիծը որ մի շրջանի մէջ գումարուած Պատգ. ժողովի կողմից է հրապարակ նետուել, թողնենք այն որ վելև յիչեցինք որ ոչ մի Պատգամաւոր քուէով որոշուած չէ եղել ու կանգ առնենք մի վայրկեան այն կէտի վրայ որ ուղղակի մեզ առաջնորդող է եղել մինչև հիմա, ինչքան էլ որ այդ ժողով օրինական կանոնների տակ լինի գումարուած, և դարձեալ չէր կարող առանց միւս շրջանների կամ Երկիրների մէջ գտնուող ընկերներին հակառակ որոշում ընդգծել, այդ ժողովի կարողութենէն վեր էր միանգամայն առանց որևէ շրջանի միջի անց ու դարձերին անտեղեակ իր քմահաճոյքին համաձայն սկզբունքներ ընդգծելու, խնդրեմ ասացէք, Բայօնական ժողովին, Պուլկարիայէն, Ամերիկայէն, Պարսկաստանէն և Տաճկաստանէն Պատգամաւորներ եկած էին, ի հարկէ ոչ: Բացի այդ կայ նաև մի ուրիշ գլխաւոր

կէտ թէ՛ ինչու համար կովկասի մէջ եղած ընկերներին ձայնից զրկեցին և դադտագողի ժողով գումարեցին, և շուտ մը հրապարակ նետեցին այդ շարաքաստիկ նախագիծը, հէնց մեր բոլոր խընդիրները այդ տեղ է կայանում: Սիրելի ընկերներ, մոռանում եմ որ Ձեզ մի նամակ եմ գրում և ոչ թէ ճառ, այս բանտի մութ խորքում ինկած ըլլալ չեմ հոգար՝ որքան էլ որ իմ մտատանջութեան առարկան է դարձել այդ ապօրինի ժողովի որոշումները: Ձեր բողոքները շարունակեցէ՛ք, բայց ՄԻՇՏ ԶԳՈՒՇԱՅԷՔ ԶԻ ԼԻՆԻ ՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ, ՆԵՐՔԻՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ ՈՒՐԻՇ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԿԱՄ ԶԷԶՈՒՆԵՐԻ ԱՌԱՋ ՊԱՐԶԷՔ, ԱՇԽԱՏԵՑԷՔ ԶԵԶՈՒՔ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՒ ՈՒՐԻՇ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԱՌԱՋԸ ՄԻՇՏ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԸ ԲԱՐԶՐ ՊԱՂԵԼ ԶԻ ԼԻՆԻ ՈՐ ՏՐՏՈՒՆՁՆԵՐ ՅԱՅՏԵՔ ՇԷՖԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՒՐԻՇՆԵՐԻ ԱՌԱՋ, մինչև որ տեսնենք մեր վերջաւորութիւնը ինչ կը լինի, և ես շատ վստահ եմ որ Ամերիկայի, Պուլկարիայի, Տաճկաստանի և Ռուսաստանի հարազատ դաշնակցականները պիտի աշխատեն ինչ միջոցով էլ լինի շուտով Ընդհ. Պատգամաւորական ժողով գումարել, ահա Ընդհ. Պատգամաւորական ժողով գումարել, ահա այն անց կը մաքրուի այդ բոլոր կնճռոտ խնդիրները ինչ որ մեր մտատանջութեան առարկան է դարձել, յոյս կայ որ շուտով պիտի ազատուիմ բանտէն, նամակները անպակաս արէք: Մնամ ընկերական սիրալիր բարևներով Ձերդ խմբապետ ՄԻՀՐԱՆ

Ալեքսանդրոպօլ 13 Օգոստոս, 1906
ի Թիֆլիզ

Սիրելի ընկերներ՝,

Ստացայ Ձեր օգոստ. 5 թուակիր նամակը որի մէջ շատ լաւ կերպով պարզած էիք Արևելեան Պիւրօյի շահատակութիւնները, Ձեր լուսաբանութիւնները. ինձ հրբէք չի զարմացնում, որովհետև երկար ու ձիգ տարիներու ընթացքում դրանց հետ չփման մէջ լինելով, դոցա թէ ներքին և թէ արտաքին կեանքին հետ լաւ ծանօթացած եմ, ինձ պարզ յայտնի է թէ՛ ի՛նչ ատիճանի անխղճութեամբ կը վարուին կուսակցութեանս պիւտճէի հետ, բացի այդ նաև լաւ գիտեմ որ Դաշնակցութիւնը մի քանի մարդկանց սեփականութիւն է դարձել, հոգ չէ թէ մեզի պէս խըմպընները իրենց անձն ու նիւթականը կը զոհեն, ինչ որ մինչև այսօր սխալ է եղեր, մենք կը զոհենք ոչ թէ Դաշնակցութեան ուժեղացնելու համար, ապա կը զոհէինք սրպէսզի Սուժուկներ, Մանասեանցներ, բըժիշկներ յղփանային իրենց երջանկութեանը մէջ, մինչ մեզի պէս հասարակ մահկանացուների չի տըրուած այլ Արևելեան Պիւրօյի կազմի նման իշխանազունների է յատկացուած: Նաև Ձեր նամակին մէջ շեշտած էիք քառասուն հազար ռուպլի յատկացուած է Ձանկալուք Շանթազայի թերթին, այո՛ շանթազիսթական ասելու իրաւունք ունիմ, որովհետև դուք տակաւին լաւ չէք ուսումնասիրած թէ այդ թերթի ստուերի տակ ինչ ոճիրներ են կատարուում եթէ այդպէս շարունակուելիք

լինի, դեռ ինչեր պիտի տեսնէք. ինչու չէ, քառասուն հազար ռուպլին մի մեծ դումար չէ որ թերթին չի յատկացնէ Արևելեան Պիւրօն, Պիւրօի համար ինչ նշանակութիւն ունի քառասուն հազար ռուպլին: Նրա շատ հո՞գն է որ Տաճկահայ գաղթականները մինչև երեկոյեան աշխատանքի մէջ արիւնքրտինք թափելով հազիւ թէ վաթսուն կոպէկ օրավարձ կ'ստանան, եթէ շատ էլ նեղ մնայ Պիւրօն դարձեալ մի խող կը սարքէ, այսինքն Հայ թաթարական կռիւ կը վերսկսի և այն ժամանակ աւելի մեծ գումարներ կարող է դիզել, իմ հարցս շատ պարզ է չի՞ կարելի է հարցնել, թէ արդեօք Պիւրօին ո՞վ տուաւ այդ քառասուն հազար ռուպլիներ որ կը ծախսէ թերթերին, թատրոններին, կառքերի և պարահանդէսներին մէջը, եթէ ոչ Հայ թաթարական կռիւը ահա ազնիւ յեղափոխականների դէմքեր, բնականաբար փաստերը անպակաս են մեզ մօտ: Հայ թաթարական կռուի ժամանակ զուրում թուրքեր և Հայեր իրար կը յօշոտէին, մեր ընկերներ այդ կռուի թատերարեմում փոխանակ իրենց ազնիւ պարտականութիւնները կատարելու ինչ որ ամէն մի հայու վրայ էր ծանրանում սկսած էին անխտրաբար կողոպուտներ առնել, և կարծեմ թէ՛ դուք ալ ինձի հետ մէկտեղ չպիտի ուրանաք, այնքան պարզ ու արեգական ճառագայթների նման փայլող ճշմարտութիւններ են, մեր իսկացի Պաղտատարը երէկ պատահեցաւ ինձ, ասաց թէ խեղճ Աւագը Նախիջեւանի շրջանից վեց

հազար ոչխար և քառասուն ձիեր կողոպտած է-
ին թէ Հայերու և թէ թուրքերու գիւղերից,
յանձնել է Երևանի կեդրոնական կոմիտէին որ-
պէսզի կոմիտէն ծախէ և ստակները ուղարկէ Արև-
ելեան Պիւրօին, բայց և այնպէս Հիմա Պաղտասար
ասում է որ այդ ծախուած անասունների գումա-
րի կէսը Երևանի կեդր. կոմիտէն իւրացուցեր է,
և այսօր էլ Աւագի օձիքէն են բռնած թէ՛ դուն
պատասխանատու ես, այդ ստակների մասին,
պէտք է որ հաշիւ տաս, ու Աւագէն առանց հար-
ցաքննութիւն առնելու կուզեն տղային ոչնչացնել,
թէ և ունի ինք իր ձեռքին տօքիւմէններ, բայց Ա-
րևելեան Պիւրօյի համար նշանակութիւն չունի այդ
տեսակ տօքիւմէններ մի խօսքով մեր շարքերը
ոչ այլ ինչ են ներկայանում իրականութեան մէջ,
հիմակ ու հիմա եթէ ոչ պարզ աւագակային
կազմակերպութիւն մը: Ընկերնե՛ր որ մէկ ցաւեր
ու վէրքեր ծածկենք, այլևս ժողովուրդ չի հաւա-
տար մեր ատածներին, դարձեալ ուր էլ որ գնանք
մեր անունն է որ կը նսեմանայ: Նաև շատ ուրախ
եմ որ այդ անդ չորս հազար բողոքողներդ Ձեր
առժամեայ ենթակոմիտէն որոշած էք, և կը կա-
ռավարուէք ժամանակաւոր ենթակոմիտէով մինչև
որ տեսնենք Պատգ. ժողովը երբ կը գումարուի

Ընկերական սիրալիւր բարեներով

Ձերդ խմբագիտ

ՄԻՀՐԱՆ



ԲՆՐՈՅՆՊԷՍ ՍՆԸՆԿԵՅՆԾՆԵՐ

Թէ և ինձ չէ հետաքրքրում Գաշնակցութեան
անցեալ կամ ներկայ պատմութիւն, բայց և այն-
պէս այդ կուսակցութեան ղեկ ձեռք առնողների
անցեալը կամ ներկան խիստ շահեկան կը լինի որ
իրենց իսկական գոյներով ներկայացնենք Հայ Ժո-
ղովրդին թէ՛ ովքեր են այդ բարոյապէս սնանկա-
ցածներ և իրականութեան մէջ մեծ տեղ գրաւող
ազգային զանազան կուլտուրական հաստատու-
թիւնների մէջ խայտարդէտ կերպով Հայ կեանքը
փոթորկողներ, բացի այդ նաև ներկայիս իրենց
խայտառակ անցեալով ամբողջ ազգի մը ճակատա-
գրի ուղին են ընդգծում ըստ իրենց Հայեցողու-
թեան: Այդ խմբակ որ ներկայիս ազատական քօղի
տակ է գործում առանց կարմրելու ու արժանա-
պատուութիւն ճանչնալու, իր անցեալով ոչ այլ
ինչ է եղել եթէ ոչ կատարեալ անբարոյական, ոճ-
րագործ դրամաշորթ մի մարմին, փաստենք թէ՛
ինչո՞ւ համար կամ ի՞նչ իրաւունքով այդ ածա-
կաններ անխղճօրէն կը շռայլենք բարոյապէս!!! մա-
կարդակի վրայ կանգնող մարմնոյ մը հասցէին:
Այդ ասելով ասել չեմ ուզի թէ այդ կուսակցու-
թիւնը անցեալում երբէք օգտակար դեր չի խա-
ղացած Հայ իրականութեան մէջ, ոչ, ապա ինչքան
էլ որ անցեալին մէջ 1903ին նա իր գործունէու-
թիւնով որոշ տեղ էր գրաւած, բայց, 1904էն իվեր

բացի վնասից և ոչ մի օգտակարութիւն չի ունեցած իր գործելակերպով ու իր շահագրգռեց, փքուն և ամբարտաւան յոխորտանքներով, ընդհակառակն 1904ից մինչև հիմա ինչքան որ զոհեր են տուած մարտի դաշտում միշտ իրենց մատնութիւններին են կուլ գացած, անարգ թշնամու ճիւղաղային յարձակումներին, ահա թէ ինչս^օ համար, երբոր վաղարշակի խումբը պատրաստուեցաւ երկիր անցնելու, այդ բարոյագէտ անանկացածները որպէս պարծանք՝ ի լուր աշխարհի բեմերի վրայից կոկորդ կը ճղէին հաւատացնելու ժողովրդին թէ տեսէք մեր վաղարշակը 30 ընկերներով 15 օրից յետոյ Բասէնու գծով պիտի երկիր անցնի իր հայրենակիցներուն օգնելու համար, իսկ Բասէն տաճկական սահմանագլուխ լինելով Ղարսէն ոտքով մէկ աւուր ճանապարհ է, և թէ թշնամու պահակներով շրջապատուած է ամբողջ սահմանը, բացի այդ նաև Ղարս քաղաքը լրտեսներով կը վիտար այդ ժամանակներին, մինչև խմբի առաջ շարժիլը ոչ թէ Բասէնի կամ Ղարս-Քիլիսէի պահակներ կը լսէին խմբի երկիր մտնելը, ապա նոյնիսկ Մեծ Մարդասպան, կարմիր Գազան ամեն բան կը հասկնար իր լրտուներին միջոցաւ, թէ մէկ խումբ Փէտայիները Բասէնի գծով սահմանից ներս պիտի խուժեն և ամէն կտրուկ միջոցներ ձեռք կ'առնէր, գաղտնի պահակներով կը շրջապատէր ամբողջ անցքերը, դեռ խումբը հագիւ թէ սահմանը անցած էր լինում, երկրորդ օր անմիջապէս լուր էր տարածուում կովկասի մէջ որ խումբը մի մեծ անյաջողու-

թեան հանդիպելով բոլորն ալ ոչնչացած են: Իսկ արտասահմանեան Դաշն. օսկաններն իրար կ'անցընէին, թէ շուտով երկիր պիտի փրկենք Սասուննոր սիստէմի զէնքեր ենք անցկացրել, ականջ խօսի վաւամբանին, այնքան առաջ գնաց իր ստախօսութիւնների մէջ որ Ամերիկայի բեմերի վրայէն ի լուր աշխարհի յայտարարում էր թէ՛ Հայ յեղ. Դաշնակցութիւնը Ամերիկայից թնդանօթներ և Պուլոմեթրներ անցեալ օր ուղարկեց Սասուն, խեղճ ժողովուրդն ալ Հայրենասիրական ոգիով լեցուած բացի ծափահարելուց իրենց դառն աշխատանքից հաւաքուած տալէրներ ու բուսկիներ առատօրէն կը դնէին Դաշնակցութեան տրամադրութեան տակ: Հայ ժողովրդի հայրենասիրական ոգին այնքան առաջ էր գացած ոչ թէ դրամ եթէ նոյնիսկ պարոն վաւամբան կեանք պահանջելիս լինէր դարձեալ պատրաստ էին զայն նուիրելու այդ հրապարակային մատնութեան փքուն խօսքերին: Բնականաբար Հայ աշխատաւոր դասակարգը ոչ թէ մինչև այսօր իրականութեան է հետեւել, այլ ստախօսութեան, կեղծիքի և խաբեբայութեան ուրուականին է հետեւել, ինչպէս որ դեռ մինչև այսօր զանազան տեսակներով ու հովերի մէջ կ'օրօրուին այդ կեղծասանքների ու հովերի մէջ կ'օրօրուին այդ կեղծաւորների երեսից: Վաղարշակի 30 հոգինոց խումբից միմիայն Մուշի Ալվարինճ գիւղացի Վարդան ազատուեց, այն ալ ծանր կերպով երկու տեղից վերաւորուած լինելով, այդ տագնապալի դրութեան մէջ մոցառուների տակն էր թագնուած և թշնամիներ զինք չէին տեսած, մի քանի օրից յետոյ նա

անցաւ կողմաս, ինք իր բերնով խոստովանում էր որ թշնամիներ մեզանից շուտ էին հասկացած թէ խումբը պիտի մեկնի երկիր, և ողբալիօրէն կը պատմէր որ մատնութիւնը մեզանից է, ուրիշ տեղ փնտռել աւելորդ է, արդէն Վաղարշակ ինք նոյն իսկ տեղեկութիւն շունէր որ խումբով երկիր պիտի անցնէր, բայց սրճարանների մէջ միշտ հարցեր կուղղէին մեզ թէ ե՞րբ պիտի երկիր մեկնինք խումբով, այդ տարօրինակ հարցերը մեզ մի տեսակ անել դրութեան մէջ էին ձգում, և մենք առանց պատասխանելու միշտ լռելեայն կ'անցնինք, ես երբէք չեմ մոռանար, ասաւ Վարդան, տակաւին մեր մեկնելուց երկու օր առաջ մի հացկերոյթ տուեցին մեզ և այդ տեղ բաժակաճառերից վերջ Վաղարշակ ոտքի կանգնաւ և ասաց, «ժամանակը շատ վատ է ինչպէս երևում է, շատ խոչնդոտների պիտի հանդիպինք, մեր փառամուլ, պօռոտախօս շէֆերի երեսից»։ Թող ընթերցող հասկնայ այդ ազնիւ ու անբասիր հերոսի հոգեբանութիւնն։ Վաղարշակի խումբից վերջ, անցաւ Թուման Թումանեանի խումբ Օլթիի գծով, Թումանեանի խումբ տակաւին Պէնկլէմէտ չհասած թէ Ս. Պետրոսպոլսի և թէ Կ. Պոլսի մէջ նստող հրէշներ մէկ ամիս առաջ հասկացած են որ այդ գծով ²³ հոգիների խումբ մը ամսոյ այս ինչին Տաճկաստանի սահմաններից ներս պիտի խուժեն և յառաջխաղացման անցքեր գոցեցին, մի կողմից կարմիր գազանն իսկ միւս կողմից հիւսիսային արջը, երկուսն էլ հայ արեան ծարաւ մոլեգնօրէն յարձակում գործեցին, մի բուռ մարդ-

կանց վրայ, և բոլորովին աննպատակ տեղ նահատակուեցան ամենավայրագօրէն, իսկ ոմանք էլ որ կենդանի մնացին կաշկանդուեցան Ղարսի խոնաւ ու մութ բանտի նկուղների մէջ։ Այդ բարեխիղճ Շէֆեր մի կողմից ի լուր տղխարհի կը յայտարարէին ինչ որ Թումանի խումբի մուտք գործել Տաճկաստանում, իսկ միւս կողմից ալ կը հաւատացնէին հայրենասէրներին որ Ռուս կառավարութիւն մեզ հետ է, չի լինի որ Ռուս զօրքերի վրայ գնդակ արձակէք, ինչքան էլ որ նեղ պայմանների մէջ գըտնուիք։ Միթէ մատնութիւն ու դաւաճանութիւն չէ՞ր իրենց արածը։ Եթէ իրենք գիտէին որ Ռուս սահմանապահ զօրքերը պատրաստուած էին Թումանի խումբը ոչնչացնելու, մեծ ոճրագործութիւն մանի խումբը ոչնչացնելու, մեծ ոճրագործութիւն չէ՞ր այդ Շէֆերի կողմից խաբելով նրանց համոզել թէ Ռուս կառավարութիւն եթէ հասկանայ որ մենք քրիստոնեաներ ենք, կը պատսպարէ ու չի մնաք, որ անդթօրէն զոհ տուեցին 20 հոգի ամենասխիղճ վայրագութիւններով։ Արդեօք որ մէկ նասանխիղճ վայրագութիւններով։ Արդեօք որ մէկ խումբն է որ առանց ոչնչանալուց իր նպատակակէտին հասած է, թող փաստեր խօսին։ Թումանի խումբից յետոյ անցաւ Խանի խումբ, Խանի խումբը տակաւին պատրաստութիւն չ'ունեցած ի պատիւ Խանի խումբին խնջոյքների մէջ հրապարակաւ կը յոխորտային թէ Խանի խումբը կը պատրաստուի մօտ օրէն երկիր անցնելու, Վաղարշակի և Թումամօտ օրէն երկիր անցնելու, դա անելու համար դրենի վրէժը լուծելու համար, դա անելու համար դրամ է հարկաւոր դրամ, խօսքով չի լինի, պէտք է զոհէք՝ անսնում էք Դաշնակցութիւն մարդիկ կը

գրհէ և Ձեր սեփական պարտականութիւնն է մ
գուք էլ Ձեր նիւթականը գոհէք, եթէ ճշմարիտ
հայրենասէրներ էք, մի քանի վայրկեանի մէջ կը
տեսնէինք որ գումարը 10000ներէ էր հասնում,
վերջապէս երկու ամիսից յետոյ ճանապարհ ինկաւ
դէպի Բասէն փոխանակ վրէժ լուծելու, վրէժի
կայծեր աւելի բազմապատկեց, Դաշնակցութեան
Շէֆեր արաքնապէս ողբում էին, իսկ ներքնա-
պէս դորա հակապատկերն էր, ընդհակառակ գուար-
ճանում էին և իրենց ուրախութեան չափ ու սահ-
ման չկար, մեծ խանդավառութեան մէջ էին լի-
նում, այդպիսի վայրկեաններում դարձեալ դրամ
գանձելու ուղին բացուեցաւ իրենց համար, դարձ-
եալ Շէֆերի ծակ գրպանները պարարտացաւ դարձ-
եալ մուրացկանութիւն շահագործում, խեղճ հայ
աշխատաւորների արիւն քրտինքով ձեռք բերուած
կոպէկներով հագարներ դիզուաւ, Արևելեան Պիւ-
րօի անկուշտ կազմի ձեռքի տակ, և թատրոնների
օթեակների ու լօճաների գիները բարձրացաւ, այլ-
ևս թատրոններից դուրս չէին գալիս Պիւրօյի ան-
դամները, մի կողմը սուգ ու շիւան էր տիրում,
իսկ միւս կողմը երջանկութիւն ու խրախճանու-
թիւն, մի կողմը ջահել-ճիւան կտրիճներ իրենց
վերջին արեան կաթիլը չէին խնայում իրենց ցա-
ւասանջ ազգակիցների ազատութեան համար, իսկ
միւս կողմից պարարտացած Շէֆեր պարահանդէս-
ներու մէջ պօլկա էին խաղում դալկահասակ օրի-
որդների հետ գիրկընդխառն, մի կողմ լացի ու հե-
ծեծանքների տակ սովամահ էին լինում ամենա-

դառն կերպով, իսկ միւսը ճոխ սեղանների առաջ
բազմած Սասունի կենացներով բաժակներ իրար են
ջախկացնում և « Լուսին շկար մութ գիշեր էր »
երգում էին նուագախմբով, ահա երկու հակա-
պատկեր մի կուսակցութեան մէջ, երկու ծայրայե-
ղութիւն, երկուսն էլ հայրենասիրութեան համար
միմեանց քով հաւաքուել և համախմբուել, բայց
մէկը անկեղծօրէն մարտի դաշտումն էր ընկնում,
նոյնիսկ մի նեղ հողէ գերեզմանի էլ չէր արժանա-
նում, մինչդեռ միւսը իր կեանքի ամէն մի երջան-
կութիւնը ամենափայլուն տեսակով լրացնում էր
իր մանրամասնութիւններով, Շէֆերի յոյսը մնաց
յայտնի խմբապետ Միհրանը: Հրաւիրեցին Միհրա-
նին Թիֆլիզում և սկսեցին կոկորդիլոսի արցունք-
ներ թափել նրա առաջ, Միհրանը խիստ մտատան-
ջութեան մէջ ընկղմեցաւ, մի քանի վայրկեան տի-
րեց լուսութիւնը, Միհրանը տեղէն յանկարծ վեր
ցատկեց և ձեռքը տարաւ ճակատին շփելով ասաւ
« Ընկերներ, ես շատ եմ զարմանում Ձեր վրայ, ե-
թէ մենք Հայրենիքի համար մեռնող մարդիկներ
չի լինէինք, երբէք յեղափոխական շրջանակի մէջ
մուտ չպիտի գործէինք, սակայն մի բան ինձ շատ
է զարմացնում, այն է թէ՛ ինչօ՞ւ համար անպատ-
ճառ գնամք ի գործ տեղը մեռնենք, բացի մեր
մեռնելը մեզ հետ նաև քար ու քանդ են լինում
հարիւրաւոր գիւղեր, ահա իմ մտատանջութեան
գլխաւոր առարկան, եթէ իսկապէս մենք ցանկա-
նում ենք տաճկահայ կեանքը բարւոքել, պէտք չէ
որ մենք 30—40 խմբեր ուղարկենք Ռուսաստանէն

ծել մեր ժողովուրդի մէջ, ահա ես այն ժամանակ վատահօրէն կարող եմ ասել առիթ գալուն պէս հայ ժողովուրդը ինքզինք կարող է փրկել առանց օգնութիւն խնդրելու և աղերսելու եւրոպական պետութիւններից, չէ՞ որ այսքան խուճաբեր որ այսքան տարուան մէջ երկիր արշաւեցին և աննրպատակ տեղը ոչնչացան, հազիւ թէ հարիւրից երկուս արտասահմանի հայերից լինէին, իսկ քնացեալ 98ը դարձեալ հայաստանցիներն էին: Ուրեմն ինչ հարկ կայ որ Ռուսաստանի մէջ զինուած զաղթականները երկիր մտցնենք, քանի որ այդ առիւծներից հայրենիքի մէջ աւելի շատ կայ, բացի այդ կայ նաև ուրիշ անպատեհութիւններ, այն է, դըրսից գնացած տղաքները փախստականներ են ըստ Սուլթանի Համրտի կարծիքին ու օրէնքին, նրանք իրաւունք չունին երկրի սահմաններից ներս մուտ գործել և մենք էլ շատ լաւ տեղեակ ենք երկրի դրութեան մասին և գիտենք թէ՛ ներկայիս չկայ մի հայ գիւղ որ մի քանի հաս տաճիկ՝ զօրքեր չի լինին: Հեռաւարար մեր մարդիկը երբոր երկիր կը մտնեն, ուղեն չուզեն երկուական հոգի գիւղերի վրայ պիտի բաժանուեն, և այդ բաժանման միջոցին եթէ կառավարութեան զօրքեր իմանային գիւղ արդէն լմեցած կը համարուէր, տուժող ո՞վ էր լինում, բնականաբար դարձեալ Տաճկահայաստանցին, բացի բանտարկութեան նաև կոտորածը իր սահմակեցուցիչ տեսարաններով երկրի մէկ ծայրէն կ'սկսէր մինչև միւս ծայրը: Օրինակ Մշոյ դաշտին մէջ ինչեր չեղան և քանի քանի գիւղեր

մոխրակոյտի չի վերածուեցան, այն էլ գլխաւոր գիւղեր, ինչպէսն է. Բերդալ, Արախ, Տէրգեաւք, Մօկունք, Յրօնք և եթէ թուելու լինենք մի առմի հարիւրից էլ կանցնի, միայն ես կը բաւականանամ Ունան գիւղի բացատրութիւնով, կարծեմ թէ վերոյիշեալ գիւղի մէջ կատարուած բարբարոսութիւնները տակաւին թարմ են մեր սրտերի մէջ, խեղճ գիւղացին տուն, հաց չունի, ինք մերկ, վրան հագուստ չ'ունի, էլ ինչեր չը տեսաւ, թէև Դրօշակի երես զարդարեցինք, Ունան գիւղի փառաւոր ապստամբութիւն և ժողովուրդն էլ այդ պէս համոզուեց, սակայն իրողութիւն այն է որ ձնտօի և Առաքելի անխոհեմ քայլերը կառավարութեան ուշադրութիւն հրաւիրեց, և այդ ձմեռուան սառնամանիքի առկա պաշարեցին ամբողջ գիւղ այդ պաշարման միջոցին մեր քաջ ֆէտայիները անամթաբար թողեցին այդ թշուառ ժողովուրդը գայլերի ոռնոցների մէջ ու փախան Յրօնք գիւղ իրենց կեանք ազատելու համար, անդէն ժողովուրդը շրջապատուած արիւնարբու հրէշներից և հինգ ժամուայ մէջ ամբողջ գիւղը սպանդանոցի վերածուեցաւ, քսան կոյս աղջիկներ բռնաբարուեցան, 60 կիներ առևանգուեցան և տասը հատ երախաներ այդ ահռելի տեսարանէն սարսափելով կ'ապաստանին մեղրա Գետի պաղի վրայ ու քանի մը օրից քնտոյ փնտռելով միայն սառած դիակներնին գըտան. ահա այն ապստամկան ցոյցի շարիքներն է որ մինչև այսօր արձագանգ կտայ: Ո՛չ ընկերներ, այդ տեսակ ազգասիրութիւն, ազգասիրութիւն չէ, այլ

ազգասպանութիւն է, ես չեմ կարող այդ օրինակով երկիր մտնել, որովհետեւ խիղճս ինձ կը տանջէ, եթէ կայ մարդ մը որ իր խիղճը զինք չտանջինա մարդ չէ, այլ կատարեալ հրէշ մ'է: Ընկերներ ես երկու պայմանով կը մտնեմ երկրի մէջ, առաջինն այն է՝ որ գաղանի կերպով ղէնքերու փոխադրութեամբ զբաղիք, երկրորդ կամ թէ սահմանագլուխ հասածին պէս արշաւանքի կ'սկսին, որպէսզի թշնամիներ հասկանան, արշաւանք մղողներ ոչ թէ բնիկներն են, այլ դրսէն եկողներ են, որպէսզի հայ զիւղացիները զոհ չերթան մեր պատրանքների: (Ծափեր):

Միհրանի վերջին խօսքերը աւելի հաճելի թւեց ընկերական ժողովի մէջ գտնուողների ու պատրաստութիւն տեսան. երկրորդ օրը նրան առաջարկեցին որ կաղչուանի գծով Տաճկաստան մտնի արշաւանք մղելու համար, իսկապէս Միհրան իր ըսածին ալ համաձայն գործեց, հէնց առաջի գիշեր կռուի բռնուեցաւ մի կողմից թուրք զօրքերի հետ իսկ միւս կողմից ռուս՝ Միհրանը այդ ճնշող վայրկենին իր խումբը կը բաժնէր երկու մասի և կը հրահանգէ բոլոր ընկերների որ պատասխանեն իրենց գնդակներով թէ տաճիկ և թէ ռուս զօրքերին, այդ ահեղ կռուի մէջ ոմանք կ'իյնան իսկ մնացեալներն ալ գերի ինկան Ռուս սահմանապահ զօրքերի ձեռք որոց մէջն էր նաև խմբապետ Միհրան վիրաւորուած, ձերբակալուածներին երրորդ օր անմիջապէս փոխադրեցին Երեւանի բանտում, վերջապէս անյաջողութիւններ միշտ կը հանդիպէր, որի բուն պատ-

ճառ եղողները հէնց իրենք այդ կուսակցութեան Շէֆերն էին, իրենց պըլըֆներով, փառամոլութիւններով և պոռոտախօսութիւններով, երբ ժողովուրդ տեսաւ գործնականին մէջ անոնք գործ կատարող մարդիկ չեն, մէկ անգամ ընդմիշտ դաշնակցութեան վրայէն իրենց համարումը վերցուցին, և խոստացան այլևս չօգնել այդ կուսակցութեան. այդ օրերը Արևելեան Պիւրօն մի անելանելի դրութեան էր մատնուած. ժողովուրդի անարգանք մի կողմից ու ընկերական բողոքները միւս կողմից, ստիպեցին Դաշնակցութեան Շէֆերին որ վերջ տան իրենց այդ ազգակործան արարքներին, դրամական աղբիւրները ցամաքեց, Շէֆերի ռոճիկները կամաց կամաց սկսեց պակսել, վերջապէս նոր գիւտ մը գտնել պէտք կար, նոր աղբիւր մը ստեղծել հարկաւոր էր. և չանցած մի քանի ամիս վերջապէս գտան այն աղբիւրը, որի ջուրին համար պապական ձէն, այն է Ադամովի տղան Բագուի մէջ տէնօրի տւեցին, և թուրք ամբոխը զինեցին խեղճ ու թշուառ հայ ժողովրդին դէմ, կռիւ ըսկըսեց Շէֆեր մկան ծակերից դուրս չելլելով հանդերձ սպառնալիքների տակ ինքնապաշտպանութեան քօղով ծածկուած միլիոնաւոր ռուսներ ղիզեցին:

Բայց այդ Խատիսեանին Դաշնակցութեան կողմից ուղարկեցին Վարանցով-Դաշկովի մօտ որ ատօնութիւն խնդրէ Դաշնակցութեան համար որ ատօնութիւն խնդրէ Դաշնակցութիւն պատասխանած էր թէ՛ մենք ինչպէս ճանաչենք թէ ատոնք դաշ-

նակցականներ են որ արտօնութիւն տանք, Պ. խատիսեան կը պատասխանէ որ դրանից դիւրին ի՞նչ կայ, նրանք որ դաշնակցականներ են եթէ թոյլ տանք (ընչակ) գինանշան կրելու իրենց կուրծքերի վրայ, արդէն յայտնի կանէ թէ՛ որոնք են դաշնակցականներ, իսկ նրանք որ գինանշան չեն կրեր կարող են նոյնիսկ ձերբակալել, Վարանցով-Դաշկով իր հաճութիւն տուած էր այդ մասին և Պ. խատիսեանը իր խորին շնորհակալութիւն յայտնելով դուրս կելնի Դուարցովի պալատէն, երկրորդ օր կառավարութեան հալածանք սկսուեց Հնչակեանների, Սօցիալ—Դէմօկրատների և չեզոք ժողովուրդի դէմ, իսկ Դաշնակցութիւնը պաշտօնապէս յայտարարում էր Հայ ժողովուրդին, եթէ կուզէք կառավարութեան հալածանքներից ազատուիլ և ձեր գէնքերը կորուստ չ'տալ, պէտք է որ մտնէք Դաշնակցութեան շարքերի մէջ ու պիտի կրէք ձեր կուրծքերի վրայ գինանշան այդ օրինական միջոցներով էր Դաշնակցութիւն իր պրօպականտան մրդում հայ ժողովուրդի գանազան խաւերի մէջ: Այդ տեղից սկսեալ դարձեալ դաշնակցութիւնը իր ինկած վարկը բարձրացրեց ժողովուրդի առաջ, դրամական աղբիւրի ահերը դարձեալ սկսեց հոսիլ առատօրէն, բայց երկուր ժամանակ չի կրցան վայելել այդ իշխանական կեանքը, Շէֆերը իրենց դինովցած դրութեան վայրկեաններուն այլևս կորցրին իրենց շունեցած տաղանդը, ու կամաց կամաց դէպի խորխորատ կառաջնորդուէին, նաև իրենց հետ կը տանէին հայ ժողովուրդին, Հէնց այդ

մոմէնտից սկսեալ դաշնակցութիւնը կատարեալ մի սճրագործութեան և աւագակային բոյն դարձաւ հայ ժողովուրդի ծոցին մէջ, ու սկսեց ինչ որ նուիրական էր ջարդել փշրել քար ու քանդ ընել եթէ իրեն գիմագրող մ'էլ լինէր մատնիչ անուան տակ տեռօրի կ'ենթարկէր, վերջապէս այլևս անտանելի էր դարձել կեանքը կովկասի մեջ, նամանաւանդ կարգ մը մարդկանց համար որոնք որ գիտէին վատ յատկութիւն ունեցողների գործունէութիւնը քրննադատել: Այդ տաղնապալի վայրկեաններուն վըրայ հասաւ նաև Զարգանդի սպանութիւն Ղարսի մէջ, ահագին թշնամայան խրամատ մ'էր բացւած երկու կուսակցութեանց մէջ այդ սպանութեան առթիւ: Զարգանդի ընկերները զայրոյթով լեցուած էին, վրէժառութեան ոգին էր թագաւորում նըրանց վրայ, իսկ ժողովուրդը կ'ողբար քաջասիրտ Հերոսի սարսաղագեցիկ մահուան առթիւ: Հնչակեաններ երկու մասի էին բաժնուած, մի մաս կուզէր որ Զարգանդի վրէժ լուծէր, իսկ միւսը հակառակ էր եղբայրասպանութեան շրջանը ստեղծելու, Հնչակեան Գործ Յանձնախումբը համոզուեցաւ որ չի պիտի կազմողանայ բորբոքուած սրտերը մարեցնելու, դիմում արեցին կեդր. վարչութեան: Կիդրոնական վարչութիւնը մի ներքին շրջաբերականով եղբայրասիրական յորդորներ կուղղէ Մասնաձիւղերին: Դարձեալ անցօր եղաւ բորբոքուած կայծերը մարեցնելու, հագիւ թէ ժողովուրդ մի քիչ հանդիստ շունչ քաշեց, դարձեալ Դաշն. կօմիտէի կողմից տեռօրի ենթարկուեցաւ մի գինուոր

երևանի մէջ, հին վրէժի կայծերը սկսեցին բորբոքուել, Զարգանդի ընկերներ կրակ էին կտրած, Կովկասի Հնչ. Գործ. Մարմինն այլևս անկարելի եղաւ ահաւոր վտանգների առաջն առնելու. Դաշնակց. տղաքները յաղթանակի խրախճանութեան մէջն էին ողողում, իսկ Զարգանդի ընկերները վրէժ լուծելու էին պատրաստում, վտանգ մեծ էր իր բազմակողմանի չարիքներով ու տեսարաններով, Դեռ չանցած մի ամիս Ալեքսանդրապոլի մէջ մոխիրի տակ թաղուած կայծերը բռնկեցան, Զարգանդի ընկերներից Աղճօն և երկուք էլ ուրիշ Թիֆլիսից կը մեկնին Ալեքսանդրապոլ այդ տեւորի հրաման արձակողներին սպանելու մտքով, հասնելուն պէս կռիւը կ'սկսի Դաշնակցականներից կ'սպաննուի 7 հոգի իսկ Հնչակեաններից այդ գնացողները:

Երկու կողմից էլ, այդ միջոցին յուզում սուկալի սուր կերպարանք ստացաւ, փոխանակ այդ յուզումների կամ այդ թշնամութիւնների առաջն առնելու, Հ. Յ. Դաշնակցութեան Ալեքսանդրապոլի Կեդր. Կօմիտէն եկաւ քարիւղ ածելու բորբոքուած սրտերու վրայ իր ապուշ թուուցիկներով որի բովանդակութիւնն հետեւեալն է: «Տաճկահայ դաղթականութիւնն պղտորեց Կովկասահայ մթնոլորտ, որ տեղ որ հանդիպելիս լինէք այդ սրիկայ տաճկահայերին, հալածեցէք, ոչ մի միջոցի առաջ կանգ մի առնէք»: Հէնց այդ թուուցիկի հիման վերայ, Ալեքսանդրապոլի մէջ վայրագ դաշնակցականները յարձակեցան ջարդ ու փշուր արեցին մի քանի տուն գաղթականներին, չորս հատ պատանի-

ներ իրենց վայրագ դաշնակցներով յօշոտեցին և դիակները աղբի տակառների մէջ ածեցին, կուսակցական կռիւը իր դոյն բոլորովին փոխեց, դաղթականները յուսահատուած ամէն կողմերէ հալածանքներ էին կրում: Այդ գործունէութեան հանդէպ տաճկաստանցի դաշնակցականներ սկսեցին բողոքել Արևելեան Պիւրօի հայահալած ընթացքին դէմ, բայց Պիւրօն միշտ լռելեայն կանցկացնէր, հետզհետէ բողոքը սուր կ'երպարանք ստացաւ Տաճկահայերի մէջ, կային նաև ձայնակցողները կովկասահայերից էլ, թուուցիկը ոճիրների և հակառակուածութիւնների արմատն եղաւ, երկու տարբեր երկրացիների և սակայն մէկ ազգի զաւակների մէջ դեռ այդ խայտառակ ու դիտումաւոր թուուցիկի վատ պրովակատորութիւնից չազատուած ժողովուրդ, վրայ հասաւ Կովկասի պատմական արիւնոտ նախագիծը, ոճիրների պակասը լրացնելու համար, երբ այդ խայտառակ անունը հրապարակ իջաւ, իր արիւնաներկ այլանդակ դէմքով հայրենասէր ժողովուրդի հոգեկան աշխարհը ուժգնօրէն ցնցուեց, բողոքողները սկսեցին իրենց շարքերը խտացնել կռուելու համար վիժուած նախագծի չարիքների դէմ:

Այն նախագիծը, որ Արևելեան Պիւրօի կախարհական ոգւոյ և Եղիշէ Թօփչեանի գրչից էր ծրնունդ առած, հազիւ թէ մի քանի ամիս էր անցած նախագծի լոյս աշխարհ գալուց, ինչ որ նըւիրական ու պաշտելի էր հայ ժողովրդի համար, ուզեց քանդել և աւերել և անապատի մը վերա-

ծել, ինչ որ Պիւրօի փափաքն էր արդէն որովհետեւ պարոն նախագծականները իրենց գոյութեան իրաւունքը միայն կը փնտռէին հայ ազգի քայքայման դրութեան մէջ: 1905էն մինչև 1906ը Դաշնակցութեան Շէֆեր յանկարծ կղերական հովեր առան և իրենց քիթերը խոթեցին վանքապատկան ու եկեղեցապատկան կալուածների մէջ, դրան ապացոյց է Ս. Էջմիածնի հողերի և կալուածների խնդիրը, նոյն թուականին էր, Եղիշէ Թոփչեան և իր արքանեակները ուղեցին Էջմիածնի հնադարէ մնացած միակ Ազգ. սեփականութիւն հողերը բաժանել թուրք գիւղերի վրայ, առարկելով թէ վանքը ի՞նչ անէ հող, աւելի լաւ չլինիր որ թուրք գիւղացիները նրանից օգտուին կամ զիւղացիների սեփականութիւն դառնայ, այդ ասելով կուգէին հասկացնել Ռուս կառավարութեան թէ՛ մենք որ մեր չունեցած տեղից կ'տանք, իսկ կառավարութիւն իր միլիոնաւոր տիսիատիներից ինչո՞ւ չի ուզում որ ժողովուրդը օգտուի, բայց Սարգիս Եպիսկոպոս տեսնելով որ այդ խելքի աղքատներ և նըւիրականութիւն պղծողներ կուզեն միակ ազգի սեփականութիւն մնացած կալուածներն ալ ըստ իրենց քահանայքին բաժնել սրանց կամ նրանց, յիշեալ Եպիսկոպոսը դիմեց կառավարութեան և նրա աջակցութիւն խնդրեց, որպէսզի բռնի ուժով վանքէն դուրս վճռուէ այդ ազգադասներին և կառավարութիւնը մտրակների հարուածների տակ սըրբավայրէն դուրս վանեց կղերամիտ դաշնակցական Շէֆերին, երբոր ժողովուրդը լսեց աւելի զայրոյթ

ստոցաւ հանդէպ Դաշնակցութեան, հէնց այդ վայրկեաններից սկսեալ կազմակերպուած դաշնակցական գիւղերը սկսեցին կազմալուծուել, իսկ Դաշնակցութիւն որպէսզի իր վաղեմի իշխանութիւնը կարողանար պահպանել դիմեց ամենահեշտ միջոցին այն էր բռնի ուժով սկսեց տեւորական սարսաղադեցիկ վախի տակ ժողովուրդին խոնարհեցնել իր կամքին, բայց ամբողջ ջանքեր ու ճիգեր ապարդիւն անցան, թէ և բազմաթիւ տեւորներ կատարուեցան բայց այսու ամենայնիւ ժողովուրդը չ'ընկճուեցաւ, և վախի տակ չ'ենթարկուեց, տեւորը հետեւեալ անձերու վրայ կատարուած և յաջող անցած է՝

Ղարսի մէջ՝ Միսաք և Մխիկ, մին Պուլանըիցի իսկ միւս Խնուցի.

Փէրկէթ գիւղի մէջ՝ Մէկ քահանայ.

Թիֆլիսի մէջ՝ Ալեքսանդրապոլցի Լիպօն. Լօրեցի Սանարօն և հայ հարուստներէն յայտնի Դաւիթօվ.

Նուխուայ շրջանի մէջ՝ Երեք մարդ ծառէն կախելէ վերջ խեղդուած դիակները համաղաղրով ծածկած էին: Երևանի մէջ՝ երկուս մին բնիկ իսկ միւսը Ապարանցի, անունն է Օհանէս.

Ալեքսանդրապոլի մէջ՝ մէկ Պուլանիցի Շէխաղուպ գիւղէն.

Քիւրէկ-Տէրէի մէջ՝ Կօփեցի Մօսօն.

Պաթումի մէջ՝ Շուլավէրցի Միսաք.

Նախուայ շրջանի մէջ յիշեալ երեք անցերը ա-

մուսնացած և միևնոյն ժամանակ իւրաքանչիւրը 4—5 զաւակների տէր էին, դրանց մահուան վճիռը տուող Բագուի Կեդր. Կօմիտէն էր իսկ գործադրողը Ալեքսանդրապօլսեցի Նիքօլն էր, Դաշնակցութեան Նախուայ շրջանի շրջուն գործիչ: Երբոր բողոքողներ տեսան Կովկասի մէջ մեծ թիւ կը կադմեն, և չունին իրենց մէջ փորձառու առաջնորդներ, կը դիմեն Խմբապետ Միհրանին և Ղարապաղցի մօրուք Արսէնի, որպէսզի յիշեալներ մի որոշուողութիւն տան իրենց անկերպարան վիճակին իսկ Արսէն և Միհրան այդ հրաւերին արձագանգ տուցին, և եղան բողոքողների առաջնորդողներ: Դաշնակցութիւնը ոչ թէ միայն երկու մասի էր բաժանուած այդ տագնապալի մոմէնտներուն ապա չորս, իւրաքանչիւրը տարբեր տարբեր ուղղութիւնով, որոնք հետեւեալներն են՝

- 1.— Միհրանականներ կը բաղկանային 7000 անձերից
- 2.— Օրինական բողոքողներ 4000 »
- 3.— Ազատականներ » 6000 »
- 4.— Պիւրօյականներ » 2000 »

ԾԱՆՕԹ.— Օրինական բողոքողներ կոչուելուն բուն պատճառ այն էր որ պիտի մնային կազմալուծեալ վիճակի մէջ մինչև 4րդ Ընդհ. Պատգ. ժողովի ելքին, Այոն կամ Ոչը լսելու համար:

Անջատականները կը բողոքէին կատարուած և կատարուելիք ոճիրների դէմ, միևնոյն ժամանակ առարկում էին թէ՛ մեզ համար այլևս նախատինք է մնալ Դաշնակցութեան անուան տակ, վասնզի այդ անուան տակ զեկավարող Շէֆերը այնպիսի

ոճիրներ գործեցին որ նոյնիսկ Կարմիր Գազան մըտքովը չէր անցկացնել այդ տեսակ սխիթմաթիք ոճրագործութիւնները, և գացին միացան Ռուս Սօցիալիստների.



Ալեքսանդրապօլի Կեդր. Կօմիտէն այն դրամաշորթ խմբակն է որ Պաղտատովի տղան առևանգելով 40.000 ռուպլի փրկանք ստացաւ:



Արևելեան Պիւրօն սպառնական միջոցներով 40.000 ռուպլի Դէորգովից շորթելուց յետոյ դիակը Թիֆլիսի փողոցների մէջ թողեցին արիւնթաթախ, նոյն պիւրօն նաև Դաւիթովից 20.000 ռուպլի պահանջած էր, մերժում ստանալուն համար երկրորդ օր Դաշնակցութեան Տեւօրի գնդակների զոհ գընաց, որը իր ետև թողեց մօտ 40 տաճկահայ որբեր զորս իր ծախսով կը պատսպարէր ու կը դաստիարակէր:

Տ. Թ. Հ.

1910 Դեկտ. 25, Թիֆլիզ.



Մ Ի Հ Ր Ա Ն

Ռոստով քաղաքին մօտ, շոգեկառքի վահօնի մը մէջ սպաննուեր է Միհրան եղբայր Յաբեթ վարդերեսեանի՝ որ կարինի մէջ կախաղան հանուեցաւ Եղիշէ Թօփճեանը սպաննած ըլլալուն համար:

(Թերթերը)

Միհրանին գլուխն ալ կերեր են վերջապէ՛ս:

Թրքահայ մամուլին ազգային Թափթփուքներու սիւնակին մէջ քանի մը տողեր այս լուրը կ'արձանագրեն, և բիւրաւոր տարտամ ու անտարբեր նայուածքներ զայն պիտի կարդան ու անցնին, առանց բռնեցուն մէջէն ընդնշմարելու ահաւոր ու արիւնոտ տռամը, որուն վերջաբանը կ'ըլլայ ահա՛ Ռոստովի կայարանին սպանութիւնը:

Երանի՛ անոնց որ այսպէս ու այս չափով միայն պիտի շահագրգռուին Միհրանի սպանութեամբը: Անոնց համար դեռ խորհուրդին քօղերն ու վարագոյրները չեն պատռած ինկած հայկական կեանքի երէկին ու այսօրուան միջև, ու վաղը տակաւին անուշ ու սփոփիչ պատրանքներ վերապահած է անոնց . . . Երանի՛ իրենց:

Բայց ուրիշները կան, անասնական անգիտակցութեան մը ովկիանէն ընկլուզուած նորակոչ շարքերը, որոնց տխուր շնականութեամբ մը «գիտակից» անունը կուտան, և որոնք աչքերնին մեծ մեծ բացած՝ յաղթանակի աւետիսի մը պէս պիտի ծըծեն, պիտի խմեն Միհրանի սպանման լուրը, անով

պահ մը պիտի խանդավառուին, գինովան, Թոթուրտին հեշտագալար:

Տռամին սկզբնաւորութեան և անոր եղբրաշուք երկունքին անտեղեակ՝ այդ աղուոր, կարիճ «տրղերք»ը անխառն զմայլանքով մը պիտի հրճուին արիւնազանգ այս վախճանին հանդէպ, սկանջ տալով խապոտ ու դաժան ձայներու, որոնք պիտի ըսեն իրենց.

— Դաշնակցութեան պատուհասէն մարդ չի՛ վրիպիր, տեսէ՛ք մատնիչը, տեսէ՛ք դաւաճանը, տեսէք ուս գաղտնի ոստիկանութեան վարձկան լրտեսը, որ տարիներէ ի վեր խոյս կուտար մեր անողոք Նեմեսիսին առջևէն, բայց ահա կ'իյնայ շանսատակ . . .

Միհրա՛ն . . .

Պաղ սարսուռի մը պէս չէ՞ այս անունը որ մահուան մէջէն կուգայ ու զօղանջի տխրակայլակ շեշտով մը կը հնչէ բոլոր անոնց որ արտասահմանի հեռաւոր հանգրուաններէն վերադարձած՝ հայրենի հողին տառապագին սահմաններէն անբաժան ժողովուրդին ծոցին մէջ կը լսեն երկու տարիէ ի վեր ամբողջ զգուանքն ու արհաւիրքը իրենց երէկուան տեսածներուն ու ապրածներուն . . . Խոստովանութեան ամօթը, թէ կուտակուած մեղքին խղճի խայթը, որ կը փակէ, կը կղպէ իրենց շրթուները:

Միհրա՛ն . . .

Խորհրդանշակա՛ն անուն, որ կը համադրէ ու կը թելադրէ ամենէն խուժդուժ ժէսթերն ու ամենէն քստմնելի ծամածռումները հայ կայէնութեան:

Միհրա՛ն . . .

Ահնելի՛ ոգեկոչում եղբայրասպան եղեռնին չարաչուք ու շղթայաշար դրուագներու, Դաշնակցութեան, յեղափոխասպա՛ն ալ Դաշնակցութեան պանծացուցած, փառաբանած «Խմբապետ»ը, որ օր մը իր շէֆերուն դէմ ըմբոստացած ըլլալուն համար՝ իրրև դաւադիր, խաչագող, գեղծարար, շան թաժիշտ տէ ո օ ր ի կը դատապարտուի վայրենօրէն հետապնդուած երէի մը պէս կովկասի մէկ ծայրէն միւսը կը քաշկռտուի՝ յատկապէս իրեն համար սպառազէն խումբերու դանակներուն և գընդակներուն առջևէն . . .

Եւ զարհուրելի տուամը կը սկսի, — տենդագին ու ոգեսպառ մարտնչում, սրուն ընթացքին՝ հալածող ու հալածուող յաճախ կը շփոթուին իրարու հետ, և որ վատագոյն դաւերու և հերոսական կռիւներու քստմնելի կուտակում մը կը դառնայ:

Տեղ մը՝ Միհրան իր սիրելագոյն ընկերները վրայ կուտայ, և ինք կրկնապէս խոցուած. հագիւ կը ճողոպրի: Ուրիշ տեղ մը՝ Եալթայի բառքին մէջ, իր տասնևչորս տարեկան քեռորդին, փոքրիկ անմեղուկ Գրիստափորը բզիկ բզիկ կը յօշոտեն՝ գինքը փախուցած ըլլալու դառնութիւնը ամօքելու և անպատճառ իրմէ բան մը սպաննած ըլլալու մոլուցքը կշտացնելու համար: Եւ շատ հեղ ալ ինք կը հարկադրուի զարնել հերուան «Ազատամարտ»ի իր ընկերները, որոնք կուսակցամուկ կիրքերով խելայեղ՝ իբր դահիճ կը ծառանային իրեն դէմ . . . Յետոյ կ'երթայ կը թխմուի Մէտէիսի մութ գրկին մէջ, ինք՝ ազատութեան մարտիկ, բանտին ազա-

տախեղդ պատերուն մէջ իր փրկութիւնը . . . Ու հող, դադար մը, անձկութիւնով, դառնութեամբ կսկիծով ու կատաղութեամբ ակաղճուն լուութիւն մը, զոր դարձեալ կը վրդովեն դուրսէն՝ չի յագեցած վրէժխնդրութեան մոլեգին կանչերն ու իրեն տեղ ինկած, իրեն համար նահատակուած նորանոր զոհերու հռնգիւնները:

Եւ եթէ իրօ՛ք այս հալածական, այս ամէն վայրկեան մութին մէջ դարանակալ դաշոյններու և զնդակներու արհաւիրքէն խելայեղած եղկելին գերագոյն յուսահատութեան մը նուպաներուն մէջ, մարդկօրէն բնական վատութեան մը կը տարուի անձնապաշտպանութեան սիրոյն միայն. և կ'երթայ կը դաշնակցի ոստիկանութեան հետ — ինչպէս իր հալածիչները կ'ըսեն— ո՛րքան արդարութիւն կ'ըլլայ ատոր համար «մատնիչ»ի պիտակ մը կցել իր անունին: Եթէ նոյն իսկ մատնիչ մըն ալ եղած ըլլար այս տարաբաղդ մարդը՝ որ իր հերոսական գործունէութեամբ լաւագոյն բաղդի մը արժանի էր, գոնէ Դաշնակցութիւնը պիտի չի կրնար այդ խարանիչ ածականը նետել անոր ճակտին, — ինք որ երախտաւոր հերոսի մը առջև միայն մատնութեան ճամբան բաց թողած էր: Միհրան՝ մատնիչ Դաշնակցութեան զոհն է նորէն:

Որովհետև, իր անվեհեր քաջութեամբ, իր անձին, իր հանգիստին, իրեններուն կարօտին ու սիրոյն իսկ զոհողութեամբ գերագոյն առաքինութեան բարձրանալ կրցած կտրիճ հերոսի մը համար պըգտիկ տանջանք չէ մինչև ստորնագոյն մատնութիւն իյնալը: Այն օրը որ հերոսէ մը մատնիչ դարձու-

ցած էր Միհրանը, այն օրը արդէն յաղթանակած էր Դաշնակցութիւնը, Բայց ի՛նչ յաղթութիւն . . . :

Ու տուամը կը շարունակուի յամառօրէն անագորոյն ճակատագրականութեամբ, նոր զոհեր կը լանելով, նոր օճախներ քանդելով, նոր արիւն նոր սուգ սփռելով :

Մեռելները նորէն կը թաղուին, կեանքը դարձեալ իր անկարեկիր թաւալումին մէջ, արիւններն ու ողջակէզները կը սիրէ, վիթխարի դէպքեր կուգան կ'անցնին Հայութեան գլխէն, մեր ճամբաներըն ու հորիզոնները կը փոխուին, կը յեղաշրջուին դէպի առաջ քաշկռտուած ատեննիրս ետ դառնալ կ'ստիպուինք, վերջապէս անակնկալ ազատագրութեան մը արշալոյսը կը բացուի՝ գերագոյն մոռացումի և ներողութեան հրաւերով մը գրկաբաց, հայրենի գեհեհին մէջ դահիճներն ու զոհերը կը գիրկընդխառնուին յաւիտենական եղբայրութեան, աննկատ մոռացման երգումներով, բայց Դաշնակցութեան վրէժը — Հայու խմորէ մը — չի՛ մարիր . . .

Տակաւին տարին չանցած, մէկէն ուրիշ անուն մը, արիւնի մէջէն ժայթքելով, նորէն Միհրանը կը յիշեցնէ .

Յարե՛թ . . .

Միհրանն է որ կը շարունակուի Յարեթին մէջ ու չի վերջանար :

Եւ անմիջապէս վերջ ուրիշ անուն մը, որ դարձեալ արիւնի մէջէն կը ժայթքէ, որ դարձեալ Միհրանը կը յիշեցնէ .

Թօփճեա՛ն . . .

Միշտ նոյն ահաւոր տուամը, միշտ նոյն անքուն

վրիժառութիւնը որ խղճի ամէն զգացումէ պարպուած միւլնոյն շիւ դատաւորներուն հետ Մայր Երկիր կը փոխադրուի: Յարեթը զոր կուզեն զարնել, քիչ մը Միհրանն է որ անպատճառ պէտք է իյնայ, պէտք է տախտապարի: Բայց Յարեթ չ'իյնար. քաջամարտիկ և անվախ հերոս՝ որ հէքեաթունակ սարսափ մը սփռած էր դժուարին ու անհաւասար մարտնչումներու ընթացքին, որ հարիւր հոգիի եռանդով, հարիւր հոգիի անձնագոհութեամբ նուիրուած էր հայ ազատագրութեան դատին, ինք իր ձեռքով կը մաքրէ ո՛չ այնքան իր սեփական արիւնին, որքան անմեղ ու անգիտակ Քրիստափորին, այդ մանկատի նահատակին արիւնին հաշիւը :

Եւ այն Դաշնակցութիւնը որ Միհրանը նշաւակութեան սիւնին գամած էր անձնապաշտպանութեան սիրոյն ոստիկանութեան ձեռք մեկնած ըլլալուն համար, ինք իսկ կը նոյնանայ ոստիկանութեան հետ, անոր կը խառնուի, անոր կ'առաջնորդէ, առասպելային հետապնդման մը մէջ, գիւղէ գիւղ, սարէ սար, թաւուտքէ թաւուտք հալածելով ու վերջապէս ճիրանելով դժնդակ ճակատագրի մը այդ դժբաղդ լծկանը, զոր բռնարար եղբայրասպան մը ըրած էին, ինչպէս մատնիչ մը ըրած էին Միհրանը, և անկէ առաջ ալ Դաւօն . . .

Յարե՛թ . . .

Ոճրագար կուսակցութեան ի՛նչ տխուր ու մորմոքիչ դրուագներ կը բերէ մեր միտքը այն անունը: Ռուսական կախաղաններու արհաւիրքին դէմ ծառացող Դաշնակցութիւնը, որ իր ձեռքով ոճրագործ դարձած հայ հերոսը նորէն իր ձեռքով կա-

խաղան կը հանէ . արիւնի խրախճանքը զոր կոյր՝
միայն գործուած ոճիրը տեսնող և անոր ծնունդ
տուող զարհուրագին պայմաններուն անգիտակ տը-
ղերքը կը սարքեն վրիժառու թեան այդ մահահոտ
սիւնին առջև դիւային պարը՝ զոր յափրացած ատե-
լութիւնը՝ օճի պէս պաղ ու թունալից՝ կը բոլորէ
այդ ամօթալի բազինին շուրջը . և վերջապէս չի
լսուած , չըլլալիք վատութիւնը որ այդ անանուն
արդարութեան պատրուակին դիակը կը քաշքէ
աղբակոյտներու մէջ , բորենիի մեռելատենչ ախոր-
ժակով մը , և տիղմի ու կղկղանքի մէջ կը թաղէ
մարմին մը՝ որ բազմիցս դիւցազնօրէն արժանի
դարձած էր արտասուլթուրի ծաղիկներով սղոզուն
դազաղի մը մէջ ազգովին ուսամբարձ տարուելու :
Եւ հիմա վերջին արարուածը , կամ աւելի ճիշ-
դը՝ նոր արարուած մըն ալ ,

— Միհրա՛նը . . .

Որովհետեւ ոչինչ կը յուսադրէ թէ իրենց ամ-
բողջ շարքերուն մէջ համատարած , և անդադար ,
ոգեին , հեւասպառօրէն հրահրուած եղբայրաս-
պանութեան մոլուցքը՝ իր բովանդակ թոյնը թա-
փած , հատուցած է Ռոստովի կայարանին մէջ , Միհ-
րանի կուրծքը ծակող գնդակին հետ : Յարեթ Իգ-
միրը ունեցաւ իրեն յաջորդ , Իգմիր՝ Վանը , Վանէն
վերջ Միհրանն է , և Միհրանէն վերջ . . . անդունդական
վաղը , քստմնելի զարհուրագին , սպառնալից . . .
Ահա թէ ի՞նչ կ'ըսէ Միհրանին հեռաւոր դի-
ակը . . .

Ս. ՊԱՐԹԵՒԵԱՆ
Ա. ԱՆՏՈՆԵԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0196419

32.